

*համարի քանաստեղծությունը*

### ՀԱՅԱՍՏԱՆ

Դու իմ հետադարձ հասցեն ես միակ  
Եվ իմ եզակի ճակատագիրը,  
Իմ բաց երգերը, իմ վերքերը փակ,  
Իմ հիշատակաց միակ Երկիրը...  
Անկրկնակոշիկ Համապատմության  
Սայթաբումները մեզ աղավաղել  
Եվ թաց երգերս փակ վերքերիս մեջ  
Սատանայաբար փորձել են թաղել:  
Որպեսզի դառնամ թափառող ծրար՝  
Չունենամ նույնիսկ հետադարձ հասցե,  
Բայց մենք վերստին փարվել ենք իրար  
Ու հուսաբանել՝ Տեր մի՛ արասցե...  
Դու իմ հետադարձ հասցեն ես միակ,  
Իմ անկրկնելի ճակատագիրը,  
Իմ բաց երգերը, իմ վերքերը փակ,  
Իմ հիշատակաց միակ Երկիրը:

**Հրայր ԱՐՐՈՒՄԱՆ**

Գեղarm-58. 2016  
Գրական-գեղարվեստական,  
թարգմանական հանդես  
Հրատարակիչ՝  
«ՈԳԻ-ՆԱԻՐԻ»  
գեղարվեստի կենտրոն  
Հրատարակվում է 2002 թվից

Հասցեն՝ ԼՂՀ, 375000  
Ստեփանակերտ,  
Վ. Սարգսյան 25

Էլեկտրոնային հասցեն՝  
gekhard@yandex.ru  
hrantalex@rambler.ru  
Հեռ. +37497-252323

Տպագրվում է  
«Դիզակ-պլուս» ՍՊԸ-ում

Խմբագիր՝  
Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գեղarm-58.2016  
Literary-Feature  
translating periodical  
The publisher:  
«VOKI-NAIRI»  
art centre  
Published in 2002

Address: 25 V. Sarkisian str.  
Stepanakert, 375000, NKR  
E-mail: gekhard@yandex.ru  
hrantalex@rambler.ru  
Tel: +37497-252323

Editor:  
Hrant ALEXANYAN

## Գեղarm Առն 2016

### Հ Ա Մ Ա Ր Ի Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

«Գեղarm»-ի մատենաշար.....	3
Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. Բանաստեղծություններ.....	5
Գրադարակ.....	11,28
Արամ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ. Տասի ջոկատը.....	12
Աննա ԱԽՄԱՏՈՎԱ. Բանաստեղծություններ.....	24
ՏԵՖՖԻ. Կյանքն ու օձիքը.....	30
Խճանկար.....	33,65,77,87
Իծյե ԹԱՆ. Մարդու հարաբերությունները.....	34
Իգոր ԿԼԵԽ. Օտարների մեջ ոչ ինքնիրենը.....	50
Դիկոռոսների կնքահայրը՝ Յուրի ԲԵԼԻԿՈՎ. Բանաստեղծություններ.....	56
Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. Ընթերակա ու դաշնակից և ոչ մրցակից.....	66
Literary translations. Hrachya BEYLERYAN. Poems.....	70
Վան ՀՈՒԻ ՄԻՆ. Երկու անջնջելի հուշ.....	74
Գրիգոր ՖԵՐԵՇԵԹՅԱՆ. Մանրապատումներ.....	78
Վեսիլին ՊԱՎԼՈՎ. Յոհանի սերբական սիրտը.....	82
Հասմիկ ՎԱՆՑՅԱՆ. Սարոյանն ընդդեմ Հեմինգուեյի.....	88
Սյուն ՇԻ-Ի. Երկնային կամուրջը.....	91
Վահրամ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ. Ինչու պետք է Բոբ Դիլանը Նոբելյան մրցանակ ստանա, իսկ Մուրակամին՝ ոչ.....	99

Կազմին եւ համարում՝ Կայծ ՎԱՆԻԿՅԱՆԻ  
ստեղծագործությունների արտապատկերները

Գեղarm-ի

մատենաշարով

լույս են տեսել

**Ռուս մինիմալիստներ:  
Քանաստեղծությունների անթոլոգիա:  
Թարգմ. ռուսերենից՝ Հրանտ Ալեքսանյանի:  
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2016, 328 էջ:**


Կարճ՝ մինիմալիստական քանաստեղծությունն իր այցեքարտային նշանակությունն է ձեռք բերել ժամանակակից ռուսական պոեզիայի ավանգարդիստական ուղղությունում: Անթոլոգիայում ընդգրկված են 21 հեղինակներ, որոնք առավելս են զարգացրել պոետական մինիմալիզմը՝ հասցնելով այն «հսկա թզուկի» գեղարվեստական մակարդակի: Նրանց մեծ մասը առաջին անգամ է ներկայանում հայ ընթերցողներին:




**Իձյե ԹԱՆ: «Կոնֆուցիականությունը,  
բուդդայականությունը, դաոսիզմը,  
քրիստոնեությունը և չինական մշակույթը»:  
Թարգմ. անգլերենից՝ Աստղիկ Աթաբեկյանի:  
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2016թ., 360 էջ:**

Չին անվանի գիտնական Իձյե Թանը «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դաոսիզմը, քրիստոնեությունը և չինական մշակույթը» խորագրով իր նշանավոր գրքում համակողմանի եւ խորը վերլուծության է ենթարկում կրոնա-մշակութային բոլոր այն հոսանքները, որոնք երկար դարեր ի վեր, առ օրս առանձին-առանձին, թե փոխկապակցված ձեւով ազդեցիկ ու կողմնորոշիչ դերակատարություն ունեն չինական եւ նրան հարակից որոշ տարածաշրջանների մեծաքանակ ժողովուրդների կյանքում:

Հայ ընթերցողը հիանալի առիթ ունի՝ չափազանց հարուստ տեղեկատվություն եւ համարժեք մեկնություններ ստանալու մարդկային պատմության մեծագույն ուսմունքների մասին:



## Գեղarm Առն 2016



**Անդրեյ ԲԵԼԻ. «Պետերբուրգ»:** Վեպ:  
**Թարգմ. ռուսերենից՝ Վարդան Ֆերեշեթյանի:**  
**Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2016, 568 էջ:**

Ռուս մեծանուն գրող Անդրեյ Բելիի «Պետերբուրգ» վեպը ժամանակին լայնորեն ճանաչվել է որպես ռուսական սիմվոլիստական եւ մոդեռնիստական արձակի գազաթնակետ եւ համեմատվել Ջ.Ջոյսի հանրահայտ «Ուլիսեսը» վեպի հետ /Վ.Նաբոկով/:

«Պետերբուրգը» հյուսված է ինքնակենսագրական մոտիվներով, որտեղ խաղարկվում են բազմաթիվ գրական տեքստեր՝ Դոստոևսկու «Դեերից» մինչեւ Էդգար


Պոյի «Կարմիր մահվան դիմակը»: Վեպում որպես առանցքային կերպար է ներմուծված Պոլնոճե հեծյալը: Ա. Բելին սույն վեպի ծնունդը շաղկապել է Եգիպտոս կատարած իր ուղևորության հետ:



**Սյուն ՇԻ-Ի. «Երկնային կամուրջը»:** Վեպ:  
**Թարգմ. անգլերենից՝ Խորեն Գասպարյանի:**  
**Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2016, 358 էջ:**

Չին արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ Սյուն Շի-ին իր հանրահայտ «Երկնային կամուրջը» վեպը գրել է անգլերեն, 1943 թվականին, չինարեն է թարգմանվել տասը տարի անց: Բարեփոխական շարժման, Սին-հայական հեղափոխության եւ հանրապետության պատմությունը վեպում ներկայացվում է մեկ ընտանիքի կյանքի ընթացքով եւ նրա աչքերով: Էպիքականու-

թյունն ու վառ գեղարվեստականությունը գրքի այն գլխավոր արժանիքներն են, որոնք կգրավեն նաեւ հայ ընթերցողի ուշադրությունը:



**«Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ»:** Հատոր 2:  
**Թարգ. անգլերենից՝ Աստղիկ Աթաբեկյան:**  
**Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2016, 116 էջ:**

Հայ ընթերցողներին է ներկայացվում չինական միտքն ու մշակույթը հատկանշող հիմնական հասկացությունների հնգհատորյա հանրագիտարանի երկրորդ գիրքը:

Այն աննախադեպ ու բազմաձևավալ մի աշխատություն է, որ հետաքրքիր ու օգտակար կարող է լինել ոչ միայն փորձագետների եւ «Երկնատակի» երկրի սիրահարների համար, այլեւ կգրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են իրենց համար բացահայտել չինական ժառանգության նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**«ՈՍԿՐԵ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ»**  
**ԱՆՏԻՊ ԺՈՂՈՎԱԾՈՒԻՑ**



**ԱՆՏԵՎ ԺԱՄԱՆԱԿ**

Ոսկեցոլ ժամը հուշածրարել և  
դնել հիշողության անկիզելի պահոցում  
որպես անձեռնմխելի պահուստ  
այլես անմատչելի  
գերհմուտ կողոպտիչների ու գանձախույզների համար  
որպես հավերժի ձուլածո կտոր  
իբրև հոգեզմայլ անտես ժամանակ  
որ կյանքի անցողիկությունը  
համատեղում է գիսաստղի անկանգ թռիչքի հետ

18.02.2016

**ՈՍԿՐԵ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ**

Մի փակիր ունկերդ -  
ինչ որ չհասցրին անել երկրի վրա,  
հապճեպ լրացնում են երկնի խցերում,-  
լսում են ոսկորների ճարճատյունը փշրվող-աղացվող  
ոսկորների,  
դրանք այլես անխնա ծածկում են  
վերերկրային ձգվող պարապները:-

Հիմա դու քայլում ես ոսկրե երկնքի տակ  
եւ գիտես՝ մաղվողը նաեւ ոսկրափոշին է  
ձյան անմեղսունակ փաթիլների հետ, գիտես՝  
չարչարանքը համամասնական կարգ է  
տարածության յուրաքանչյուր թիզի համար,  
եւ նույն արյունն է անխուսափ կաթում  
Ժամանակի բոլոր խորշերի մեջ...

19.02.2016

## Գեղarm Առն 2016

### ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ-1

Ասում եմ՝  
վախճանաբանությունը մարող առասպել է,  
այն հորինել են հանուն կայունության ու խաղաղության.-  
սպառնալիքով սաստել կամեցան ըմբոստներին ու  
մեղավորներին,  
իսկ նրանք կրկնակի ցասկոտ, մեղապարտ, կամայական  
դարձան,-  
անդադար հնչող սպառնալիքը ոչինչ է անգամ մեռած  
սյուքի մոտ:

Ասում եմ՝  
վերջ չի լինելու,  
ոչ մի մեղք ու ոճիր չի կանխատեսում վախճանական  
աշխարհ  
/իսկ բարի հոգին որտե՞ղ պիտի իրեն կենսագործի/,  
Ասածո հիմնած կարգերն այսպես գոյելու են  
հուր-հավիտյան՝  
անվերջության ահով իսպառ պարուրելով ամեն  
նյութ ու հուզում,  
եւ դա կայացված միակ ամենախիստ դատավճիռն է,  
որ ստորագրվել է ի սկզբանե...  
19.02.2016

### ՄԻ ԵՐԿՈՒ ԺԱՄՈՎ ԶԱՏԻԿ ԼԻՆԵԼ

Զատիկը, որ շարժվում է ցուցամատս ի վեր,  
իր հասկանալի զատիկերենով ակնարկում է ինձ,  
որ ես անքակտելի կապված եմ կարմրին ու սեւությանը,  
ամուր շողկապված եմ երգող խավարին, առավոտների  
նստանի հետ,  
շնչում է, իբր, իմ կապերն այնքան բյուր ու տարածել են  
միջատների ու թռչունների  
եւ առավելս բույս ու կենդանաց աշխարհների հետ,  
որ ի գորու եմ ծառայել նրանց որպես հուսալի  
օթեան ու նեցուկ,  
ավելին՝ իբր ցանկալի գրավ կարող եմ լինել  
նրանց ճարահատ փոխառությունների ու  
ակամա գործած զանցանքների դիմաց,  
միայն թե պետք է՝ փոխեմ քմահաճ մտքերս նրանց  
էության, համբավի ու դերի մասին  
եւ տարվա մեջ գոնե մի երկու ժամով հարկ է զատիկ լինել  
եւ անվախ շրջել կյանքի ցուցամատին:  
20.02.2016

## Գեղarm Առև 2016

\*\*\*

Օրը պղծում է անբիծներին ու պուրիտաններին՝  
աղտոտ-թունալից ծովի ձեռագրով,-  
բայց չես կարող փակվել մաքուր առավոտվա շրջանակի մեջ,  
ուզում ես ապրել, իմա՝  
շարժվել առաջ օրվա թթվաշունչ ավերախությամբ՝  
հանց կույր ոսկեխույզ,  
թեկուզ հատուցումը՝ ապականում ու այլասերում է միանշանակ,  
թեկուզ չես գտնում ջինջ երջանկության մարգարտահատիկներ  
պղտոր ջրերում,-

բայց ժպտում ես մեկ-մեկ, քանի դեռ հույսը քեզ չի լքել ընդմիջտ,  
ժպտում ես, սակայն, հանքահորից ելած մրոտ ածխահատի սեւ ժպիտով:  
23.03.2016

### ԻՆՔՆԱՊԱՍՏՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինձ հունից մի հանիր, սեր իմ,  
արեւ կղառնամ ամռան, կկիզեմ հոգիդ քմահաճ:

Ինձ հունից մի հանիր, երագ,  
քո անքուն գիշերը կղառնամ՝ բժժանքով եւ հույժ իրական:

Ինձ հունից մի հանիր, քամի,  
սեւ խոռոչ կղառնամ ու քեզ կքաշեմ, կխեղդեմ այնտեղ:

Ինձ հունից մի հանիր, հեղեղ,  
Սահարա կղառնամ ու քեզ կկլեմ ցվերջին կաթիլդ:

Ինձ հունից մի հանիր, կախարդ,  
մարգարե կղառնամ ու քեզ ճշմարիտ խոսքի մեջ կխաչեմ:

Ինձ հունից մի հանիր, ոսոխ,  
համազարկ կղառնամ եւ քեզ ցեղովդ կջնջեմ անհետ:

Ինձ հունից մի հանիր, խավար...

06.04.2016

## Գեղarm Աշուն 2016

### ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՏՈՆԱՎԱՃԱՌ

*/արդի ֆանտաստիկայի ուղեցույց/*

.....

-Գլոբալ տաքացման դեմ պայքարելուց առաջ  
կանխել մարդկության սրտում ահագնացող գլոբալ սառեցումը:

-Մարդուն հիմնարմատ գրկել նմանին  
բնաջնջելու խելահեղ կրքից՝ նոր մանրէներով,  
որ միաժամանակ զորացնեն նրա ստեղծարար ոգին:

-Օղը վարակել մի նոր անուշ բույրով,  
որ սնուցի սովյալ ամբոխներին եւ զերծ պահի նրանց  
մահացու քաղցից՝ մինչեւ քարոթության երանելի օրեր:

-Հավաքել, կարգի բերել, մաքրել Երկիրը  
աղբից, թշնամանքից, համաճարակներից,-  
շուտով, հավանաբար, հյուրեր կայցելեն մոտիկ աստղերից,  
թող Երկրի տեսքն ու վարքը մարդկանց  
անկեղծորեն գերի ամեն եկվորի:

-Ներքին եթերային կապով միակցել ողջ ապրողներին,  
որ երբ վտանգվի մեկի ազատությունը,  
վտանգված զգան միլիարդավոր այլոք...

-Հրաժարվել կրոններից ու ինքնաբուխ պաշտել Լույսը զվարթ,  
որ հավասարապես սփոփում է ամեն շնչավորի:

-Արարատյան երկրում կառուցել Լույսի տաճար միջազգային՝  
բյուրեղապակուց ու ծաղկացողունների ամուր բրիկետից:

-Հայաստան երկրի խաղաղության համար  
նրա սահմաններով ձգել լազերատիպ մի թափանցիկ պատնեշ,  
որ կտապալի չար մտքով նրան մոտեցողներին:

-Ստեղծել «բազմաչք» ու «բազմուղեղ» գաջեթ,  
որ կբացահայտի համաշխարհի ծպտված դավադիրներին  
եւ կչեզոքացնի նրանց էլեկտրաշոկով:

-Հրաշք խայտաբղետությունը մարդկանց ու աշխարհի  
պայծառացնել անտեսանելի հզոր լապտերներով,  
որ օդապարիկի կամ արբանյակի նման պիտի առկախվեն



## Գեղarm Աշուն 2016

երկրագնդից վեր:

-Ստեղծել գերզգայուն ու ամենատես մի սարքավորում,  
որ կհայտնաբերի բնական ու տեխնաժին աղետների մութ ակունքները  
եւ ժամանակին կարգելափակի դրանց բռնկումը:

-Մարդուն օժտել այն հնար-հատկությամբ, որ ցանկացած լեզու  
նա հասկանա ճիշտ եւ ամեն մի լեզվով  
կյանքի գեղեցկությունը ներբողելու կամքն ու պարտքն ունենա:

-Ձայնագրել գազանի մեջ մուտացող ողբը  
եւ վերձանել այն ըստ մարդկային ցեղի դժբախտության:

-Հրաժարվել հավերժական մեքենայի իդճից,-  
հավերժության համար վատնվող միտքը սին  
խոցում է ներկայի զգայուն հոգին,-  
ստեղծել նորատիպ ալեհավաք-սարք,  
որ կորսա բոլոր չքնաղ երազները մարդկանց ու Երկրի  
եւ ցույց կտա դրանք երկնի էկրանին:

-Թիթեռից պարգել, թե հավերժությունը ինչ գաղտնագրով է  
ներփակվում մեկ օրվա ելուէջի մեջ:

.....  
06.05.2016

### **ՋՐԱՍՈՒՅՁՆԵՐԻ ՍԱՐԳԱՐԻՏԸ**

Ոստրեն մի երկու ավազահատիկով  
մարգարիտ է ստեղծում ծովի հատակին -  
պարզ շարժումներով,  
իր հաճույքի համար,  
գուցե՝ տաղտուկից:-

...Եվ շարունակում են ջրասույգ լինել  
ծովի հատակին,  
մարգարտի համար –  
ի՛նչ հնարքներով, պարագաներով  
զինավառ անխոնջ գանձախույզները:

28.09.2016

## Գեղarm Աշուն 2016

### ՇՆԵՐԻ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*/Երեւան-Գորիս մայրուղու վրա/*

...Տեսարանները ստեպ-ստեպ ընդմիջվում են  
նույնատիպ ցավոտ պատկերներով -  
սպանված, ջնջխված շներ են ընկած մայրուղու եզրերին՝  
ասես նոր համաճարակի ախտանշաններ,  
բայց դեռ հայտնի չէ՝ որտե՞ղ են ծագում մահ-մանրէները,  
մարդու մտքի մե՞ջ, թե՞ տիեզերքի մեռնող մի աստղում...

Հավանաբար շներին անխնա սպանել են  
պացող անհոգի ավտոմեքենաները՝ ճզմելով նրանց  
անիվների տակ, երբ նրանք փորձել են հատել ճանապարհը:  
Հավանաբար:- Մինչդեռ ինձ այրում է միտքը,  
որ շները դիմել են ինքնասպանության՝  
նետվելով անկանգ ավտոների տակ:-

Հավանաբար նրանք հանկարծ հասկացել են,  
որ մարդիկ ազատ ապրում են անշուն, իսկ իրենք չունեն  
ոչ մի հսկանյութ պոչի պես կպած մեմոթյան դեմ...

*15.09.2016*


### ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՅՈԹՄԻՐՏ ԼՈՒՄՆԻ ԵՐԱԶԸ

Երբ աշունը հիշում է անցյալը իր,  
մշուշվում է նրա դեմքը արվան,  
եւ անձրեւներ են տեղում հուզառատ,  
եւ մանուկներն են խաղն ընդհատում,  
ապա երեկոն ծվարում է անխոս  
ժամանակի սեւկար թիկնոցի տակ:-

Բայց դու մի հանձնվիր քո անկապ թախծին,  
դու աշնան գավակը չես  
եւ ոչ պահապանը նրա գաղտնիքի,  
մի երկու բառ անգամ չես փոխանակել  
հոկտեմբերի յոթսիրտ լիալուսնի հետ,-  
պարզապես աշունը մի ջինջ հայելի է,  
ուր արտացոլվում է եւ անտեսանելին:-

Ո՞վ ասաց, թե դու Լումնի մուրազը չես...

*11.10.2016*



**Մուշեղ ԻՇԽԱՆ: «ԼՈՒԽԵՂԵՆ ՏՐՏՍՈՒԹՅՈՒՆ»:  
Բանաստեղծությունների ընտրանի:  
Երևան, «Գրաբեր» հր., 2014, 160 էջ:**

Մուշեղ Իշխանի (ճեմտերեճեան, 1914-1990) ժողովածուն ծաղկաքաղ է սփյուռքահայ անվանի բանաստեղծի տարբեր ժողովածուներից: Գիրքը հրատարակության է պատրաստել և առաջաբանը գրել Արթուր Անդրանիկյանը:



**Խորեն ԱՐԱՄՈՒԽԻ. «ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2)»:  
Երեւան, «ԱՅԱ Պոլիգրաֆ» հր., 2016 թ., 200 էջ:**

Գրքում զետեղված են ամերիկահայ գրողի 6 նոր թատերախաղերը, որոնց մի մասն արդեն բեմադրվել է հայկական տարբեր թատերախմբերի կողմից: Հեղինակն իր գործերում արծարծում է մարդկային, ազգային ու համամարդկային թեմաներ:




**Էդուարդ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ. «ՀԻՆԳ ԳԻՐՔ»:  
Բանաստեղծություններ:  
Լոս-Անջելես, Այբ-Բեն հր., 2015 թ., 248 էջ:**

Ժողովածուում ամփոփված են բանաստեղծ և թարգմանիչ՝ Էդ. Հախվերդյանի հրատարակած 5 գրքերը, այդ թվում՝ նրա վերջին՝ «Spin» վերնագրով գիրքը, որը նույնպես լույս է տեսել անցյալ տարի, Լոս-Անջելեսում:

**Արամ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

**ՏԱՍԻ ՉՈԿԱՏԸ**



Չեմ հավատում այն մարդկանց, խոսքս մեծամասամբ վերաբերում է հայտնիներին, որոնք փառունակ ինտերվյուների ժամանակ, լրագրողի հարցին՝ կեղծ, ինքնաբավ ասում են՝ եթե կյանքս նորից սկսեի՝ ոչինչ չէի փոխի: Չեմ հավատում, ինչքան էլ Շառլ Ազնաւուր լինեն, Բոր Դիլան, կամ՝ սքանչելի Ռաբել Վելչ: Մա եթե մեծախոսություն է՝ ներողություն եմ խնդրում, բայց ուզում եմ մնալ իմ զգացմանը:

Յավերի միջով բոլորն են անցնում, ինձանից հարցնեք, մարդկանց մի մասը բախտավոր է, մյուսը՝ դժբախտ, չարքաշ, բայց բոլորին ճակատագիրը մի հունով է տանում: Այսօր դու աջի մեջ ես, գործերդ հալած յուղ են, վայելում ես օրերդ՝ այդ պահին մի տեղ քո համար մութ երանգ է հյուսվում, վայելքին անպայման գալիս են հաջորդելու, եթե անցողիկ անգամ, ապա՝ հոռի ժամանակներ: Հավատացնում եմ, այս պահին տխուր, վշտալի օրերի մարդիկ թող համոզված լինեն՝ մթանն անպայման նախախնամությունը լույս է ընծայում: Ուրիշ կերպ չկա, կյանքն է այդպիսին: Մարդու հասկություն է՝ ամեն ինչի միջով անցնել, ընձեռած օրերի հետ ապրել հաշտ ու խաղաղ:

Ազոն՝ Արկաղի Կարապետյանը, զիլ, թուխ, կոկիկ բեխերով, երեսունին մոտ երիտասարդ էր: Սև գույնի, տուտուշ պոչիկով, բերետը գլխին, ձայնը՝ ցածրոտ, ձիգ հասակով՝ նա ակադեմիական մտավորականի տեսք ուներ: Սպասում էինք, որ Կալաշնիկով է բերելու մեր շեն, նոփնոր, խորհրդային կոշտ ու դեղին քրթի մեջ փաթաթ, կանաչ արկղների մեջ՝ յուղոտ, շողշողուն ինքնաձիգներ: Իրականում, ընդամենը տասը հոգի են ստանում այդօրը, շուտ-շուտ թուղթ ստորագրում, Կիչանի վիճակն անտանելի էր, դեպի Մարտակերտ Չլդրանի կողմի ջղանոտ ճանապարհը Սրխավենդի թուրքերի կրակի բե-

## Գեղarm Աշուն 2016

րանին էր, պիտի բոլոր ինքնաձիգավորները մեկնեին Ղուշի թումբ, Գերեզմանի կողմերը դիրքավորվելու:

Կրակը սովորականից հախուռն էր դառել: Մեր ջոկատի տասը հոգուց մեկը հայրս էր՝ հրամանատարը, եղբայրս Աշոտը, մերոնցից, վայ հոգի, չսխալվեմ, քեռիս՝ Գուրգենը, մորս քեռու տղան՝ Համլետը:

Համլետին հիշելով, հոգիս միշտ տակնուվրա է լինում: Կասեմ՝ ինչու: Տասի մեջ էին Հակոբջանյան Վալերիկը, ներքին թաղից՝ կարմիր թշերով, ծիծաղկոտ, սիմպո տղա: Սարգսյան Աբելը՝ եղբորս՝ Աշոտի դասարանցի, Թելյան Արտուրը՝ ջոկատի առաջնեկներից, Համլետի դասարանցի, մի հոգի՝ Հայաստանի Մարտունուց, տատիս հարևանուհի՝ Լուսարար Փառանձեմի Արմեն թոռը, համեստ, վախն անտես, քսան-քսանհինգ տարեկանին մոտ մի տղա: Եղավ, կարծեմ, ութ: Իններորդ ինքնաձիգը բաժին է հասել իմ դասարանցի Բեկնազարյան Վարուժանին, տասերորդը, վայ թե սխալվեմ, Շահումյանից նոր եկած, Ավանեսյան Մերուժին:

Հայրս՝ ինձ, հասկանալի պատճառով, ցուցակից հանել էր՝ ուսանող ես, սպասի՛ր, բան կմտածենք և այլն: Դե իսկի կողքից էլ տարօրինակ կերևար, իսկական կռիվը՝ սահմանում, հազար-հազարից ավել բնակչի գյուղի տաս հոգանոց առաջին ինքնաձիգավորից երեք հոգին մեր տանից լինեին, քրոջս, մորս թողնեինք անտեր՝ երեքով գնալինք Կիչան: Թեպետ ես՝ երկու-երեք շաբաթ առաջ էի «Նիկոլ Աղբալյան» ուսանողականի հետ եկել Բերդաձորից: Այնտեղից, թուրքերի գլխավերևով, Հայաստանը հեռվում երևում էր, Խնձորեսկի լույսերը հեռվում ծիկրակում, սիրտդ կրծքիդ մեջ տաքտաք տապտապում էր: Այնտեղ, գիշերը հերթափոխի՝ Հայկի համաստեղությունը բաց երկնքի մթան մեջ սիրուն տեսք ունենալով, դեպի մեր Խաչենի կողմը, Քառսունկույսի լեռան փեշերին, իշայծամ է ապրում: Իշայծամը վաղուց մարդուն լքել, փախել է անհաս գագաթներ:

Տաս հոգին ո՞ր էին, որ ես, Բերդաձոր, արդեն իսկական Կալաշնիկով էի տեսել, նոնակ, Հաճընի՝ անփույթ, արատով, պահունակը միշտ ընկնող, ինքնաշեն կարաբին: Ուզում եմ ասել՝ միամիտ վարժապետացու չէի: Ծիծաղս գալիս է:

Առանց ինձ էլ, Տասի ջոկատի կեսը մերոնք էին, կռիվն առջևում: Իհարկե, սա սուկ փաստագրություն է: Կրծքիս տակ, ճիշտ է, ցավը միշտ ինձ ուղեկցում է, հետագա դեպքերը, անհույս ժամանակները, մեզանից բաժանեցին տարեկից, անվեհեր տղաների, բայց իմ այս գրառումը գուտ մի հիշատակության վավերագիր տուրք է: Տասի ջոկատի խիզախ պատմությունը մանրամասն չեմ գրելու: Կարիք չկա: Ուզում եմ շուտ շարել ամենաարտոտ տեղերը: Առհասարակ, սա՝ ինչ որ գրում եմ, դժվար է կրկին միջովդ անցկացնել, բայց սկզբի մտքիս հարի, ուզում եմ մի բան ասել. ոչ մի մարդ իր կյանքը չի ուզի նորից վերապրի, անգամ եթե այն թանկ է ու հարազատ: Չեմ հավատում գլամուռից մեջբերած սուտ սենտենցիաներին: Բոլորովին տպավորություն չստեղծվի, թե վերապրելն այս դեպքում, կապ կարող է ունենա երկրի համար մանրանչելուց՝ մի օր հանկարծակի փոշմանելու հետ: Ամեննին ոչ:

Երեք դրվագ է հիմա մտքիս գալիս, որ շարեն: Մեկը մեր Համլետի՝ մորս քեռորդու, շենի առաջին զոհված զինվորի ու Տասի փոխհրամանատարի, մյուսը, հակիրճ, հետագայում ջոկատին միացած, վարորդ Գոճի Հրանտի ավագ որդու՝ Սամվելիկի մասին: Ու՛ էլի գրույցներ:

Սամվելիկը տասնյոթ տարեկան է սկսել ամեն ինչ, ամբողջ կռիվն անցել, քաջ մարտիկի մահով, Մղոզի կողմերում, հոգին տվել աստծուն: Նա քարե բազուկների ու սլավոնական տեսքի պատանի էր: Ուզում եմ հավատալ, որ նրա հոգին հիմա սավառնում

## Գեղarm Աշուն 2016

է Հայկի համաստեղությունում: Իր մասին գրելով, նախևառաջ, կռիվ տարիների ծիծաղին, սրտուռ մասխարային ու միամիտ զինվորի կորովին կա միայն շունչ տալու ցանկություն:

Հայրս երիտասարդ չէր, հիսունին մոտ, լռակյաց, հնարամիտ մարդ էր, հետագայում նրա ռազմական ունակությունները գնահատել են շատ-շատերը: Մամվել Բաբայանը, վերջերս լույս տեսած իր գրքում: Այդ գիրքը իմ ձեռքն այդպես էլ չի ընկել: Ֆելիքս Գոդոլյան առասպելական գեներալ կա՝ նա: Մեզ հետ, մինչև Չլդրան վիրավորվելը խրամատում էր շատ օպերացիաների ժամանակ, Սեյրան Օհանյանը: Եռագույն կրծքանշանը դռչին, խուճուճ մազերով, քսանհինգ-երեսուն տարեկան երիտասարդ, նա էլ գիտի հորս: Հաճոյանալու խնդիր չկա, հայրս կռիվ վաստակաշատ մարդկանցից է, բայց իր մասին չի՝ որ ուզում եմ խոսել: Նա, հույս ունեւ, Կիչանը ուր որէ կմաքրվի, հրամանատարությունը կհանձնի Համլետին, կողք կկանգնի, միգուցե կմնար միայն խորհրդատու, բայց չհասցրեց:

Համլետը աժդահա կազմվածքով, քսաներկու տարեկան, Ղափանի շինարարականը նորավարտ երիտասարդ էր: Հանկարծ, եթե տողերս Ղափանի շինարարականի մարդկանցից որևէ մեկի աչքովն ընկնի, ուզում եմ իմանան, որ խոսքը հանրակացարանի դարաաբաղցի Համոյի մասին է, որին բոլորը հարգում էին, հաշվի նստում հետը, շատերին նա օգնել դիպլոմային աշխատանք է գրել: Համլետը, տարիքին համեմատ, հմուտ, խորհրդային բանակի տանկայինը անցած, համեստ, արկից, ականից, նոնականետից, ինքնաձիգից գլուխ հանող, ծանր խոսքով, արտառոց ֆիզիկական ուժի հաղթանդամ տղա էր: Հեղինակությունն անվիճելի էր, քանի որ ջոկատի նաև հետագա երեսուն-քառասուն զինվորի ֆիզիկապես ամենաձիգն էր: Մեկը փորձեր իր խաղը խաղար, հրամաններին մատերի արանքով նայեր, Համլետը, ինչքան էլ բարի, հանգիստ մարդ, կարող էր մի երկու անգամ մեղսավորին բռնցքահարել: Առանց ուշուց, հերստություն, իսկույն մարդն ուշքի կգար, կզգար գործի լրջությունը: Ազնվական գերդաստանի, հարյուր տարիների փայտագործ արհեստավորի ջիղի տղա էր, ազգանունը Կարապետյան: Ցարի ժամանակներում, մեծ պապ Սարգսի քոյովա տարիներին, Դերբենտից հյուր եկած, ընկեր դարձած, հողային ինժեներ, ոմն Չիկով ռուսի ազգանունից՝ գյուղացիք իսկույն փոթ անուն են դրել: Չիկով: Առայսօր նրանք Չիկով են: Չիկով ռուսից, հետագայում, Սարգսի պապի ձեռքով, մեր կողմերում դեռևս անհայտ լուրիկի, լոբու սերմացու է գյուղական մշակին բերվել Հյուսիսային Կովկասից:

Տասի ջոկատը Կիչանի ձորում մի քանի սխրագործություն է կատարել, մթան միջով, օրինակ, տողսկել ազերիների թիկունքը, ծուղակներ սարքել: Բոլոր քաջագործ, հմուտ օպերացիաների ռեժիսորը Համլետն էր: Գործի մեջ տիրապետում էր բառացիորեն ձեռքի տակ եղած բոլոր գեներներին, ամենակարևորը՝ իմացածը, խրամատում, կամ հանգստի ժամանակ, Խաչմերուկի տնակում՝ ձեռաց մատուցում էր զինվոր ընկերներին: Տարիքով փոքրերին մեծ, ծանր գնդացիքն էր բացատրում, խոսածին հապաղ լինելովին՝ ընկերաբար մուշտի տալիս: Մի օր դիրքում, մեկի մոտ կրակելու պահին, ինքնաձիգի փակադակը լքվում է, ինքնիրեն կծում, բոլորն իրար են նայում, չգիտեն ինչ անեն ու՝ Համլետի հոխորտալու են սպասում: Նա, ինքնաձիգը վերցնի, կոթը դնի գետնին, փողը՝ զգույշ լինելու համար, թեք պահի, բացատրի, որ մարտի պահին այսպիսի դեպքերում, պետք է ահա այսպես դնել ու՝ ոտքի կրունկով կտրուկ քացով տալ փակադակի բռնակին, թե չէ կմնաս մահակի հույսի, անգեն:

Բանիմաց, խաղաղ, ծանրումեծ լինելու հետ, նա՝ հատ-հատ խոսեր, իրեն թիթիգ, քառականց պահողին տեղը դներ: Խաչմերուկի գորանցից ներքև՝ գետափն է, ուր

## Գեղarm Առն 2016

աղբրաջուր է հորդում: Խոհանոցի, ամեն պետքի համար, միշտ մի հոգի, քառասուն լիտրանոց բիտոնը առնում, հերթով, տրանսֆորմատորի յուղ վառող բեռնատարով, գնում էր ջուր բերելու: Մեքենան մի օր խափանվում է, գորանոցը մնում է տոչոր: Համլետը բիտոնը վերցնի, հիսուն մետր խիստ ուղղաբերձ գառիվերով իջնի ջուրը, մինչև պռունկը լցնի, դնի ուսատեղին, անթարթ բարձրացնի Խաչմերուկի տնակ: Քսաներկու տարեկան երեխա, քառասուն լիտրանոց բեռ, համարյա տաս-քսան աստիճան թեքություն, ինքներդ պատկերացրեք:

Կիչանի հարակից կրակակետերը փետրվատ-մարտին ճնշել էին մերոնք արդեն: Խաչենի ձորակի ջոկատների համագործը, հակառակորդին քշել էր դեպի Ալիաղավի գետահովտի դիրքերը: Խնդիր է առաջացել տանկի, բեռնատարի, բանուկ ճանապարհները ականապատել: Խաչենագետի առաջնագծի ճամփան, վտանգը որտեղից սպասվում էր, Համլետը առաջադրանք էր ստացել ուշի-ուշով ականապատել: Հիսուն մետրի չափ, երեք, թե չորս հոգի հետը, նա ի կատար է ածել այդ գործը: Հիմա իրենք դիրքում են, ապահով, քանի որ առաջները թակարդ է լարված, ծիտ էլ չի կարա թռչի, մնում է կարգին հերթափոխ կազմակերպել, որ իրենց կողմով սահմանը ամուր, ապահով լինի:

Կռվի գնացած տղաները՝ գրքում, կինոյում էին պատերազմ տեսել: Կռիվը սկսվել էր, իրենք արդեն զենք ունեին, գտնվում էին դիրքերում ու ամեն մեկին իր սեփական միտքն ունեք՝ մեռնելու, կռվելու, հաղթելու մասին: Իհարկե, երևի ամեն մեկը ինչ-որ աստծո ուժի հավատում էր, որ հենց իրեն գնդակ չի առնելու, մեռնելու իր համար չի, բայց դա ընդամենը անպաճույճ, միամիտ հավատ էր, ամեն ինչ ճակատագրի ու աստծո ձեռքին է: Մեռնելու մասին գաղափար չուներին, որովհետև փառք աստծո, առաջին ամսում դեռ ոչ մեկը, ձորակից լիներ, թե ուրիշ տեղից կամավոր միացած, չէր գոհվել, կամ վիրավորվել: Թեև թուրքերի կողմից, կիչանցի հայր ու որդի Ահարոնի ու Ջիվանի եղկելի սպանությունն արդեն հետևում էր, ընդհանրապես այդ դեպքն էլ առիթ է դառել, որպեսզի իսկական կռիվ սկսվի այս կողմում: Մինչև Կիչան-Մարտակերտ ճանապարհը փակվելը, հայրուորդի, առավոտ կանուխ, իրենց դռանը մեքենան նստել, պիտի գնային Մարտակերտ: Մի երկու հարյուր մետր դեպի Չլքրան խորացած, թուրքերը ջղանենու ծմակում հանկարծակի շրջապատում, մեքենան փլավքամ են սարքում:

Գիրքերում դեռ մեռնելու դեպք չէր եղել, ամեն մեկն իր դարդին, կատակ, խայթոց, գիշերվա մասխարա գրույցներ, տրասսեր փամփուշտից հակառակորդին պատասխանել, Լամբադա ագրանշանի ապարդյուն կրակ-գծություններ. այսպես էին անցնում օրերը: Պետք է ասել, որ քաջսիրտ տղաներից, որոնք կամավոր զենք էին վերցրել, թուրք-երդում ստորագրել, հետագայում կառուցվել է հենց հայկական անպարտելի բանակը:

Համլետը գետափի դիրքում էր գտնվում, այնտեղ ուր հավանական հարձակումների ժամանակ, հակառակորդի տանկերի ճեղքում պիտի լիներ: Մի բան կա՝ կռվի ժամանակ կրկնապատիկ ահագնացող: Հրամանատարը, եթե արդար է, խիզախ, ինքն է առաջինը խրամատից վեր կենում, առաջ գնում, ծանրակշիռ է, խոսքի տեր, ապա նրան բոլորը սիրում են, բամբասկոտները, թիկունքի խոտողներն ու անգամ հավերժ դժգոհ կախմռութները: Քսաներկու տարեկան Համլետը՝ իսկական ռազմական գործիչ դառնալու տաղանդ ուներ: Բոլորը սարսափում էին նրանից, բայց որ դիրքում, հանգստի ժամանակ, գլխավերևի սույլի տակ՝ աչք պիտի փակեին, սրտներումը բավականություն զգացում կար, որ Համլետն իրենց ավագն է, ապավենը, ի՛նչ լավ է:

Ոչ մեկը չգիտեր՝ մահն ինչ է:

Առավոտ գյուղամեջ, եղերգի ձայնից քիչ հետո, սահմուկոտ, դիվային զգացում տա-

## Գեղarm Աշուն 2016

րաձվեց շրջապատում: Գիշերը բոլորը ծանր էին անցկացրել, շուռումուռ, քնել չէր լինում: Պատուհանի դիմաց, ճանապարհին, տատս էր լացելով իջնում դեպի գյուղամեջ:

-Համլետը սպանվել է, եղբորս ազիզ երեխան ձեռքից գնաց: Թուրքի բալան մեռնի,- աչքերը արցունքից կարմրոտ, դիրքերից եկած շառ լուրին՝ դեռ անհավատ, լացում, դեպի վարչության շենքն էր գնում տատս:

Կիչանից դեռ լուր չկար: Գյուղամեջ ասացին՝ Համլետին արդեն դիրքից բերել են Խաչմերուկի գորանոց: Տղաներից Մատոն, Առուշանյան Մարտիկը, գիշերը, լակոտ հաղով, տեղն է դրել Համլետի գլխի ոսկորները, վիրակապել: Սպասում էին դագաղին, որ մեքենան գյուղից գիշերը պիտի տաներ, հասցներ:

Տասի ջոկատի տղաների սրտով անգույն արյուն էր հոսում, շատերը Համլետի անշունչ մարմնի մոտ կանգնած, երեխայի նման, լուռ լացում էին, անխոս արցունք թափում: Մի որոշները դեռ չգիտեին ինչ է կատարվում, ապշահար, սիրթնաձայն աշտույնկողմ էին գնում, սիգարետից սիգարետ վառում: Ուր որ է տղաների ծառայողական, քաղաքից ստացած մասնավոր Մազը, յոթ-ութ կիլոմետր, Համլետին դագաղի մեջ պիտի տաներ շեն, հայրական տուն, որտեղից կորոշեին՝ երբ ու որտեղ էին թաղում անելու:

Հայրս փորձում էր տղաներին սիրտ տալ, սաստում էր՝ սովորեն, հաշտվեն մտքի հետ, որ իրենք իսկական կռվի մեջ են, խաղուպար չէ: Դա ճիգ էր, արտաքուստ պինդ թվալու ցուցադրություն, հրամանատար է, վերջապես: Նրա հոգսը, դարդը՝ Համլետի ծնողների երեսը դուրս գալն էր: Մտահոգ ծխում էր, դաշտայինով ժամանակ առ ժամանակ խոսում դիրքերի հետ, բայց ուշքումիտքը իր ջոկատի առաջին զոհի հարազատներին սփոփանքի խոսքեր գտնելն էր:

Մազը Համլետին, որ բերեց իրենց՝ Չիկովենց բակը, անհամար մարդ էր հավաքվել, բոլորը լացում էին, կին-տղամարդ, ոմանք իրար սիրտ էին տալիս, հորդորում՝ քաջին դիմավորել որպես հերոսի: Իսկական պատերազմն արդեն սկսվել է: Համլետի ցավը բոլորին փոխեց: Ապրիլի չորսն էր, երբ նրան տարան Լուսե թաղամասի գերեզմանոց: Փոսն արդեն փորված էր, եղանակը անտանելի թաց, մառախլապատ: Հարազատները երկու օրվա մեջ լացովշտից հյուծվել, լուռ կանգնել էին: Ոչ մի գրական հնարանք չէ, որ ասեն, Համլետին դրեցին հողում, դեռ վրան հող լցնելու՝ ձյունը փաթիլ-փաթիլ արեց հանկարծ, սա՛՝ միշտ նրան սիրողների սրտում ու հիշողության մեջ մնացած իրողություն է: Մարդիկ, երբ բուռ էին արել հող լցնելու Համլետի վրա, ապրիլի այդ կեսօրին, տաշեղ-տաշեղ ձյուն տեղաց: Ի՞նչ էր, աստծո սառնասիրտ արցո՞ւնք, ով գիտեր...

Համլետի մոր, Ժենյայի խոսքը ավելի հուզեց մարդկանց: Միսիանի իր բարբառով, սառած արցունքների միջից, նա՛՝Տասի ջոկատի տղաներին ասաց՝ Համլետը գործը կիսատ թողեց, գնաց աստծո մոտ, նրա պատիվը պիտի բարձր պահեք ու պաշտպանեք մեր երկրի սահմանները: Հեռվում՝ մեղսավոր, կարկամ, կանգնած էին հարևան Ռոման ու նրա կին Ժասմենը: Մի քանի ամիս առաջ իրենց տուն, դուստր Գոհարին՝ Համլետի համար խնամխոս գնացած Ժենյային չէին ասել: Ծակատագիր է՝ դասավորվել է: Տարիտարուկես անց, ճակատում զոհվում է նաև Գոհարի միևնույնար եղբայր Ռազմիկը, մեր դասարանի Ալին: Հայրենիքի համար անձնագրի մարդկանց անգարդ պատմությունն անսպառ է:

Հունիս ամսին, երբ թուրքերը, տասնյակ միավոր տեխնիկայով, կրկին խոշոր հարձակում էին նախաձեռնել, եղբայրս՝ Աշոտը երկու հոգու հետ, Խաչենագետի աջափնյա Քարազլիսի ծմակի երեսով հետախուզման էր գնացել: Նրանք սկսեցին կռիվը տեսնել հեռվի թիկունքից, թե ինչպես են հակառակորդի ուժերը շարժվում դեպի մեր դիրքեր, բայց կապի բացակայությունից ոչինչ անել չեն կարողացան: Այն է՝ խփում, դուրս են



## Գեղarm Աշուն 2016

գալիս դեպի Սարդարաշեն, այնտեղից Խաչեն գյուղ, որտեղից էլ գալիս միանում արդեն խորությամբ հետ քաշված ինքնապաշտպանական ուժերին: Երկու օրից հետո տեղի ունեցած Սրխավենդի ճակատամարտում՝ թուրքական զորամիավորումները իսպառ ջախջախվում են, դիմում փախուստի: Նրանց ծուղակի մեջ առած Տասի տղաները իսկական քաջարի դաս են կազմակերպում: Թուրքի ետ քաշվող հուսահատ տեխնիկան՝ գալիս խրվում է մի քանի ամիս առաջ Համլետի կողմից ակնապատված դարանակալ ճանապարհահատվածի մեջ: Երկու-երեք միավոր ականի վրա է փչանում, մի այդքան էլ կամրջի տակ թաքնված մեր տանկն էր Մարտունու արծիվ տղաների կողմից թիրախավորել: Մարտից հետո, երբ թուրքական ուժերը գրեթե գլխովին ոչնչացել էին, Տասի ջոկատի տղաների ոգևորությունը ընդամենը լացի էր փոխվել: Համլետի լիցք տված ականների վրա այդօրը ջարդվել էր հակառակորդի սանձարձակ տեխնիկայի մի քանի հատը:

Համլետի ձայնը դեռ ոչ ոք չի մոռացել, նրա պատկերը դեռ տղաների սրտի մեջ է: Այո, մեզանից հեռացած տղաների ձայնը հիշելու ենք մինչև վերջ: Ահա այսպես:

Կռվի ամենաթեժ աշնանը, երբ արդեն ետևում էին մնացել նահանջի օրերը, թուրքը խորացել էր Թարթառի աջափնյակ, Վաղուհասից մինչև Ղազանչի ձգվող անտառը սարքել ճակատ,- պաշտպանությունը ամրացնելու խիստ կարիք զգացվեց: Հակառակորդի հետևակը դեռ առավ Գ-անձասարի, Առաջածորի, Կիչանի հարակից անտառներին, վտանգվեց նաև երկինքը: Ամեն բույե մարդիկ սպասում էին՝ ուր որ է հյուսիսի, կամ Առանի դաշտավայրի կողմերից, վարձկան ռմբակոծիչները կորոտան, ֆորսաժ կմիացնեն, կսուրան հերթական գյուղի վրա՝ հրթիռ ու ռումբ կդատարկեն: Այդ տարում տղաների զենքերը հակաօդայինով համալրվեցին: Իգլա տիպի, ուսից կրակելու միանվազ հրթիռը ոգևորեց բոլորին, բայց դեռ օգտագործելու առիթ չէր բացվել: Հակառակորդի Մու-երը անարգել, լկտի մխրճում էին երկինք, անսպասելի հարվածում շեներին, սովորական, խաղաղ մարդկանց անդառնալի կորուստներ տալիս:

Քանի որ Տասի ջոկատն արդեն վաշտի ծավալ ուներ, համալրվել էր, քաղաքից տեղացիներ էին եկել՝ երկու-երեք եղբորից մեկն ինքնաձիգ ձեռքին մեկնում խրամատ, դիրք պահելու: Մյուս եղբայրը, հրամանատարի որոշմամբ, ետ էր քաշվում, թիկունքում առժամանակ պահեստազոր մնում, կամ՝ Վարար աղբյուրի հրետանու վրա էր ամրացված: Փոխհրամանատար Անդրոն՝ Համլետից հետո էր նշանակվել, զբաղված էր զինամթերքի հարցով, հաճախ էր լինում դիրքերում: Նրա եղբոր Վլադիկին հրամանատարը դրել էր Իգլայի վրա: Չորանոցի մոտակայքում բարձունք կար, ցերեկը, Վլադիկը Իգլան շալակը, ուշի-ուշով հետևում էր երկնքին, թե ո՞ր կողմից է մահաբեր գերձայնայինը հանկարծ դուրս գալու՝ հրթիռ-ռումբ խփի:

Կիչան-Չլղրան հատվածում փոխհրաձգություն կար, թուրքին՝ ռմբակոծիչները երկնքից սատարում էին, որ, ինչքան հնարավոր է, հետևակը առաջ գա, նոր դիրքեր գրավի: Հուլիսի վերջին, մի պարզկա օր, արծաթագույն գիշատիչը ճակատից սուրաց դեպի զորանոցի գլխավերև՝ պտույտ գալու, որ հետո ֆորսաժ անի՝ ծլկի: Այդ պահին, տղերքը չորս կողմից, ո՞րը դիրքից, ո՞րը ճանապարհին ընթացող բեռնատարի թափքից, ո՞րը հետախույզի իր բարձունքից՝ սկսում են կրակել ինքնաթիռի վրա: Վերջապես, պահը որսում է նաև Վլադիկը. Իգլան հապշտապ լարում է, նշանառու սարքը ետծալ անում ու՝ շնիկը հուպ տալիս: Հանդիպակաց չորս կողմի կրակից, հանկարծ սպանող փողո՞ւմբակոծիչը սև ծուխ է արձակում, մի պահ մեռյալ կետ որսում, սկսում շեշտակի գահավիժել դեպի գետին: Ի՞նչ ուրախայի օր էր, ի՞նչ ցնծություն, հաթաթա սկսվեց մարդկանց մոտ: Թուրքի մահաբեր, լկտի զագանը ոռնաց ու հուսահատ թավալվեց Սրխա-

## Գեղarm Առն 2016

վեճի ճորտը:

Այն ժամանակն էր, երբ արդեն ինքնապաշտպանության բանակի հրամանատարությունը, հակառակորդի տանկ, ՀՄՄ, ինքնաթիռ խոցելու համար պարզեցված էր նշանակել: Արի՛ որոշիր, թե հուլիսի 22-ին, չորս կողմի ծուղակի մեջ հերն անիծած ուժ-բակոճիչն ով է խփել: Կեսօրին, ճաշասենյակում, Վլադիկը ալալվել, քթի միջի իր հատուկ առողջամթոքամբ, հերսոտ գանգատվում էր տղերքին, թե.

-Էս ա, էլի՛, արդարություն կա՞: Ես ռակետ խփեմ՝ թուրքի սամայոտը տափը տամ՝ պրեմիան տան ուրիշի: Քաղաքի ձեռքին ա լրիվ, շենացու մարդու նրանք փող կտա՞ն, – գոլալը ձեռքին, եռոտ մտով ապուրին փչում էր, հերսոտ գանգատվում: Թեպետ նա փողի համար չէր ձայնը գլուխը գցել: Տղերքը ընկերաբար սիրտ էին տալիս, թե կռիվը չարձավ հո՛ւ, էլի են գալու: Ծաշի մտերմիկ ժխորի պահին, հանկարծ եղկելի որոտը պատեց շրջապատը, զորանոցում իրարանցում սկսվեց: Վլադիկը գոլալը ձեռքից գցեց սեղանին, ծիլ եկավ տեղից, մեկնվեց դեպի սենյակում թեք դրած իր Իգլան ու սրընթաց վագեց դեպի իր բարձունքը:

Տղաները ետևից դուրս եկան: Մատոն իրեն չկորցրեց, ետևից կանչեց ու՛ տագնապի տակ բոլորը հռռռացին.

-Վլադի՛կ, ախպեր, դե գոնե սպասի էն խփածի փողը տան հետո, էլի՛: Նայի տես, է՛, մեկի փողը դեռ տալու՝ մի հատ էլ ա խփելու....

Սրխավեճի կռիվը հաջող էր ավարտվել: Ֆելիքս Գգոլյանը ջղային մարդ էր, արդար, պահանջկոտ: Երեկոյան Ուազը քստմնելի ձայնով արգելակեց Խաչմերուկի գորանոցի առաջ: Կռնատակերը՝ գռեհիկ բացվածքով, նավաստու շերտավոր շապիկը՝ վրան պիրկ, սիգարեթը՝ գողական ատամների արանքում վարորդը դուրս ցատկեց խցիկից, հետևի դուռը բացեց, քուղերով խնամքով կապած, երկար մի բան հանեց շորի մեջ փաթաթած: Տղաները դիմավորեցին: Գգոլյանի կողմից, վարորդը, Տասի ջոկատի հրամանատարին անվանական Կալաշնիկով գնդացի էր բերել: Ձենքը փայլում էր, երևում էր, որ դեռևս փողից փորձնական լինի միայն կրակած, յուրը վրեն, ինչպես ասում են: Հրամանատարը՝ անփոփ, կովից, Համլետի մահից ի վեր, առաջին անգամ էր ուրախանում: Տղաները չտեսի նման սկսեցին տնտղել 5.45 տրամաչափի նվերը:

Կապի խնդիրը բարդ էր: Երևանից բերված տաքսու ռացիաներն էին, մի հատը՝ գորանոցի մեջտեղում, անախորժ, անդուր խշշոցը միշտ գլխիդ մեջ նստած, երկրորդը՝ գետափի դիրքում, գրեթե չորս-հինգ կիլոմետրի վրա՝ տղերքի մոտ: Խշշան այդ ռացիաները մի քանի ամիս գրեթե հարկավոր եկան, հարմար սարք չէր, մոտը միշտ մի հոգի նստած էր, պատասխանատու: Ալիքներն այնպես էին խառնված, որ թուրքերը հեշտ մեջը չաչանակի նման նստած էին: Մերոնք էլ չէին պակաս: Տղաներից ոմանք թուրքերեն խոսում են, շատերը՝ հասկանում, ուշունցներն ու կծու խոսքերը դե բոլորին էին հայտնի: Ամեն կռվի ժամանակ երևի սովորույթ է՝ կասկածի մթնոլորտ լինի, ասեն՝ էս ինչը ծախված է, ինչ լինում է՝ իսկույն հայտնում է: Եթե ասում են կռիվ, ուրեմն կարող է լինել նաև դավաճան, ընկրկող, հասկանալի բաներ են: Վարորդ Հրանտի հետ գյուղում իր անունով խոսող չկա՝ Գոճի, Գոճի: Չգիտես՝ որտեղից ու ով է նրան տվել այդ փոքր, բայց՝ նեղանալ չկա: «Գոճի, գնալո՞ւ ես Ստեփանակերտ, Գոճի մի դույլ բենզին տուր, թե բաքումդ կա», մարդն արդեն սովոր է: Մեկ-մեկ, որ Հրանտ են ասում, ուրեմն սպառնկերության նախագահն է, կամ իր գառամյալ ուսուցչուհի Միրումյան Սեդան, կամ էլ մի շրջկենտրոնից եկած ինչ-որ տեսուչ: Մնացածը՝ Գոճի:

Տասի ջոկատի տարիքով ամենափոքր՝ Գոճի Հրանտի Սամվելիկ որդու դասարանցիներից մի քանի հոգի կային՝ ինքը, Գագիկը, առաջին ինքնաձիգավոր Սարգսյան

## Գեղarm Աշուն 2016

Աբելն ու եղբայրս Աշոտը: Մի օր, գորանոցի ներսի ու ռացիայի հերթապահը Սամվելին էր: Հրամանատար, ավագ, որ ցերեկը գործով տեղ էին գնում, ջահելությունը, հերթափոխից ազատ զբաղված էր գծությամբ, անեկդոտ պատմելով, քարտ խաղալով: Իսկ զայթակղիչ գործը՝ ռացիայի կողքին նստել, ալիքի մեջ մտած թուրքի հետ լեզվակռիվ տալն էր: Ուշունցի փոխհրաձգություն: Սամվելիկը նոր էր ելել ջոկատ, թեթև գործ էին տվել՝ ռացիայի մոտ նստի, դիրքի հետ կապ պահի: Հերթափոխի մի խումբը ճաշի էր նստած, հինգ-վեց հոգի: Թուրքը հոգնեցրել էր արդեն դատարկ կանչերով.

-Վազգեն, Վազգեն, ուր ես Վազգեն, քո մերը...- փորապատ ձանձրացնում է երևի Ադրամի կողմերից ոմն մի պարասպ ասկյար:

-Մոլլա, մոլլա, շունշան որդի, ի՞նչ ա եղել, էլի եկա՞ր,- ուրախ, զվարթ, լուրջ պատասխանում է Սամվելիկը:

-Քույրիկդ կտա՞ս ինձ, Վազգեն, արմյանկա լյուրլյու օչեն,- լկտիանում է թուրքը:

-Տվալու՛ մած,- ընկալուչի կոճակը սեղմում, ռուսերենի անցնում, տակ չի մնում Սամվելիկը,- ինձ քույր չունեմ, մի ախպեր ա, այ ոչխար:

- Վազգեն, Վազգեն, ստի մերը...-

-Մուտը չգիտեմ, այ ախմախ, անառակի որդի...-

-Վազգեն, ա՛յ հայվան, դուք հայվանի՞ց եք ծնվել:

-Մոլլա, քեզ բռնելու ենք կրտենք, դեռ որտե՞ղ ես, առանց էդ էլ ձերի կեսը կտրած ա: Խոսք եմ տալիս,- աքլորանում, ծիծաղում է Սամվելիկը: Բոլորը գորանոցում քրքջում են: Անկասպ այսպես, ուշունց առօրյա: Սեկ-մեկ դիրքից, որ անհարկի խոսում են, ալեխառն ճահիճի մեջ ջոկելն էլ դժվար է:

-Դոնգուզ օղլու (խոզի տղա՝ Ա.Ա.), դոնգուզ: Դու դոնգուզ օղլու ես: Էսա՛ կտեսնենք, ով ում կկրտի,- ջղայնությունը մատնում է թուրքը:

Սամվելիկը՝ երեխա, նյարդերը ոռի, թուրքի խոսքերը լուրջ ընդունի: Ի՛նչ ծիծաղ օր էր: Ընկալուչը չրխկոցով դրեց տեղը, ճաշող ընկերներին նետեց.

-Որ ասում են մեր մեջ ծախող կա՛ դեռ չեք հավատում: Շան տղա թուրքը շա՛տ գիտեր, թե Սամվելիկն էմ, Գոճի Հրամտի տղան: Դոնգուզ օղլը: Քո դավաճանի տիրումները, բա չիմանա՞ս ով ա...-

Մարդիկ կան՝ հիշում ես միշտ ծիծաղկոտ երեսով, թվում է՝ նրանք երբեք չեն հոխորտաել, երբեք չեն տխրել: Կա՛ն, կան մարդիկ, որոնց երեսին միշտ խինդ է փայլել: Սամվելը երևի ծիծաղը երեսին է հոգի տվել ասածուն: Սամվելի հետ այդ օրը ութ հոգի գոհվեցին Տասի ջոկատից: Կովի վերջին տարում, երբ Մոզգի մոտերքը մարտերը հակառակորդի հետ փոփոխական հաջողություն ունեին, տղաները մի անգամ հանդիպակաց դուրս են եկել թուրքի տանկերի դեմ: Վաշտի սև օրն է ընդմիշտ: Մերոնք ետ քաշվելուց, հայադեցի Հարոնը գոհվում է: Նահանջի ժամանակ, Հարոնի եղբայր Մուրիկը՝ Պուշկինը, տեսնում է, որ կրակահերթ բռնեց եղբորը, իսկ տանկերը մոտենում են: Պուշկինը կանգում է, սիրտը՝ կտոր-կտոր, արհամարհում թուրք զանգվածի գրոհը, արցունքների միջից, խելապատառ գոռալով, Հարո՛ն, Հարո՛ն, ետ դառնա, գնա՛ եղբորը որ հանի: Հասնի խրամատին, խելագար, անզգա, շալակի եղբոր արմաքամ մարմինը, որ նահանջին իր հետ հանի, մոտակա տեղից հակառակորդի գնդակի տարափն նրան էլ բռնի:

Ստացվել է այնպես, որ կես տարի երկու եղբոր դիակները, իրար գրկի մեջ մնացել է մարտի այդ բարձունքում, հետո միայն Տասի խիզախ տղաները հանել են նրանց, գյուղական հուշարձանի քով դրել հողի մեջ:

Գումարտակ լինելուն պես, Տասի ջոկատը սփռվել է ուր ասես: Հիմնական տղերքը

## Գեղarm Աշուն 2016

պահպանվել են մի վաշտում, բայց տարբեր դիրքերում հազար կողմից եկած կամավորներ կային: Արդեն իրավիճակը ստիպում էր անցնել կամավորից պարտադիրին, օրհասական էր ամեն ինչ, մանավանդ Խաչենի ուղղությամբ: Ինձ գորակոչել են հատուկ զորամաս, սկզբում Տասի վաշտը բողմել, գոնե իմ լավտղայական պատվի համար՝ անընդունելի էր, բայց որ ծանուցման թուղթը բերեցին շտաբ, ամրացված մի կադրային մարդ կար՝ կանչեց, առանց ինձ նայելու, թե երկու օր ժամանակ, որպեսզի լինես տեղում: Շատ շուտ սպայի կոչում ստացա, բայց իմ մասին ոչինչ չեմ պատմելու:

Պարտադիր զինվորական ծառայությունը փոխեց ամեն ինչ: Շատ ճարպիկներ դիմեցին գլուխ պահելու, ազնվորեն ասացին, որ իրենք կռվել չգիտեն, ճակատում իրենց օրերն ու ժամերը հաշված են լինելու, իսկույն գնդակի բաժին են դառնալու: Տեղավորվեցին, մեծամասամբ, թիկունքի պաշտոններում: Պիտանի տղամարդկանց մի մասը, իհարկե, ուզում են հավատացած լինել, որ քչերը, անցան ընդհատակ, տառացիորեն թաքնվեցին, ո՞րը իրենց ներքնահարկում, ո՞րը պետական հիմնարկում, մի ուրիշները չգիտեն որտեղ: Իմ մարտկոցը մի խոհարարուհի ուներ Հասմիկ անունով, ես էի հրավիրել աշխատանքի, որ նեղ օրերին գոնե իր տան հոգսը անի: Փող էինք տալիս, մթերք: Նա պատմել է, որ ամուսինը տանը թաքնված է, երկու տղա երեխա ունեն: Հիմա են պատմում այսքանը, այն ժամանակ ձև են արել, որ չեմ լսել Հասմիկին, իր թաքնված ամուսնու մասին չգիտեմ: Իմ արարքը, համոզված եմ, քրեորեն եթե հետապնդելի էլ էր, բայց առնվազը համաներման բերան կընկնեի: Ի վերջո, ամեն մարդ ինքն է որոշում կանգնի իր երկրի պաշտպանության գործին, թե՛ չէ: Բայց կա նաև մի պահ, մարդկային կողմ, որ ինձ՝ հայկական բանակի քսանամյա սպայիս ստիպել է, բացի զինվորական պարտականությունից, չտեսնելու տալ շուրջը կատարվող ամեն մի էական չթվացող երևույթ:

Գիրքից եկել էի քաղաք, դեռևս ուսանող ժամանակից հանրակացարանում սենյակ ունեի պահված: Հանրակացարանում մեկ-մեկ դիրքերից երևացող ուսանողներից բացի, արդեն որերորդ տարին ապրում էին նաև Բաքվի-Սումգայիթի փախստականների ընտանիքներ: Անունով ոչ մեկին չէի ճանաչում, բայց դեմքով գրեթե բոլորին գիտեի: Կան, էլի, չէ՞, մարդիկ, որոնք կարծես ծնվել են պորտաբույժ, ալարկոտ, անբան լինելու համար միայն: Կան մի տեսակի անձեր, որոնք հակված են չաշխատել, միշտ աչքը պահել մոր, կամ քրոջ դրամանապանակին՝ թե սիգարետի փող տալու են այդ օրը թե չէ, կան այսպիսի դեգրեդանտ բնածիններ: Մի՞թե այսպիսիները կարող են մեկնել ճակատ, ինքնաձիգ բռնել, արհամարհել վախը, իր ու հարազատների բաժին երկրի սահմանների անվտանգությանը մասնակից լինել: Իհարկե, ո՛չ:

Հանրակացարանի 332 իմ համարում էի մնացել գիշերելու, երեք օրվա արձակուրդի թուղթ ունեի: Առավոտ ինձ շորշոփ զարկող մի աղմուկ արթնացրեց: Դուրս եկա իմ հարկի նեղ պատշգամբը, գլխավոր մուտքի աստիճաններին, թուխ գույնի զինհագուստով պարետային գումարտակի տղաները ստուգայցի էին դուրս եկել: Երեք հոգու թաքնվածներից հանել էին, որոնց քանի օր է զինապարտության ծանուցում էին ուղարկել: Մեջները մի Վիտալիկ կար, դեմքով գիտեի, երկրորդ հարկի 117 համարի սենյակում, սումգայիթցի, կլիներ 24-25 տարեկան: Ինչպե՛ս էր նա բարձրաձայն աղաչում պարետայիններին.

– Մի տարեք ի՛նձ, խնդրո՛ւմ եմ, աղաչում եմ, ես կռվել չգիտեմ, վախում եմ կռվից, գնդակից: Խնդրում եմ, մի՛ տարեք ինձ, ես շատ վախում եմ:

Պարետայինի տղերքը լուռ ուղեկցեցին, մյուս երկուսին կամովին, մտքին Ուազ մեքենան ու՝ տարան:

## Գեղarm Աշուն 2016

Հաջորդ օրը, երեկոյան, իրարանցում, լացի ձայն տարածվեց հանրակացարանի երկրորդ հարկում: Վիտալիկին տարել էին Ասկերանի դիրքեր, նույն օրը նա վզին մահացու գնդակ էր ստացել, կյանքը փրկել չի հաջողվել: Պատերազմը դաժան է, չգիտեմ, ո՞ւմ մեղադրես:

Կային մարդիկ, բոլորս գիտենք, որ երկրի պաշտպանության համար պատերազմի առաջին օրերին, ամիսներին գլուխ են վերցրել, մեղմ ասեմ, լքել երկիրը: Ինձ վրա պատասխանատվություն չեմ վերցնում դատափետելու նրանց: Պատերազմի իրականություն է՝ կան հերոսներ, կան գլուխահողմեր, պատեհպաշտներ: Ամեն պատերազմ ունի իր դասալիքները, ամեն հաղթական պատերազմից հետո դասալիքները ստանում են համաներում: Պատերազմի դաշտը լքած, կամ առհասարակ ինքնաձիգ չտեսած, մի օր անգամ սահման չտեսած մարդկանց դատը թողնում են աստծուն ու իրենց խղճին: Ավելին, կուզեի նրանց ասել՝ պատերազմից անխոս Եվրոպաներ, Ռուսաստաններ, Ամերիկաներ հայտնված հարզելի եղբայրներ, գիտե՛մ՝ ինչպիսի գրկանքների, նեղ օրերի միջով եք անցել օտար երկրներում, գիտե՛մ, որ ձեզանից շատ-շատերին ճակատագիրը հաջողակ մարդ է դարձրել: Թո՛ղ ձեր հոգին միշտ խաղաղ ու երջանիկ լինի:

Հանուն արդարության մեր կռվի իսկությունը մինչև վերջ հակիրճ պատկերելու իմ փորձը կատարյալ դարձնելու համար ուզում եմ մի դեպք էլ շարադրել:

93 թվականի աշնան մարտերի ժամանակն էր: Խիզախ հրամանատարների, անվախ տղաների ու աղջիկների ավյունով երկիրը մարտնչում էր իր անկախության, սահմանների անխախտության համար: Օր չկար գրեթե, որ գոհ չլիներ: Կռիվն անողորմ գույն ունի, գորշ առավոտներ, արնագույն սարսափներ, կորստի ցավի հետ դժվար հաշտության զգացում՝ շատերին է ծանոթ: Կա նաև մահն արհամարհելու հատկություն, որ ամենևին գրքային չէ, իսկական ճշարտություն է: Շատ տղաների գիտեմ, որոնք համակերպվել էին մահվան արհամարհանքին, իրենց իսկ մահվանը, եթե կուզեք, ընկերոջ իսկ կորստի ցավին: Պատերազմը շրջում է մարդու, հանրության ինքնությունը, այն ուժեղների իրական ասք է, կյանքի, սիրո, մութ կրքերի, ստոր բնագոյների, այո՛, իրական ճակատամարտեր..

Կռվի երկրորդ տարվա աշնանը թուրքերը խարխուլվել էին Խաչենի անտառներում: Մեր մի գոհին նրանք եռապատիկ էին տալիս, հայտնի է, բայց գոհը թվաբանակ չունի, մարդկային կյանքը կռվի դաշտում մեծ ողբերգություն է, անդառնալի, ցավոտ հրաժեշտ:

Տասի ջոկատի խելառներից մեկը եղբայրս՝ Աշոտն էր, նա նաև թիրախ էր, կենդանի փաստարկ: Հայրս, հրամանատարի իր խոհեմությունը տղաներին հասցնելու համար, յուրաքանչյուր կռվից առաջ, նախ, Աշոտին էր գրում ցուցակի վերևում, պարզ հասկանալի է ինչու և ինչի համար:

Առհասարակ, հայրս կամավորական կռվի շիտակ մարդկանցից մեկն է, այդ աշնանը տարիքի բերումով կողք է կանգնել, անցել հանգստի: Աշոտը կռվի առաջինն էր, ծանր օրերի վկան ու խիզախ երևելիներից մեկը: Արդեն գոհվել էին Համլետը՝ քեռուս տղան, հորաքրոջս որդիներից մեկը: Ծանր վիրավորվել, արդեն մեկ տարի շարունակ Երևանում ապաքինվում էր քեռիս: Աբովյանցի Մխիթարը՝ մյուս հորաքրոջս որդին, կռվի հերոսներից մեկը, որ Մարտական Խաչի ասպետ էր, պիտի սպանվեր զինադադարից մի ամիս առաջ:

Մի օր առաջադրանքից եկա մարտկոցի փոքրիկ գորանոց, տղաներից մեկը շեմքում ինձ ժպտաց, թե բարի լուր կա, եղբայրդ է ընկերոջ հետ եկել ճակատից քեզ տեսակցելու: Ծաշի նստեցինք, Աղդամի օրերից ավար մնացած կոնյակի սալիրտ բացեցինք, ոչ-

## Գեղarm Աշուն 2016

Խարի պահածո համեղ ապուխտ բացեցինք, կրակի վրա հաց տաքացրինք, սեղան նստեցինք Աշոտի, ընկերոջ ու իմ հերթափոխից ազատ տղաների հետ: Ուրախությունս կարճ տևեց: Աշոտի երեսին հոգի չկար, լուռ էր, վշտոտ, դժգույն: Չէի ճանաչում նրան, խոսքի մեջ հողովույթ չկար: Ընկերը՝ Վալերիկը, ևս լուռ էր: Ինձ թվաց՝ սպասում են, որ պեսզի ես գրույց բացեմ, հարցուփորձ անեմ, բայց արդեն զգացել էի՝ սա սովորական գալ չէ, մի բան այն չէ: Մտահոգվեցի այդ վիճակից, կես տարի եղբորս համարյա չտեսնելու փաստն անգամ ինձ չէր ցրում: Վալերիկի եղբայրն էր զոհվել, փոքրը, նաև հորեղբոր տղան, իրենից շատ ավագը՝ Միերիկը: Չոհվել էր նաև նրա անբաժան, ամենամտերին ընկերը՝ Մատոն, ի ծնե դերասան, քաջասիրտ Առուշանյան Մարտիկը: Որ Իգլայի Վլադիկին ասել է՝ «Նայի, տես, է՛, դեռ մեկի փողը տալու մի հատ սամալյոտ էլ ա խփելու...», այդ կատակի հեղինակ Մարտիկը:

Երկուսն էլ աչքառ, անհանգիստ, դեմքի արտահայտություն ունեին, բայց չէին խոսում: Իմ մարտկոցն էին նայում, մեր զենքերը, կապի միջոցները:

Այն օրերն էին, կրկնում են, երբ ճակատի երկայնքով բարկ բախումներ էին տեղի ունենում, մահտարածամ էր: Տոկալու իսկական, անհույս, երկարուձիգ, անավարտ թվացող ժամանակ էր:

– Չեմ կարող ձեզ ինձ մոտ պահեմ,- առանց բառ ծամծմելու ասացի ես:– Ամեն օր մտահոգ եմ, որ ինչպես կբացվի օրս էստեղ, դուք ճակատում եք, գնդակի երախին, բայց այստեղ ձեզ պահել չեմ կարող: Իմ ձեռքին է, բայց չեմ կարող:

Ճիլոտի մոտ մի անբացատրելի ողբերգական դեպք էր տեղի ունեցել: Քաշաթուխայ օրը մեր տղաների երկու տարբեր ջոկատներ չեն ճանաչում, իրար թուրքի տեղ են ընդունում, մերձահար մարտի բռնվում ու, սխալմամբ, չտեսնված, արյունալի դեպք է տեղի ունենում: Տղաներն իրար կոտորում են, տասի հասնող զոհ:

Տասի ջոկատի տղաները գտնվում էին Ճիլոտի մյուս երեսին: Այս դեպքը նրանց արտին ցավալի նստվածք է տվել: Վախն, ընդհանրապես, մարդկային բնույթի նվաստություն չի, վախը նաև զգուշավորության ակամա, ոչ բնագղային դրսևորում է:

Քանի որ սա խոստովանության ինքնանկարի մի փորձ է, ուզում եմ պարզապես գրել, թե ինչ տեղի ունեցավ հետո:

Աշոտին ու Վալերիկին, ուշքի գալու պատրվակով, ուղարկեցի Երևան, որ փոքր-ինչ հանգստանան, թեև դժվարին հարց էր, ամենուր պարտադիր ծառայության գնալու անհրաժեշտ մթնոլորտ էր: Ամեն քայլի պատկան ծառայությունները կարող էին ստուգել ինքնությունը, համապատասխան միջոցներ ձեռնարկել, բայց սա արդեն երևույթի կարևոր կողմը չէ:

Փաստն այն է, որ նրանք առժամանակ լքելու անվան տակ գնացին կովից, երկրից, հայրենի սահմաններից:

Ամսից քիչ ավել ընդամենը նրանք թափառեցին ուրիշ տեղ: Աշոտն անգամ հասավ Ռուսաստան, հորեղբորս մոտ, ստացավ նրա կշտամբանքը: Ավագ հորեղբայրս վաղուց էր ապրում Տոլյատիում: Կովի տարիներին մի քանի անգամ այցելել է գյուղ, թե՛ օրերին բեռնատար վարձել, ապահով տեղ դուրս բերել գյուղացի տասնյակ երեխաների: Հորեղբայրս բացճակատ իրավունք ուներ մոլորյալ ազգականի երեսին խրատ կարդալ ու ետճանապարհի ինքնաթիռի տոմս առնել:

Վերադառնալուց հետո Աշոտը գալիս է Տասի ջոկատ, անցնում դիրքապահի ու գնդացրորդի իր վաղեմի գործին: Կույրադիքի ցավ ուներ, այդ օրերին նրան հոսպիտալ օպերացիայի են տանում: Շաբաթ էր անցել, վիրակարերը քանդել էին արդեն, բայց բժիշկները խորհուրդ էին տվել դեռ էլի մնալ հոսպիտալում, մինչև վարժ քայլեր իրեն

## Գեղarm Առն 2016

չխանգարի:

Խաչենագետի ներքին, մեծ կամրջի վրա մեծ օպերացիա էր սպասվում, Աշոտը տեղյակ էր, բայց նրան թվում էր՝ կհասցնի իսպառ ապաքինվել, որ ինքն էլ կարողանա մասնակցել: Կույրադիքի բուժվելուն մինչև վերջ չէր սպասելու: Իմացավ, որ երկու օրից մարտի օրն է: Եկավ Տասի գորանոց, անձնական զենքը ստացավ, երեկոյան, ինչպես հարկն է՝ մանրամասն քանդեց, ընկերներից մեքենայի հատուկ յուղից վերցրեց, մաքրեց, որ շուտ քնի, վաղվա կարևոր օրվա համար: Առավոտ շուտ, հրետանու աշխատանքից հետո, մարտի պիտի մտնեին:

Չինադադարի վերջին ամիսներն էին, կարծեմ, էլի ապրիլ: Աշոտը ծանր վիրավորվեց, ականի պայթյունից ցրիվ եկավ նրա աչքը: Նա մեծ կռվի վերջին վիրավորներից էր...

Երբեք ինձ կեսբառ անգամ չի ակնարկել, չի հիշեցրել կռվի այն տարվա աշնան մարտկոցի իմ գրույցի մասին, սակայն միևնույն է, անանձնական, անբացատրելի մի իսկական մրմուռ սրտիս՝ ես ինձ հետ պիտի տանեմ մինչև վերջ:

-Եկե՛ք խմենք երեխաների կենացը,- կռվի ժամանակ, ուրախ օրերին, երբ ճաշին մեկ-մեկ որտեղից-չգիտենք ի հայտ եկած շիշ էինք բացում, ասում էր իմ տարեց զինակից ընկեր Բենիկը:- Ա՛յ, մարդ, թուրքի երեխայի կենացն էլ, երեխան մնում ա երեխա,- լուրջ-լուրջ շարունակում էր նա: Հետո, սեղանի իր մասը՝ ափսե, բաժակից ազատում, դիտլ սարքում, որ դմդմիցնի երգի հետ, ու իր սիրելի կռվի տարիների երկտող մյուզիքը սկսում.

Ծառի կանաչ տերևը, տերևը,

Կանաչ ծառի տերևը, տերևը,

Ծառի կանաչ տերևը, տերևը,

Կանաչ ծառի տերևը, տերևը...

Երկիրն այժմ Տասի ջոկատի տղաների զավակներինն է: Նրանք իրենց կռվի տեսակն ունեն այսօր, իրենց պատերազմի տեսակն ուրիշ է ես անցյալ օրերի խոր բաների մասին ծնողների պատմածից են իմանում:

Համալսարան են սովորում, սիրած աղջիկ-տղա ունեն, անկաշկանդ են ապրում, հայրերից ավելի ազատ ու համառ են, իրենց երկրի ապագային ավելի լավատես են: Հետո, Ֆեյսբուքում էջ ունեն, Ուեյնհաուս են լսում, Ժենյա Լյուբիչ, Հախվերդյան, Յուրիցի հղում արած Ադելի քլիփի տակ երեքական մուգ, շուրթ-պաչ սմայլիկ քոմենթ են թողնում իրար ու՝ շոյվում...

Ու աշունները գալի՛ս, գնու՛մ են...

30.09.2016  
www.granish.org



**ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԱՆՆԱ ԱՆՄԱՏՈՎԱ**

/Ռուսաստան/

\*\*\*

Մի կերպ հաջողվեց քեզնից բաժանվել,  
Մարել կրակը՝ տաղտկալի դարձած:  
Հավե՛տ իմ ոտիս, ժամ է՝ սովորել,  
Որ դուք իսկապես սիրեիք անդարձ:

Ես հո ազատ եմ. խա՛ղ է ինչ որ կա,–  
Գիշերն ինձ մուսան կմխիթարի,  
Իսկ ծեզին փառքը քաշեքաշ կգա,  
Բոժոժի ձայնով ունկիս կթառի:

Աղոթել նույնիսկ չարժե ինձ համար  
Եվ հեռանալիս ետ նայել լռին...  
Ինձ կսփոփի սև քամին համառ,  
Տերևափափը զվարթ կլինի:

Բաժանումն իբրև պարզ կառնեմ ես  
Եվ մոռացումը՝ հանց երանություն,  
Բայց, ասա, արդյո՞ք կհամարձակվես  
Ուրիշին տանել ի խաչելություն:

\*\*\*

Ուրիշի՛ գերի: Ուրիշինն ինձ պետք չէ,  
Իմո՛նց հաշվելն իսկ հոգնեցնում է զուր:  
Ուրեմն հոգուս բերկրանքն ինչի՞ց է,  
Երբ այդ բալագույն շուրթերն եմ տեսնում:

Թո՛ղ անվանարկի և ինձ նախատի –  
Հառա՛չ եմ լսում խոսքերում ցաված:  
Ո՛չ, ինձ մտածել նա չի ստիպի,  
Թե ուրիշին է թունդ սիրահարված:



## Գեղarm Առն 2016

Եվ չե՛մ հավատա, թե կարելի է  
Թաքուն, երկնային մեր սիրուց հետո  
Ծիծաղել նորից, նորից լաց լինել  
Եվ համբույրներս անիծել վրդով:

\*\*\*

Հիվանդանա՛ն մի լավ. գառանցանքում այրող  
Թող հանդիպեմ սիրով բոլորի հետ դարձյալ,  
Ծովեզրյա այգում՝ արևշատ ու քամոտ,  
Չքոսանքի ելնեմ ծառուղիով արձակ:

Մեռյալներն են անգամ հոժար գալու այսօր,  
Եվ աքսորյալներն են ահա հյուրերն իմ տան:  
Բռնած ձեռքը մանկան՝ ուղեկցիր դու ինձ մոտ,  
Այնքան վաղուց է՝ ես կարոտում եմ նրան:

Մշկախաղող կուտեմ սիրելիներիս հետ,  
Սառը գինի կըմպեմ և կնայեմ դողով,  
Թե ջրվեժը ոնց է - հավերժ ճերմակահեր -  
Թափվում թաց հատակին ու քարերին ողորկ:

\*\*\*

Նա կրակոտ էր, խանդոտ էր, քնքուշ,  
Որպես Աստծո լույս նա սիրում էր ինձ,  
Բայց որ չըբեզեր անցյալ ու վերհուշ՝  
Սպանեց մի օր ճերմակ թռչունիս:

Արևամուտին մտնելով իմ տուն՝  
Ասում էր. «Միրի՛ր, երգի՛ր վերստին»,  
Եվ ես թաղեցի թռչունիս խնդուն,  
Որտեղ ջրհորն էր և ծեր լաստենին:

Խոստացա նրան, որ չեմ լացելու,  
Բայց քարանում էր խռով սիրտը իմ,  
Եվ թվում է ինձ միշտ ու ամենուր՝  
Կլսեմ նրա ձայնը քաղցրալիր:

### **ՎԵՐՁԻՆ ԿԵՆԱՅԸ**

Ես խմում եմ ավեր իմ տան,  
Իմ չարաբախտ կյանքի,  
Մեր անփարատ զույգ մենության  
Եվ քեզ համար, անգին,-

## Գեղarm Առն 2016

Ստի համար դավող շուրթիդ  
Եվ աչքերիդ՝ պաղած,  
Որ աշխարհը կոշտ է ու բիրտ,  
Որ չփրկեց Աստված:

\*\*\*

Ինձ խոստացված չես կյանքից և Աստծուց,  
Ոչ էլ իմ թաքուն կանխագագումից:  
Էլ ինչո՞ւ ես դու գիշերները ցուրտ  
Իբրև մի դժբախտ հապաղում շեմիս:

Դուրս չեմ գա՝ ճշա. «Օ՛, միակ իմ սեր,  
Իմ կողքին մնա՝ մինչ ժամը մահու».  
Ես լոկ մեղսալիք լուսնկայի հետ՝  
Կարապի ձայնով գրույց եմ անում:

\*\*\*

Ձեռքերս առա մուգ քողի ներքո...  
«Ինչի՞ց ես այսօր դու այդքան գունատ»:  
- Նրանից է, որ դառը թախժանքով  
Մինչև հարբելը խմեցրի նրան:

Ինչպե՞ս մոռանամ: Դուրս ելավ մի կերպ,  
Բերանն էր ծռվում տանջանքով անկամ...  
Մինչև դարպասը վազեցի՝ իրեն,  
Եվ բազրիքներին չդիպա անգամ:

«Ողջը կատակ էր: Գնաս՝ չե՛մ ապրի»,-  
Ձայն տվի նրան շնչասպառ, հևուն:  
Ժպտաց ինձ խաղաղ ու սարսափելի  
Եվ ապա ասաց. «Մի՛ կանգնիր քամուն»:

\*\*\*

Ես սովորեցի պարզ ու ճիշտ ապրել,  
Նայել երկնքին, աղոթել Աստծուն,  
Մինչև երեկո երկար թափառել,  
Որպեսզի մաշեմ տազնապներս գուր:

Երբ կռատուկն է շրշում ձորակում,  
Ողկույզն է թռչնում նախշուն արոսի՝  
Ես ուրախ-զվարթ երգեր եմ հեզում  
Փուչ ու հիասքանչ այս կյանքի մասին:

## Գեղarm Առն 2016

Վերադառնում եմ: Ափրս է լիզում  
Աղվամազ կատուն մռռոցով մեղմիվ,  
Ու խուլ լճեզրին կրակն է վառվում՝  
Սողաքանի աշտարակին հիր:

Լոկ լռությունն է կտրատում մեկ-մեկ  
Տանիքիս իջած ճիչն արագիլի:  
Եվ եթե հանկարծ իմ դուռը թակես,  
Ինձ թվում է՝ ես նույնիսկ չեմ լսի:

\*\*\*

Եվ քարե բառը իջավ իմ կրծքին,  
Ուր դեռ գարկում էր կյանքը կիսամեռ:  
Հոգ չէ. ինչե՛ր չեն ծանրացել սրտիս,  
Այս մեկն էլ մի կերպ կհաղթահարեմ:

Այսօր գործերս շատ են. դեռ պիտի  
Հիշողությունը մինչև վերջ սպանել:  
Պետք է, որ քարի վերածվի հոգին,  
Պետք է վերստին սովորել ապրել:

Թե չէ... Ետևում իմ պատուհանի  
Տոնի է նման ամռան շունչը տաք:  
Ես վաղուց էի կանխագգում լռին  
Այս պայծառ օրն ու իմ տունը դատարկ:


*/Ռ.Ե.Զ.Վ.Ի.ԵՄ պոեմից, հատված VII/*

Ռուսերենից թարգմանությունները՝  
Ռուզան ՀՈՎԱՍՏԱՓՅԱՆԻ




**Արթուր ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ: «ՁԱՅՆԱՆԿԱՐ»:**  
**Բանաստեղծություններ:**  
**Երևան, «Ակտուալ-արտ» հր., 2016, 72 էջ:**

Գիրքը բանաստեղծ և գրականագետ Արթուր Անդրանիկյանի նոր ժողովածուն է: Տեղ գտած և՛ կանոնիկ, և՛ ազատ չափերով գրված բանաստեղծություններում ցույց է ժամանակակից հայ մարդու հոգին՝ իր հին ու նոր տառապանքով ու ոգորումներով:



**Գրիգոր ՊԸԼՏԵԱՆ. «ԻՆՉ ՈՐ ՉԵՍ ՏԵՍՆԵՐ»:**  
**Բանաստեղծություններ:**  
**Երևան, «Ինքնագիր» հր., 2016, 188 էջ:**

Հատորում տեղ գտած շարքերի առանձին հատվածներ ժամանակին տպագրվել էին տարբեր պարբերականներում և առանձին գրքույկով: Ներկա հրատարակությունը լույս է տեսել ամբողջական տեսքով: Սփյուռքահայ ճանաչված բանաստեղծի նոր գիրքը սիրո հերթական բանաստեղծականացումն է՝ բանաստեղծության հանդեպ տածած մեծագույն սիրով միաժամանակ:



**Եղիազար ՄՈՒՐԱՏԵԱՆ. Երկերի ժողովածու:**  
**Երեք հատորով: Հատոր առաջին:**  
**Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2016, 400 էջ:**

Առաջին անգամ առավելագույնս ամփոփ և հանգամանալի աշխատասիրությամբ լույս են տեսել արևմտահայ կյանքի պայծառ դեմքերից մեկի՝ հայ հանրությանը դեռևս նվազ հայտնի գրող, պատմաբան, մանկավարժ, ազգային գործիչ Եղիազար Մուրատյանի ստեղծագործությունները: Առաջին հատորում, ի մասնավորի, զետեղված են հեղինակի բանաստեղծական և հրապարակագրական խորհրդածությունները, նաև՝ «Ազգային սահմանադրություն Հայոց» վավերագիրը:

Եռահատոր հրատարակությունը կազմել և իրականացրել է Արթուր Անդրանիկյանը՝ առաջաբանով և ծանոթագրություններով:


**Գոհար ՄԱՐԿՈՍՅԱՆ-ԿԱՍՊԵՐ. «ՊԵՆԵԼՈՊԵ»:**  
**Ռուսերենից թարգմանությունը՝ Կարինե Խողիկյանի:**  
**Վեպ: Երևան, Անտարես հր., 2016 թ., 404 էջ:**

Գ. Մարկոսյան-Կասպերը ճանաչված անուն է Էստոնիայում՝ որպես ազգությամբ հայ գրող, ով ստեղծագործում էր ռուսերեն և հաճախ էր անդրադառնում հայկական թեմաներին: Նրա «Պենելոպե» վեպն անցած դարի 90-ական թվականների Երևանի մեկ օրվա քրոնիկոնն է՝ հարազատ քրոջ կենսագրական փաստերի գեղարվեստական շարադրությամբ: Վեպը նախքան հայերեն հրատարակվելը թարգմանվել և լույս է տեսել ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն և հոլանդերեն:



**Мирь литературного перевода.**  
**Զեկուցումների ժողովածու (ռուսերեն):**  
**Մոսկվա, Թարգմանության ինստիտուտ, 2015, 591 էջ:**

Ծավալուն ժողովածուում ընդգրկված են 2014թ. Մոսկվայում կայացած գեղարվեստական թարգմանության թարգմանիչների երրորդ միջազգային կոնգրեսի մասնակիցների թեմատիկ զեկուցումները: 39 երկրից ներկայացած 109 հեղինակների շարքում էր բանաստեղծ և թարգմանիչ Հր. Ալեքսանյանը, որի զեկուցմամբ էլ բացվում է սույն ժողովածուն:



**Հայ ժամանակակից պոեզիա: Անթոլոգիա:**  
**Բանաստեղծություններ՝ պարսկերեն**  
**թարգմանությամբ: Թեհրան, 2016, 110 էջ:**

Գիրքը կազմել, թարգմանել և հրատարակել է պարսկահայ ճանաչված բանաստեղծ և թարգմանիչ Վահե Արմենը: Անթոլոգիայում տեղ են գտել Հրանտ Ալեքսանյանի, Գևորգ Թումանյանի, Խաչիկ Մանուկյանի, Էդուարդ Հախվերդյանի ստեղծագործությունների թարգմանությունները:



**ՏԵՖԵԻ**

/Ռուսաստան/

**ԿՅԱՆՔՆ ՌԻ  
ՕԶԻՔԸ**



Մարդուն թվում է միայն, թե իրերի վրա անսահման իշխանություն ունի: Իսկ երբեմն ամենաաննշան իրը խցկվում է կյանքիդ մեջ, փոխում է այն ու խախտում ճակատագրիդ ընթացքն այն ուղղությու-  
նից, որով որ պիտի գնար:

Օլեչկա Ռոզովան երեք տարի շարու-  
նակ ազնիվ մարդու ազնիվ կին էր եղել: Բնավորությամբ հանգիստ էր, ամաչկոտ, աչքի ընկնել չէր փորձում, ամուսնուն սի-  
րում էր անձնվիրաբար, բավարարվում էր իր համեստ կյանքով:

Բայց ահա մի առիթով Օլեչկան վա-  
ճառատուն էր գնացել ու գործվածքների խանութի ցուցափեղկը զննելիս մի օպա-  
յած կանացի օձիք էր տեսել՝ միջով անց-  
նող դեղին ժապավենով:

Որպես ազնիվ կին, սկզբում մտածել էր՝ «ինչեր ասես չեն հնարի»: Բայց հետո, այնուամենայնիվ, մտել էր ու գնել:

Տանը, հայելու առաջ, փորձեց: Պար-  
զեց, որ եթե դեղին ժապավենը կապում է ոչ թե առջևից, այլ կողքից, մի այնպիսի անբացատրելի բան է ստացվում, որ, հա-  
մենայն դեպս, ավելի շուտ լավ է, քան՝ վատ:

Բայց օձիքը նոր բլուզ պահանջեց: Հներից ոչ մեկը հարմար չէր: Օլեչկան ամբողջ գիշեր տառապեց, իսկ առավոտ-  
յան վաճառատուն գնաց ու ապրուստի փողերով բլուզ գնեց:

Բոլորը միասին փորձեց: Մազում էր, բայց շրջագգեստը տեսքը գցում էր: Օձի-  
քը հստակ ու որոշակիորեն խորը դարսե-  
րով լայն շրջագգեստ էր պահանջում:

Այլևս ծախսելու փող չկար: Բայց ճա-  
նապարհի կեսին հո չես կանգնի:

Օլեչկան գրավ դրեց արձաթեղենն ու ապարանջանը: Միրտն անհանգիստ էր, հոգին՝ խռովված, ու երբ օձիքը նոր կոշիկ պահանջեց, նա անկողին մտավ ու ամ-  
բողջ երեկո լաց եղավ:

Հաջորդ օրը նա ֆոֆոում էր առանց ժամացույցի, սակայն այն կոշիկներով, որ պատվիրել էր օձիքը:

## Գեղarm Առն 2016

Երեկոյան, գունատ ու շփոթված, նա կնկմալով ասում էր իր տատիկին.

–Ես միայն մի բոստով մտա: Ամուսինս ծանր հիվանդ է: Բժիշկը պատվիրեց ամեն օր կոնյակով շփումներ անել, իսկ դա շատ թանկ է:

Տատիկն իրոք բարի էր, և Օլեչկան հենց մյուս առավոտ իր համար օձիքի բնույթին համապատասխան գլխարկ, գոտի ու ձեռնոցներ գնեց:

Հետո նա ավելի ծանր օրեր անցկացրեց:

Նա հերթով բոլոր բարեկամների ու ծանոթների դռներն էր ընկել, լեզու էր թափում, ստեր փչում ու փող խնդրում, իսկ հետո մի անճոռնի գոլավոր բազմոց գնեց, որից թե՛ իր, թե՛ ամուսնու և թե՛ գողաբարո խոհարարուհու սիրտը խառնում էր, բայց որն արդեն քանի օր համառորեն պահանջում էր օձիքը:

Նա սկսեց տարօրինակ կյանք վարել: Ուրիշի կյանքով ապրել: Օձիքի կյանքով: Իսկ օձիքն էլ ինչ-որ անորոշ, խճճված ոճի էր, և Օլեչկան նրան գոհացնելով, բոլորովին գլուխը կորցրել էր:

–Եթե դու անգլիական ես ու պահանջում ես, որ ես սոյա ուտեմ, ուրեմն դեղին ժապավենն ի՞նչ գործ ունի վրադ: Ո՞րն է այս ցոփ ու շվայտ կյանքի իմաստը, որ ոչ մի կերպ գլխիս մեջ չի տեղավորվում, ու որն ինձ գլխիվայր ներքև է գլորում:

Լինելով թույլ ու կամազուրկ էակ՝ նա շուտով թևաթափ եղավ ու տրվեց հոսանքին, որ ճարպկորեն ուղղորդում էր ստոր օձիքը:

Օլեչկան մազերը կտրեց, սկսեց ծխել ու բարձր հռչում էր, երբ խոսքի մեջ երկի-մաստոթյուն էր լսում:

Ինչ-որ տեղ, հոգու խորքում նա դեռ ապրում էր իր դրության սարսափի գիտակցումը, և երբեմն գիշերները, կամ անգամ ցերեկները, երբ օձիքը լվացքի մեջ էր, նա աղի արցունք էր թափում ու աղոթում էր, սակայն ելք չէր գտնում:

Մի անգամ նա նույնիսկ սիրտ արեց ամուսնուն ամեն ինչ խոստովանել, բայց վերջինս որպես ազնիվ մարդ մտածեց, թե դա պարզապես հիմար կատակ էր, ու կնոջը սիրաշահելու համար երկար ծիծաղեց:

Իսկ վիճակն ավելի ու ավելի էր վատանում:

Դուք կհարցնեք, թե ինչո՞ւ Օլեչկայի մտքով չէր անցնում ուղղակի պատուհանից դուրս շարտել այդ օւլայած լաթի կտորը:

Չէր կարող: Եվ զարմանալի չէր: Բոլոր հոգեբույժներին հայտնի է, որ նյարդային ու թուլակամ մարդկանց համար որոշ տառապանքներ, որքան էլ տանջալի լինեն, անհրաժեշտություն են դառնում: Ու նրանք ոչ մի գնով չեն փոխի այդ քաղցր տառապանքը առողջ հանգստության հետ:

Այսպիսով Օլեչկան գնալով ավելի էր թուլանում այդ պայքարում, իսկ օձիքն ավելի էր ամրապնդում իր դիրքերն ու իշխում:

Մի օր Օլեչկային հրավիրեցին մի երեկոյի: Մինչ այդ նա հյուր գնալու սովորություն չուներ, իսկ հիմա օձիքը նրա վզին փաթաթվեց ու գնաց: Այնտեղ օձիքն անամոթության աստիճան ազատ էր պահում իրեն, ու Օլեչկայի գլուխն անընդհատ դեսուդեն էր պտտում:

Ընթրիքի ժամանակ մի ուսանող, որ Օլեչկայի կողքն էր նստած, սեղանի տակ սեղմեց նրա ոտքը:

Օլեչկան զայրույթից կաս-կարմիր կտրեց, բայց օձիքը նրա փոխարեն պատասխանեց.

–Այդքան բա՞ն:

Օլեչկան ամոթով ու վախով լսում ու մտածում էր. «Տեր Աստված, այս ո՞ր եմ ըն-

## Գեղarm Առն 2016

կել»:

Ընթրիքից հետո ուսանողն առաջարկեց տուն ուղեկցել նրան: Օձիքը շնորհակալություն հայտնեց, և մինչև Օլեչկան կհասցնեք հասկանալ, թե ինչն ինչոց է, ուրախությամբ համաձայնեց:

Հագիվ էին հասցրել կառք նստել, երբ ուսանողը կրքոտ շնջաց.

–Միրելի՛ս:

Իսկ օձիքն ի պատասխան գռեհիկ ծիծաղեց:

Այդ ժամանակ ուսանողը գրկեց Օլեչկային ու հենց շրթունքները համբուրեց: Նրա բեղերը թաց էին, և համբույրն ուներ մարինացված ձկան հոտ, որ մատուցել էին ընթրիքին:

Օլեչկան ամոթից ու վիրավորանքից հագիվ զսպեց արցունքները, իսկ օձիքը լռիւարբար շրջեց նրա գլուխն ու նորից ծիծաղեց.

–Այդքան բա՞ն:

Հետո ուսանողն ու օձիքը գնացին ռեստորան՝ ռումինական երգեր լսելու: Մտան առանձնասենյակ:

–Բայց այստեղ ոչ մի երաժշտություն էլ չկա,- գայրացավ Օլեչկան:

Բայց ուսանողն ու օձիքը նրա վրա ուշադրություն չէին դարձնում: Նրանք լիկյոր էին խմում, գռեհիկ բաներ խոսում ու համբուրվում:

Օլեչկան տուն վերադարձավ, երբ արդեն առավոտ էր: Դուռը բացեց ինքը՝ ազնիվ ամուսինը:

Նա գունատ էր, ձեռքին գրավատան անդորրագրերն էին, որ գտել էր Օլեչկայի դարակից:

- Որտե՞ղ էիր: Ես ամբողջ գիշեր չեմ քնել: Որտե՞ղ էիր:

Օլեչկայի հոգին թայրտաց, բայց օձիքը ճարակորեն իրենը քշեց:

- Որտե՞ղ էի: Ուսանողի հետ թրև էի գալիս:

Ազնիվ ամուսինը ցնցվեց:

- Օյա, Օլեչկա, ի՞նչ է կատարվում քեզ հետ: Ասա՛, գրավ դնելն ինչի՞նչ էր պետք: Սատովներից ու Յանիներից ինչո՞ւ էիր պարտք արել: Փողերն ի՞նչ ես արել:

- Փողե՞րը: Բռռուփուչ եմ արել:

Ու ձեռքերը գրպանները դնելով՝ բարձր սուլեց, ինչպես առաջներում երբեք չէր կարողացել: Իսկ այդ հիմար արտահայտությունը՝ քռռուփուչ անելը, ե՞րբ էր օգտագործել: Եվ ի՞նքն էր ասողը:

Ազնիվ ամուսինը թողեց նրան և ուրիշ քաղաք տեղափոխվեց:

Բայց ամենացավալին այն էր, որ նրա հեռանալու հաջորդ օրն իսկ օձիքը լվացքի մեջ կորավ:

Խոնարհ Օլեչկան աշխատում է բանկում:

Նա այնքան համեստ է, որ շիկնում է նույնիսկ «համբերել» բառից, որովհետև այն մտան է «համբուրել» բառին:

- Իսկ օձիքն ինչ եղավ,- կհարցնեք դուք:

- Ի՞նչ իմանամ,- կասեմ ես:- Տվել էին լվացարարուհուն, նրան էլ հարցրեք:

Էհ, կյանք...

Ռուսերենից թարգմանեց  
Աշխեն ԲԱԽՉԻՆՅԱՆԸ



# Խ Ճ Ա Ն Կ Ա Ր

## Գրականության Նոբելյան մրցանակը շնորհվեց Բոր Դիլանին

Գրականության 2016 թվականի Նոբելյան մրցանակն ստացել է 75-ամյա ամերիկացի երաժիշտ եւ հեղինակ կատարող Բոր Դիլանը,- հայտարարել է Շվեդիայի ակադեմիայի մշտական քարտուղար Սառա Դանիուսը: Նրա խոսքով՝ Դիլանը պարգևին արժանացել է «ամերիկյան երգի մեծ ավանդույթում պոետական կերպարների ստեղծման» համար:




Բոր Դիլանը ծնվել է 1941 թվականի մայիսի 24-ին Մինեսոտայի նահանգի Դուլոք քաղաքում: Երաժշտական գործունեությունից բացի, նա նաեւ հայտնի է որպես նկարիչ եւ կինոդերասան: Նրա երգերից շատերը, ինչպես, օրինակ, Blowin' in the Wind եւ The Times They Are a-Changin' -ը, դարձել են ԱՄՆ-ում քաղաքացիական իրավունքների շարժման եւ հակապատերազմական շարժման հիմները:

2008 թվականի ապրիլին Բոր Դիլանն ստացել է Պուլիտցերյան մրցանակ: Նա արժանացել է նաեւ Պատվո լեգեոնի շքանշանի եւ Ազատության նախագահական մեդալի, որն ԱՄՆ-ի բարձրագույն քաղաքացիական պարգևներից մեկն է, հաղորդել է «Ինտերֆաքս»-ը: (*Sh'u nash էջ 99*):

## Ստամբուլում հրատարակվել է Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի» հայտնի վեպի թուրքերեն թարգմանությունը

Ստամբուլում գործող հայկական «Արաս» հրատարակչությունը հրատարակել է Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի» հայտնի վեպի թուրքերեն թարգմանությունը:



Գիրքն արդեն տեղ է գտել «Արաս»-ի պաշտոնական կայքում, որտեղից էլ գնորդները կարող են այն պատվիրել համացանցի միջոցով:

Վեպը Սփյուռքի արձատախիլ հայության պատմությունն է, Փարիզ ընկած «Արևելքցի տոոց»՝ պոլսահայ երիտասարդների ողբերգական կյանքի պատմությունը:

Շահան Շահնուրը վեպը գրել է 1927-1929 թթ.-ին, այն հենց նույն տարում էլ լույս է տեսել. վեպը՝ առաջին անգամ որպես թերթոն, մաս առ մաս լույս է տեսել Շավարշ Միսաքյանի «Հառաջ» թերթում (1929 թ., մայիս-սեպտեմբեր), ապա մեծ հայրենասեր Վ. Իսպիրյանի ծախսերով հրատարակվել է առանձին գրքով:

**Իձյե ԹԱՆ**

/Չինաստան/

**ՄԱՐԴՈՒ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

/հատվածներ «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական մշակույթը» գրքից/



...Որո՞նք են ժամանակակից մարդկային հասարակության հիմնախնդիրները: Իմ կարծիքով՝ դրանք երեքն են. առաջինը մարդու և բնության հարաբերությունն է, որը բավական լուրջ հակասություն է պարունակում: Երկրորդը մարդու և մարդու հարաբերությունն է, ներառյալ հարաբերությունը մարդու և եսի (մարդ և հասարակություն), ազգերի և ժողովուրդների միջև: Երրորդ խնդիրը մարմնի և մտքի հարաբերությունն է: Մարդկության առաջ ծառայած խոշորագույն խնդիրը մարդու և բնության, մարդու և մարդու (մարդ և հասարակություն) և մարդու ներքին բախումն է: Այս հիմնախնդիրները կապված են «ներդաշնակ հասարակություն» կառուցելու և մարդկային հասարակության «խաղաղ գոյակցության» գաղափարի հետ: Իմ կարծիքով՝ երեք փիլիսոփայական հիմնավորումները՝ «բնության և մարդու միասնությունը», «եսի և այլոց միասնությունը» և «մարմնի և մտքի միասնությունը», կարող են որոշ արժեքավոր մոտեցումներ և կարևոր փիլիսոփայական ռեսուրսներ տրամադրել երեք բախումները լուծելու համար: Իհարկե, դա չի նշանակում, որ այս խնդիրները կարելի է լուծել միայն կոնֆուցիականության միջոցով:

Մուտք գործելով քսանմեկերորդ դար՝ մենք տեսնում ենք, որ նախորդ դարը սրընթաց զարգացման, առաջադիմության, բայց նաև ողբերգական դար էր, լի բախումներով ու պատերազմներով: 100 տարվա ընթացքում տեղի ունեցավ երկու համաշխարհային պատերազմ, և հարյուր միլիոնից ավելի մարդ մահացավ ոչ թե բնական

մահով, այլ պատերազմի հետևանքով: Մի քանի դար առաջ մարդկության կողմից ստեղծված բազմաթիվ մշակութային նմուշներ ոչնչացվեցին: Վերջին հարյուր տարիներին Չինաստանը շատ է տառապել, բայց նաև մեծ առաջընթաց է ապրել: Այս ընթացքում մենք գրեթե ամբողջությամբ ժխտել ենք մեր մշակութային ավանդույթը և երկար ժամանակ նաև հրաժարվել ենք յուրացնել որոշ առաջադեմ արևմտյան մշակույթներ: Սա հանգեցրել է հասարակական խնդիրների, ինչպիսիք են «հավատի ճգնաժամը», «բարոյական դատարկությունը», «շրջակա միջավայրի աղտոտումը» և «փողի երկրագունդը»: Ինչպե՞ս պետք է լուծենք այս խնդիրները: Ես, և ոչ միայն ես, այլև այլ գիտնականներ, կարծում ենք, որ այս խնդիրները լուծելու համար կարող ենք փիլիսոփայական ռեսուրսներ գտնել վերջին հինգ հազար տարիներից: Բազմաթիվ գիտնականներ փնտրել են այս խնդիրների պատասխանները: Անշուշտ, մենք չպետք է մտածենք, որ մեր միտքն ու մշակույթը կարող են լուծել բոլոր խնդիրները: Եթե մտածենք, որ միտքն ու մշակույթը ի գործ են լուծել բոլոր խնդիրները, սա կհանգեցնի «մշակութային դետերմինիզմի»: Այդպիսով կմոտենանք այն համոզմունքին, որ գիտությունն ու տեխնոլոգիան կարող են լուծել մարդկային և հասարակական խնդիրները՝ հանգեցնելով «գիտության ամենագորության», «գիտականության» ծուղակին: Հետևաբար, երբ քննարկում ենք «կոնֆուցիականության նշանակությունը», պարզապես ցանկանում ենք գտնել ռեսուրսներ ու մոտեցումներ, որոնք կարելի է կիրառել ժամանակակից մարդկային և հասարակական խնդիրների նկատմամբ և դրանք լուծելու համար:

### Մարդու և բնության հարաբերությունը

1992 թվականին 1575 գիտնականներ, որոնց թվում կային Նոբելյան դափնեկիրներ, ստորագրեցին «Աշխարհի գիտնականների զգուշացումը մարդկությանը», որը վերաբերում էր «Մարդու և բնության» բախմանը և հաստատում էր, որ մարդ արարածներն ու բնությունը ընդհարման եզրին են: Իմ կարծիքով՝ զգուշացումն ասիականում էր, որ մարդկային տեսակը կհայտնվի լուրջ ճգնաժամի մեջ, եթե աշխարհը շարունակի այսպես ապրել: Առաջադեմ գիտությունն ու տեխնոլոգիան կարող են օգտակար լինել մարդկանց, բայց որպես բնության մաս՝ մարդիկ ոչ միայն տիրապետում են բնությունը ոչնչացնող բազմաթիվ գործիքների, այլև զենքի, որը կարելի է օգտագործել՝ բնությունը նվաճելու գործընթացում մարդ արարածներին ոչնչացնելու համար: Բնության հավերժական շահագործումն ու ոչնչացումը հանգեցնում է այնպիսի հանգամանքների, ինչպիսիք են բնական ռեսուրսների վատնումը, օզոնային շերտի սպառումը, օվկիանոսների գոլորշացումը, շրջակա միջավայրի աղտոտումը, մարդկային բնակչության անակնկալ և կտրուկ աճը և էկոլոգիական անհավասարակշռությունը: Այս ամենի հետևանքը «ներդաշնակ բնության» և «մարդու ու բնության ներդաշնակ հարաբերությունների» ոչնչացումն է. այս պայմանները սպառնում են մարդկության գոյությանը: Այս իրավիճակը կապված է արևմտյան փիլիսոփայության սուբյեկտ-օբյեկտ երկատման հետ: Օրինակ, «Արևմտյան փիլիսոփայության պատմություն» աշխատության մեջ Ռասելը գրում է. «Դեկարտի փիլիսոփայությունը... եզրափակեց, կամ գրեթե եզրա-

## Գեղarm Աշուն 2016

փակեց մտքի ու մարմնի երկվապաշտությունը (դուալիզմ), որը սկսվեց Պլատոնից և զարգացավ, գերազանցապես կրոնական պատճառներով, քրիստոնեական փիլիսոփայության կողմից... Դեկարտյան համակարգը ներկայացնում է երկու զուգահեռ, բայց անկախ աշխարհ՝ մտքի և մարմնի, որոնցից յուրաքանչյուրը կարելի է ուսումնասիրել՝ առանց մյուսը վկայակոչելու (Ռասել 1972, էջ 567): Սա նշանակում է, որ արևմտյան փիլիսոփայության մեջ երկար ժամանակ ոգին և մարմինը համարվել են անկախ ու մեկուսացած: Հետևաբար, փիլիսոփայության այս տեսակը հիմնվում է «արտաքին հարաբերության» վրա («մարդ» և «բնությունը» երկու միմյանց հետ կապ չունեցող գործոններ են), կամ կարելի է ասել, որ նրանք «միտքը» և «մարմինը» համարում են երկու անկախ երկակի գործոն, և երբ արևմտյան փիլիսոփաներն ուսումնասիրում են մեկը, չեն անդրադառնում մյուսին (բայց արևմտյան փիլիսոփայությունը փոխվել է օրինակ, Ուայթհեդը իր «Գործընթացային փիլիսոփայություն» աշխատության մեջ ավանդական մտածողությամբ քննադատում է երկվապաշտությունը): Սա նշանակում է, որ արևմտյան միտքը ներառում է «սուբյեկտ-օբյեկտի» երկվապաշտությունը («միտք» և «մարմին» կամ «բնություն» և «մարդ»), որը զալիս է Պլատոնից դեռևս Առանցքային դարաշրջանում: Բայց չինական փիլիսոփայությունը տարբերվում է, քանի որ հիմնված է «Երկնքի և մարդու միասնության» վրա (սուբյեկտն ու օբյեկտը կապված են և չեն կարող բաժանվել):

Չինական փիլիսոփայության սկզբնաղբյուրներից մեկը «Ձոռու Ին» է ( «Փոփոխությունների գիրքը»): 1993 թվականին Հուլբեյ նահանգի Չին Սեն

վայրում հայտնաբերված Չու բամբուկե մագաղաթների վրա կարևոր հաղորդագրություն կա: Այն հաստատում է (Չինմեն 1998, Յույցուն ի 语丛一)։

«Ծեսերը» նկարագրում են հաղորդակցության ձևերը:

«Երաժշտությունը» վայելելու կամ կրթելու համար է:

«Պատմության գիրքը» [բնագրային]:

«Ներբողների գիրքը» անցյալի ու ներկայի բանաստեղծությունների ժողովածու է:

«Փոփոխությունների գրքի» նպատակն է միմյանց հետ հարաբերել բնության *Դաոն* և մարդու *Դաոն*:

Գարնան և աշման տարեգրքերը անցյալի ու ներկայի գործերի ժողովածու են:

Այս բամբուկե մագաղաթները ստեղծվել են մթա շուրջ 300 թվականին: Նրանց վրա գրված է. «Փոփոխությունը հաղորդակցվում է բնության Դաոյի և մարդու Դաոյի հետ»: Սա նշանակում է, որ «Փոփոխությունների գիրքն» ուսումնասիրում է Երկնքի Դաոն (Երկնքի կամ բնության օրենքը) և մարդու *Դաոն* (կարգը հասարակության մեջ), և թե ինչու են դրանք կապված իրերի բազմակողմանի ուսումնասիրությամբ: Այսինքն՝ հին ժամանակներում մարդիկ արդեն հասկացել էին, որ «բնությունն» ուսումնասիրելիս պետք է նկատի առնել «մարդուն», իսկ «մարդուն» ուսումնասիրելիս՝ նաև «Երկնքը»: Սա է «բնության և մարդու» միասնությունը: Իրականում, սա արդեն բացահայտվել էր Կոնֆուցիոսի «Տարեգրքում»: Ցի Գունն ասում էր. «Չեն լսել, թե Վարպետ Կոնֆուցիոսն ինչպես է խոսում բնության և բնության Դաոյի մասին (Կոնֆուցիոս 1980, Գունյե Չան): Չնայած Ցի Գունը երբեք չէր լսել, թե Կոնֆուցիոսն ինչպես է խոսում

## Գեղարմ Աշուն 2016

«բնության և բնության *Դառյի* մասին», նա առաջ քաշեց այս հիմնախնդիրը, որը ցույց է տալիս, որ մեծ հետաքրքրություն կա «մարդկային էության» (մարդ) և «Երկնքի Դառյի» (բնություն) նկատմամբ: Մարդկային հասարակության զարգացումն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ մարդիկ ի սկզբանե բախվել են «մարդու» և «բնության (Երկնք)» հարաբերությանը, որովհետև մարդ արարածները չեն կարող ապրել առանց «բնության»: Հետևաբար, հին չինացիները միշտ ուշադրություն են դարձրել «մարդու և բնության հարաբերությանը»:

Իհարկե, տարբեր են «մարդու և բնության հարաբերությունները» կարգավորելու մոտեցումներն ու մեթոդները: Որոշ գիտնականներ կարծում են, որ մարդը պետք է ենթարկվի բնությանը. այլ գիտնականների կարծիքով՝ մարդը պետք է օգտվի «բնությունից»՝ մարդուն ծառայելու համար, «ճանաչի բնությունը և կիրառի այն՝ մարդկանց ծառայելու համար»: Իսկ ոմանք էլ հավատացած են, որ «թե՛ մարդը, թե՛ բնությունը ունեն սեփական օրենքներն ու առավելությունները»: Բայց հիմնական կոնֆուցիական մտածողները հավատում էին «մարդու և բնության միասնությանը»: Մարդու և բնության այսպես կոչված միասնությունը նշանակում է, որ «բնությունն» անբաժան է «մարդուց», իսկ մարդը՝ բնությունից:

Ինչու՞ գոյություն ունի նման համոզմունք: Սա երկար պատմություն ունի: Ինչպես գիտենք, «Փոփոխությունների գիրքն» ի սկզբանե գուշակությունների գիրք էր, որը կանխատեսում էր երջանկությունը կամ դժբախտությունը, բարի կամ չար բախտը: Ո՞ւմ էին խնդրում գուշակել մարդկանց բախտը: *Թյանհին* «*Երկնք*»: «Մարդը» թյանհին հարցնում է բարի կամ չար բախտի և երջան-

կության ու դժբախտության մասին: «Փոփոխությունների գիրքն արձանագրում էր այս պատասխանները, այդ պատճառով էլ վերածվեց «Երկնքի» (թյան) և «մարդու» հարաբերությունների մասին գրքի: Հետագայում այս գրքի զանազան մեկնաբանություններով կազմվեց նոր գիրք՝ «*Իջուան*» («Փոփոխությունների գրքի հավելվածներ»): Նրանցից մասնավորապես մեկը՝ «Լրամշակումները», կարելի է համարել «Փոփոխությունների գրքի» փիլիսոփայական մեկնաբանություն: «Փոփոխությունների գիրքը» լուծում է «Երկնքի» և «մարդու» հարաբերությունների խնդիրը. այդ դեպքում ինչպիսի՞ն է «Երկնքի» և «մարդու» հարաբերությունը: «Լրամշակումները» պատասխանում են այս հարցին: Ըստ գրքի՝ «Փոփոխությունների գիրքը» ներառում է ամեն ինչ: Գիրքը վերաբերում է ոչ միայն «Երկնքի *Դառյին*», «Երկրի *Դառյին*», այլև «մարդու *Դառյին*»: Չնայած «Երկնքի Դառն» դրսևորվում է ինի և յանի միջոցով, «Երկրի *Դառն*» ներկայացվում է՝ որպես «կարծրություն» և «փափկություն», իսկ «մարդու *Դառն*» դրսևորվում է՝ որպես «բարեգործություն» և «արդարամտություն»: Երեքի սկզբունքը միավորվում է. երեքը ցյանի և կունի դրսևորումն է: Կոնֆուցիական Ջան Ցայը Սուն դինաստիայից ասել է. «Երկնքը, երկիրն ու մարդը ունեն ցյանի և կունի Դառ: Փոփոխությունը թափանցում է Երկնք, երկիր և մարդու մեջ, իսկ ինն ու յանը նրա նյութն են (ցի), կարծրությունն ու փափկությունը՝ նրա ձևը, իսկ բարեգործությունն ու արդարամտությունը՝ էությունը» (Ջան Ցայ 1978, էջ 235): «Փոփոխությունների գրքի» օրինակից, որը միավորում է Երկնքը (երկիր) և մարդուն, տեսնում ենք, որ Երկնքն ու մարդը փոխկապակցված են: Ցյանն ու կունը օգտա-

գործվում են «Երկնքի», «Երկրի» և «մարդու» միասնությունը նկարագրելու համար, որովհետև «Փոփոխությունների գրքի հավելվածում» ցյանը ցույց է տալիս եռանդուն շարժում, իսկ կունը՝ մեծահոգություն և առաքինություն: Հետևաբար, «մարդը» հատուկ պատասխանատվություն ունի «Երկնքի և Երկրի համար» (Երկինք): «Մարդը» պետք է իմանա, թե Երկինքն ու Երկիրն ինչ են են պահանջում «ինքնակատարելագործման մշտական ձգտման» համատեքստում և «մեծահոգաբար պարունակի կամ ամբողջացնի երևույթները»: Ձան Ցայն ասում է. «Երկնքի Դառն» և «մարդու Դառն» նման են իրար «բանականության կամ ճշմարտության» իմաստով: Եթե ուզում ենք իմանալ մարդ լինելու սկզբունքը, պիտի ճանաչենք «Երկնքի ու Երկրի» Դառն, իսկ եթե գիտենք «Երկնքի և Երկրի» ճշմարտությունը, կիմանանք «մարդու» (հասարակության) սկզբունքը կամ օրենքը:

Սուն դինաստիայի կոնֆուցիականները զարգացնում էին «բնության և մարդու միասնության» գաղափարը: Օրինակ, Չեն Ին գրում է. «Արդյո՞ք կարելի է ճանաչել մարդու Դառն, բայց չճանաչել Դառնի էությունը: Դառն մեկն է: Արդյո՞ք ճիշտ է, որ մարդու Դառն և բնության Դառն տարբեր են» (Չեն և Չեն Ի 2004, «Էր Չեն իշու», հատոր 18): Ըստ կոնֆուցիական մտածողության՝ «բնությունը» և «մարդը» անբաժանելի են, նրանց հարաբերությունը չի կարելի համարել արտաքին և հակադիր, և մենք չենք կարող ուսումնասիրել երկուսից միայն մեկը: Ջու Սին ավելի հստակ էր արտահայտում այս գաղափարը: Նա ասում էր. «Բնությունը մարդն է, մարդը՝ բնությունը: Ծննդյան պահին մարդն առաջանում է բնությունից, իսկ ծննդից հետո բնությունը նույնպես

մարդկային է դառնում» (Ջու Սի 1990, Հատոր 17): Ջու Սիի կարծիքով՝ «բնությունը» չի կարող լինել «մարդուց» անկախ, մարդը՝ «բնությունից»: Ծննդի պահին մարդիկ գալիս են բնությունից, բայց երբ մարդ արարածը ձևավորվում է, սկսում է մարմնավորել «բնության» Դառն (Երկինք): Այլ կերպ ասած՝ «մարդ արարածները» պատասխանատու են «բնության» համար: Եթե չլինեին «մարդ արարածներ», ինչպե՞ս կմարմնավորվեր «բնության» աշխույժ մթնոլորտը, ինչպե՞ս կմարմնավորվեր «ավելի ուժեղ լինելու հավերժական ձգտումը», «մեծահոգաբար երևույթները պարունակելու կամ ամբողջացնելու» երկրի ձգտումը: Ուրեմն մարդիկ պետք է իմանան, որ «հանուն Երկնքի և Երկրի միտք կամ սիրտ արարելը» և «հանուն մարդկանց կյանք արարելը» նույնն են, և դրանք անհնար է առանձնացնել: Հետևաբար, «Յուցուն Գոդյան Ջուծյանում» 郭店竹简《语》一 («Գո Դյանի բանբուկե մագաղաթների առաջին ժողովածու») գրված է. «Դառնի կարելի է տիրապետել միայն այն բանից հետո, երբ իմանաս, թե ինչ է անում Երկինքը (բնություն), և ինչ է անում մարդը: Եթե գիտենք Դառն, ապա գիտենք, թե ինչ է ճակատագիրը» (Չինմեն 1998): Եթե գիտենք «բնության (Երկնքի) Դառն» (բնության օրենքը) և մարդու Դառն (մարդկային հասարակության և կյանքի օրենքը), ապա կարող ենք իմանալ միասնական սկզբունքը կամ «բնության կամ Երկնքի» և «մարդու», «բնության կամ Երկնքի» (բնության կամ Երկնքի Դառ) և «մարդու» («մարդու Դառն», հասարակություն) զարգացումը: Կոնֆուցիոսն ասում է. «Անհրաժեշտ է իմանալ Երկնքի հանձնագրած ճակատագիրը կամ բախտը» (Կոնֆուցիոս 1980, Վեյջեն): Նա նկատի ունի, որ «մարդը» պիտի իմանա «բնության

## Գեղարմ Աշուն 2016

կամ Երկնքի» մասին: Կոնֆուցիոսը նաև ասում է. «Մարդը պիտի մեծարի բախտը կամ ճակատագիրը, որ հանձնագրել է Երկնքը կամ բնությունը (Նույն տեղում, «Ձիշի») և չի կարող հենց այնպես ոչնչացնել «բնության կամ Երկնքի» զարգացման օրենքը»: Մի չինացի փիլիսոփայի կարծիքով՝ «բնությունը կամ Երկնքը» երբեք անկենդան չէ: Ավելին, այն օրգանական է, մշտապես զարգանում է, աճում, միավորվում մարդու հետ՝ որպես մեկ ամբողջություն: Տարածված տեսակետ կա, որ «մարդուն անհնար է բաժանել «Բնությունից կամ Երկնքից», բայց մարդն ինչու՞ է «բնությունը կամ Երկնքը» համարում հակադիր օբյեկտ և անխոհեմաբար ոչնչացնում և նվաճում «բնությունը»: Պատճառն այն է, որ նա «բնության» և «մարդու» հարաբերությունը համարում է արտաքին և չգիտի, որ «բնության» և «մարդու» հարաբերությունը մտերմիկ է ու ներքին: «Ներքին հարաբերությունը» տարբերվում է «արտաքին հարաբերությունից», որովհետև «արտաքին հարաբերությունը» ցույց է տալիս, որ «բնությունը» և «մարդն» անկախ են և կապակցված չեն: Բայց «ներքին հարաբերությունը» ցույց է տալիս, որ «բնությունը» և «մարդը» սերտ հարաբերության մեջ են: Հետևաբար, «բնության և մարդու միասնությունը» հին չինական փիլիսոփայական հիմնավորում է: Այն ոչ միայն չինական կոնֆուցիական մտքի անկյունաքարն է, այլև մի պնդում, որը պիտի շարունակաբար վերամեկնաբանվի մարդկային հասարակության կողմից: Երբ ուսումնասիրում ենք մարդ արարածների խնդիրները և մեր հարաբերությունը բնության հետ, պետք է մշտապես հիշենք «բնության և մարդու միասնության» գաղափարը, և խորացնենք «բնության» և «մարդու»

միջև սերտ հարաբերությունների մասին քննարկումը: Մարդկային հասարակությունը երկար ժամանակ անուշադրության է մատնել «բնության» և «մարդու» հարաբերությունը. ուրեմն հիմա բնությունը պատժու՞մ է մեզ: Ինչու՞ ենք ընտրել բնության հետ բախումնային հարաբերությունների տարբերակը:

«Բնության և մարդու միասնության» գաղափարը (միտքը՝ «ին 易 (փոփոխություն) նպատակ ունի բնության Դաոն հաղորդակցել մարդու Դաոյի հետ»), որը ծագել է «Իժինից», մտածողության ձև է, որը լուծում է ներկայիս բախումը բնության և մարդու միջև: Այն կարող է ոգեշնչել մեզ հետևյալ երեք առումներով.

Նախ, «բնության և մարդու միասնությունը» որպես մտածողության կերպ, պնդում է, որ «մարդը» չպետք է ընկալվի՝ որպես «բնության» հակադրություն, որովհետև «մարդը» բնության մասն է և «ծնունդ է առել բնությունից»: «Բնության» ոչնչացմանն ուղղված գործողությունները նույնն են, ինչ «մարդու» ոչնչացմանն ուղղված գործողությունները, և «բնությունը» կպատժի «մարդուն»: Հետևաբար, «մարդը» պետք է «ճանաչի» (ճանաչել բնությունը՝ նրանից խելամտորեն օգտվելու համար) և «մեծարի բնությունը»: (Մարդը պիտի մեծարի բնությունը և այն պաշտպանելու գործը համարի իր սուրբ պարտականությունը): Այժմ մենք ընդգծում ենք միայն «բնությունը ճանաչելը» և կուրորեն օգտագործում ենք «գիտելիքը»՝ «բնությունը» շահագործելու, նվաճելու և նույնիսկ ոչնչացնելու համար: Բայց մարդը չգիտի, որ նախ պետք է մեծարի «բնությունը»: Սա միանշանակ «գիտականության» (գիտության և տեխնոլոգիայի ամենագորություն) ծայրահեղ դրսևորում է: «Գի-

տականությունը» հերքում է «բնության կամ Երկնքի» սրբությունը, ապա հերքում է «բնության կամ Երկնքի» անդրանցականությունը: Այսպիսով, մարդասիրական ոգին կորցնում է իր հիմքը: «Բնության և մարդու միասնության» չինական միտքը պնդում է, որ «բնությունը ճանաչելը» հավասար է «բնությունը մեծարելուն»: Եթե «ճանաչում ենք բնությունը», բայց «չենք մեծարում», ապա «բնությունը» համարում ենք անկենդան և այդպես էլ չենք գիտակցում, որ այն օրգանական է, կենդանի ու աշխույժ: «Բնությունը մեծարելը», բայց «չճանաչելը» հանգեցնում է նրան, որ մարդը «բնությանը կամ Երկնքին» վերաբերվում է՝ որպես «մարդուց» դուրս առեղծվածային ուժի և թույլ չի տալիս, որ մարդը ստանա բնության իրական շնորհը: «Բնությունը ճանաչելը» համակցվում է այն «մեծարելու» հետ, և սա «բնության և մարդու միավորման» կարևոր դրսևորում է, որն արտացոլում է «մարդու» ներքին պարտավորությունը «բնության» հանդեպ: «Բնության և մարդու միասնություն» փիլիսոփայական պնդումը խորհրդանշում է «բնության» և «մարդու» միջև բարդ հարաբերությունը, որը ոչ միայն ներառում է, թե «մարդն» ինչպես պիտի հասկանա «բնությունը», այլև այն, որ «մարդը» պիտի մեծարի «բնությունը»՝ հանուն նրա սրբության: Սա է պատճառը, որ չինական կոնֆուցիականությունը չի դարձել համընդհանուր կրոն (ինչպես բուդդայականությունը և քրիստոնեությունը), բայց կոնֆուցիականությունը որոշակի «կրոնականություն» է պարունակում: Կոնֆուցիական միտքը կրոնական գործառույթ ունի Զինաստանում, այսինքն՝ կոնֆուցիականները կարծում են, որ «մարդու» ներքին բարոյականությունը, որը հանձնագրվել է «բնության» կողմից,

բարոյական զարգացման կարիք ունի՝ «անդրանցականությունը», այսինքն՝ «սովորական մարդուց իմաստունի մակարդակի անցումը» իրագործելու համար: Դետևաբար, «բնության և մարդու միասնությունը» ոչ միայն «բնության» ճանաչումն է, այլև կյանքի ոլորտ, որին «մարդը» պիտի ձգտի: Պատճառն այն է, որ թյանը (բնություն, Երկինք) նշանակում է ոչ միայն բնություն, այլև «Երկինք»՝ սրբության իմաստով: «Մարդկային էությունը» պետք է հասնի անդրանցականության ոլորտին, որը հավասար է թյանին (Երկինք, բնություն): Այս իմաստով, «մարդն» ու «բնությունը» հակադրության մեջ չեն: Փոխարենը, «մարդը» միավորվում է «Երկնքի ու Երկրի» հետ: Օրինակ, Մենցիոսն ասում է. «Այն տեղի մարդիկ, ուր այցելել է վերադասը, կկրեն նրա ազդեցությունը և կկրթվեն: Այն տեղը, որտեղ վերադասն ապրել է, հրաշագործ ազդեցության տակ է, իսկ իմաստունը գործում է Երկնքի ու Երկրի հետ» (Մենցիոս 1980, «Չինսին շան»): Այս կերպ, վերադասը գիտակցում է անձնական անդրանցականությունը: Ստածողության այս ձևը ոչ միայն օգնում է մեզ ազատվել «Երկնքի ու մարդու բաժանման» խնդրից (Երկնքի ու մարդու թշնամությունը), այլև բացում է նոր ճանապարհ, որով մարդ արարածները կհասնեն իդեալական մարդկային ոլորտի: Երկրորդ, մենք չենք կարող «Երկնքի (բնություն)» և «մարդու» հարաբերությունը համարել արտաքին հարաբերություն, որովհետև «Երկինքը մարդ է, մարդը՝ Երկինք», ուստի «Երկինքն» ու «մարդն» ի սկզբանե կապված են: «Մարդը» չի կարող առանձնանալ «Երկնքից» և չի կարող գոյատևել առանց «Երկնքի»: «Երկինքը» չի կարելի առանձնացնել «մարդուց». առանց «մարդու» «Երկնքի» բանակա-



## Գեղarm Առն 2016

նությունը չի կարող մարմնավորվել, ուստի ո՞վ կարող է հասկանալ «Երկնքի Դառն»: «Երկնքի» և «մարդու» հարաբերությունը հասկանալը բնորոշ է չինական փիլիսոփայությանը: Այս հարցի շուրջ Վան Ֆուչին կարևոր դիտարկում է արել: Ուսումնասիրելով հնագույն գիտնականների տեսությունները՝ նա գալիս է այն եզրակացության, որ նրանք ընդամենը ընկալել էին Ցին դինաստիայից առաջ գոյություն ունեցող կոնֆուցիականության երևույթների միայն արտաքին կողմը և կարծել, որ «Փոփոխությունների գիրքը» միայն «Երկնքի Դառն» մասին է, բայց չգիտեին, որ Յան դինաստիայից ի վեր «Փոփոխությունների գիրքը» ուներ «մարդու Դառն» արմատներ կամ հիմք (Վան Ֆուչի, Յատոր 9, Ցյանչեն շան): Ջոու Դունիի «թայծի նկարի» ուսմունքը «Երկնքի և մարդու միասնության» արմատների (ծագման) մասին է, որը բացատրում է, որ մարդու ծնունդը «Երկնքի Դառն» փոփոխության արդյունքն է: «Երկնքի Դառն» վերածվելու ընթացքում Երկինքն իր հիմնական մասը հանձնում է «մարդուն» և ստիպում, որ «մարդը» տիրի «մարդկային էությանը», որը տարբերվում է մյուս երևույթներից: Այդ դեպքում մարդը կարող է բացահայտել, որ «մարդու Դառն» բարոյական մարդկային հարաբերությունների բոլոր սկզբունքները (մարդկային հասարակության կանոնները) համահունչ են «Երկնքի Դառն» (տիեզերքի օրենքը) ին-յան շարժմանը: «Մարդու Դառն» և «Երկնքի Դառն» պետք է միավորվեն: «Մարդու Դառն» հիմնված է «Երկնքի Դառն» վրա, որովհետև «մարդը» Երկնքի (բնության) մասն է, ուստի «մարդու Դառն» քննարկումն անհնար է առանձնացնել «Երկնքի Դառնից», իսկ «Երկնքի Դառն» քննարկումը պետք է նկատի առնի նաև «մարդու

Դառն», որովհետև «մարդու Դառն» «առօրյա կյանքի և երևույթների սկզբունքը» համահունչ է «Երկնքի Դառն» ին-յան շարժմանը: Ջան Ցյան ասում է, որ «Իձինը պարունակում է Երկնքի սկզբունքը, ինչպես նաև «մարդու Դառն» (Ջան Ցյան 1978, էջ 65):

Երրորդ, կոնֆուցիական փիլիսոփայությունն ինչու է պնդում, որ «Երկնքի և մարդու» միջև կա «ներքին հարաբերություն»: Արևմտյան Ջոու դինաստիայում կա ինտելեկտուալ ավանդույթ, որը նկարագրվում է հետևյալ կերպ՝ «Երկնքի ականջն իմ ժողովրդի ականջն է, Երկնքի աչքը՝ իմ ժողովրդի աչքը» (Մենցիոս 1980, Վանչան շան): Ավանդույթը գոյություն է ունեցել Կոնֆուցիոսի, Մենցիոսի, Չեն Յայի, Չեն Իի, Ջու Սիի, Լու Չոյուլանի և Վան Յանմինի ժամանակաշրջաններում: Այս առումով Ջու Սիի ասածն արտացոլում է Կոնֆուցիոսի հետևողականությունը «բարեգործություն սովորելու» հարցում: Նա ասում է. «Բարեգործ մարդը պիտի ունենա սիրտ՝ բնության համար առատորեն արարելու, սիրտ՝ մարդկանց հետ գործվանքի և իրերի հանդեպ բարեգութ լինելու համար. բարեգործ մարդու սիրտը պարունակում է չորս բարոյախոսություն (բարեգործություն, արդարամտություն, ծեսեր և իմաստություն) և ներթափանցում չորս բարոյախոսությունների չորս ակունքներ» (Ջու Սի 1936, Յատոր 13): «Երկնքի Դառն» մշտապես արարում է և մեծ տեղ է հատկացնում բարեգործությանը: «Երկնքը» (բնություն) կարող է ստիպել, որ բազմաթիվ երևույթներ լավ զարգանան, ուստի «մարդը» պետք է հետևի «Երկնքի» (բնություն) օրինակին, բարեգութ լինի մարդու հանդեպ և օգտակար լինի բազում երևույթների: Քանի որ «Երկնքն ու մարդը միավորված են՝ որպես մեկ ամբողջություն»,

## Գեղarm Աշուն 2016

«մարդը» ձեռք է բերում «Երկնքի» էությունը, որ դառնա «մարդ», ուստի մարդը պիտի գիտակցի «բնության» (Երկինք) գործառույթը և «գորովանքն այլ մարդու հանդեպ» և օգտակար լինի երևույթներին»: «Երկնքի սիրտը» և «մարդու սիրտը» իրականում նույն սիրտն են: «Մարդը» պիտի գիտակցի «Երկնքի Դառն» և զգա «Երկնքի Դառն»: Կյանքի արժեքն է՝ գիտակցել «Երկնքի ճակատագիրը (բախտը)», ուստի «Երկնքի» և «մարդու» հարաբերությունն իրականում ներքին է:

Մենք քննարկում ենք «Երկնքի և մարդու միասնությունը» և այն հասկանում փիլիսոփայորեն՝ նկատի առնելով վերոնշյալ կետերը, որպեսզի հասկանանք նրա իրական ոգին և արժեքը: Սա համաշխարհային տեսակետ է, մտածողության կերպ, որ կիրառվում է «Երկնքի և մարդու միասնության» մեկնաբանության տիրույթում: Սրա կարևորությունն այն է, որ այն «մարդուն» օժտում է պատասխանատվության անխուսափելի զգացողությամբ: «Մարդը» կարող է գիտակցել իր սեփական անդրանցականությունը և հասնել «Երկնքի ու մարդու իդեալական միասնության» միայն «Երկինքը (բնությունը) նմանակելու» գործընթացում (բարձրանալով «Երկնքի» ոլորտ):

Անշուշտ, «Երկնքի ու մարդու միասնության» կոնֆուցիական գաղափարը չի կարող ուղղակիորեն լուծել մարդկային հասարակության մեջ «մարդու և բնության» բախման հատուկ խնդիրները: Սակայն որպես փիլիսոփայական հիմնավորում՝ «Երկնքի և մարդու միասնության» գաղափարը ենթադրում է, որ «Երկինքն» ու «մարդը» անբաժան են: Ավելին, «Երկինքն» ու «մարդը» պետք է ընկալվեն որպես անկապտելի միություն: «Երկնքի» և «մարդու» միջև կա ներքին հաղորդակցություն, որն

անկասկած մտածողության դրական ճանապարհ է «Երկնքի» և «մարդու» հարաբերության փիլիսոփայական լուծման համար:

### Մարդու և մարդու հարաբերությունը

«Մարդու և մարդու բախումը», որ գոյություն ունի ժամանակակից հասարակության մեջ, ավելի բարդ է, քան «մարդու և բնության բախումը»: Ներանձնային բախումը կապված չէ միայն «եսի և ուրիշների», «մարդու և համայնքի», «ազգի և ազգի», «ժողովրդի և ժողովրդի» ու «տարածաշրջանի և տարածաշրջանի» միջև բազմաթիվ բախումների հետ: Օրինակ, նյութական կարիքների և իշխանության հետապնդումը, պայքարը բնական ռեսուրսների համար, ունեցվածքի և նկրտումների ընդլայնումը առաջացնում են բախումներ և պատերազմներ ազգերի, ժողովուրդների ու տարածաշրջանների միջև և հանգեցնում «կայսերական գերիշխանության» և «ահաբեկչության»: Փողի և նյութական բարիքները վայելելու ծայրահեղ մոլուցքը, հատկապես ղեկավարող դասի կաշառակերությունը և նրանց կողմից հասարակ մարդկանց ճնշումը լարվածություն են առաջացնում մարդկանց հարաբերություններում, ստեղծում բացասական հասարակական մթնոլորտ, բազմաթիվ գժտություններ և պառակտում: Հասարակության մեջ երեխաները, երիտասարդներն ու տարեցները ունեն սեփական խնդիրները: Թյուրիմացությունն ու թշնամությունը առօրյա կյանքում, հոգիների մեկուսացումը հետագայում հանգեցնում են հասարակական ներդաշնակության կազմաքանդման: Այս միտումը կհանգեցնի մարդկային հասարակության կործանմանը: Արդյո՞ք կոնֆուցիականությունը

օգտակար մտավոր աղբյուր է ժամանակակից հասարակության թերությունները վերացնելու համար: Իմ կարծիքով, կոնֆուցիական «բարեգթության ուսմունքը» գուցե մեծ նշանակություն ունի «մարդու և մարդու», ազգերի, ժողովուրդների ու տարածաշրջանների միջև ներդաշնակության ձևավորման կամ «ներդաշնակ հասարակություն» ստեղծելու գործում:

«Գողյան Չունու Ջուձյան» գրքի «Սին ցի մին չու» 性自命出 (էությունը բխում է բախտից) հատորում նշվում է, որ «Դաոն առաջանում է կապվածությունից (զգացմունք, հույզ), իսկ կապվածությունը էությունից: Առաջինը մոտ է կապվածությանը, վերջինը՝ արդարամտությանը»: Սա նշանակում է, որ ներանձնային հարաբերություններն ի սկզբանե հիմնված են կապվածության վրա (զգացմունք), իսկ կապվածությունը բխում է մարդկային էությունից: Յետևաբար, ներանձնային հարաբերությունների սկզբում ավելի կարևոր է կապվածությունը (ինչպես, օրինակ, մոր և երեխայի կապվածությունը), իսկ հետագայում բարոյականությունն ու արդարությունը (Դաո կամ ճանապարհ, արդարություն կամ արդարամտություն) ավելի կարևոր են, քան կապվածությունը: Այս դեպքում «Մարդու Դաոն ներանձնային հարաբերությունների կամ հասարակական հարաբերությունների սկզբունքների օրենքն է: Այն կապված է «Երկնքի Դաոյի» հետ, բայց տարբերվում է «Երկնքի Դաոյից», որը բնության (կամ մարդուց անդին արտաքին աշխարհի) օրենքն է: «Դաոն ծագում է կապվածությունից» արտահայտությունը նշանակում է, որ ներանձնային հարաբերություններն ի սկզբանե հիմնված են կապվածության վրա: Սա Կոնֆուցիոսի «բարեգործության ուսմունքի» ելակետն է: Կոնֆու-

ցիոսի աշակերտ Ֆան Չին հարցնում է նրան, թե ինչ է «բարեգործությունը», և Կոնֆուցիոսը պատասխանում է սիրել մարդկանց: Որտեղի՞ց է գալիս «սիրել մարդկանց» բարոյական հրամանը: «Ջունյունը» մեջբերում է Կոնֆուցիոսին. «Բարեգործությունը մարդու բնավորության գիծ է, և դրա ամենակարևոր գործոնը ընտանիքը սիրելն է»: Բարիք գործելու բարոյական գիծը ի ծնե է, կարևոր է սիրել սեփական ընտանիքը (Ցիսի 1980, Գլուխ 20): Բայց կոնֆուցիականները կարծում են, որ բարեգործությունը չի կարող հիմնվել միայն մարդու՝ ընտանիքի հանդեպ սիրովրա: «Գողյան Ջուձյանն» ասում է. «Ընտանիքն անկեղծորեն սիրելը պայմանավորված է կապվածությամբ, բայց բարեգործությունն ընկալվում է՝ որպես կապվածություն սովորական մարդկանց, և ոչ միայն հոր հանդեպ» (Չինմեն 1998): Ընտանիքի հանդեպ մեծ սերը բնական է. սերը (կապվածություն), որ տարածվում է այլ մարդկանց վրա, համարվում է «բարեգործություն»: Մի այսպիսի ասացվածք կա. «Որդիական բարեպաշտությունը պետք է մեծանա և վերածվի երկնքի տակ ապրող հասարակ մարդկանց հանդեպ կապվածության (Նույն տեղում, Թան յու ջի դաո): Սակայն ընտանիքի հետ կապվածությունն այլոց հետ կապվածության հիմքն է: Սա նշանակում է, որ կոնֆուցիական «բարեգործության ուսմունքը» պահանջում է կապվածության տարածում ընտանիքից մինչև հասարակ մարդկանց: «Ինքդ քեզ ուրիշի դերում պատկերացրու» սկզբունքը և նրա գործածումը, «հարգանքով վերաբերվիր ընտանիքիս տարեցներին և այդ հարգանքը տարածիր ընտանիքիցս դուրս տարեցների վրա: Քնքանքով վերաբերվիր ընտանիքիս երիտասարդներին և այդ քնքանքը տարածիր ընտանի-

քիցս դուրս երիտասարդների վրա (Մենցիոս 1980, Լյան Հուեյվան շան)՝ բարեգործություն տարածելով: Դժվար է ապրել ըստ «ինքդ քեզ ուրիշի դերում պատկերացրու» սկզբունքով. պետք է առաջնորդվել «ջունի 忠 (մարդու նախնական բարի մտքի լիարժեք զարգացում) Դաոյի» և շուի 恕 (այդ միտքն այլոց վրա տարածելու), սկզբունքներով, որոնք նկարագրվում են հետևյալ արտահայտություններում՝ «ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանաս, որ քեզ հետ վարվեն» (Կոնֆուցիոս 1980, Յանյուան), «եթե ցանկանում ես ստեղծել քո սեփական կերպարը, նաև ստեղծիր ուրիշների կերպարները, և եթե ուզում ես նշանավոր լինել, նաև օգնիր ուրիշներին նշանավոր լինել (Նույն տեղում. Յունյե), որոնք կօգնեն կյանքի կոչել «բարեգործության» սկզբունքը: (Ջու Սիի «Սիշու ձիշու» գիրքը բացատրում է. «Բարությունը լավագույնս իրագործելը ջուն է, իսկ բարության տարածումը՝ շուն»: Եթե «բարեգործությունը» տարածվում է հասարակության վրա (ողջ մարդկային հասարակության), ապա նմանվում է Կոնֆուցիոսի խոսքին. «Սեփական անձին տիրապետելն ու ծեսին վերադառնալը բարեգործություն է: Եթե մարդը (կառավարիչը) կարողանա մի օր տիրապետել ինքն իրեն և վերադառնալ ծեսերին (արարողություն), Երկնքի տակ ամեն ինչ կվերադառնա բարեգործության: Բարեգործությունը կիրառելը կախված է մարդուց: Մի՞թե այն կախված է ուրիշներից (Նույն տեղում, Յանյուան): Անցյալում «եսասիրական ցանկությունը հաղթահարելը» և «ծեսը վերականգնելը» միշտ բացատրվում էին որպես երկու զուգահեռ գործողություն, բայց նման ընկալումը, իմ կարծիքով, ճիշտ չէ: «Եսասիրական ցանկությունը հաղթահարելն ու ցեսը վե-

րականգնելը բարեգործություն է» արտահայտությունը նշանակում է, որ «ծեսը վերականգնելը» հիմնված է «եսասիրական ցանկությունը հաղթահարելու» վրա: Ֆեյ Սյաոթունը հիանալի բացատրում է սա: Նա ասում է. «Միայն Եսասիրական ցանկությունը հաղթահարելով կարելի է վերականգնել ծեսը: Ծեսը վերականգնելն անհրաժեշտ պայման է հասարակություն մտնելու և հասարակության անդամ դառնալու համար: Սեփական Եսասիրական ցանկությունը սահմանափակելը կամ բարձրացնելը թերևս արևմտյան և արևելյան մշակույթների հիմնական տարբերությունն է» (Ֆեյ Սյաոթուն 2002, էջ 4): Սա խելամիտ բացատրություն է: Եթե մարդը մուտք է գործում հասարակություն, նա պետք է իրենից ինչ-որ բան պահանջի: Օրինակ, պետք է խնդրի իրեն ապրել ըստ «ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանաս, որ քեզ հետ վարվեն» սկզբունքի. միայն այդ դեպքում կարող է հետևել հասարակական չափանիշին (ծես) և դառնալ հասարակության անդամ: Նույնը կիրառելի է ազգի դեպքում. ազգը պիտի ապրի աշխարհի «դաշնագրի» և ընդհանուր կանոնների պահանջների համապատասխան: Այդ դեպքում աշխարհի դաշնագիրը և ընդհանուր օրենքները կպահպանվեն: Ֆեյ Սյաոթունը կարծում էր, որ «եսասիրական ցանկության սահմանափակումը» չինական մշակույթում հրաշալի էր ներանձնային հարաբերությունների համար, մինչդեռ «եսասիրական ցանկության խրախուսումն» արևմտյան մշակույթում, որը մարդու եսը բարձր էր դասում այլ մարդկանցից կամ այլ ազգերից, վստահաբար և հեշտությամբ հանգեցնում էր բախման և պատերազմի: Ըստ Ջու Սիի՝ ասացվածքը կարելի է հասկանալ՝ որպես «եսասիրական

## Գեղարմ Աշուն 2016

ցանկության հաղթահարում և վերադարձ ծեսերին, որը Երկնքի սկզբունքն է (Ջու Սի 1983): Նա նկատի ունի, որ մենք պիտի սահմանափակենք մեր սեփական եսասիրական ցանկությունը՝ մեր վարքի ու գործողությունների մեջ ծեսերին ու չափանիշներին համապատասխանելու համար: «Բարեգործությունը» մարդու ներքին բնութագիրն է («կապվածությունը ծագում է էությունից»): Հասարակական կյանքի իմաստով ծեսը (արարողություն) արտաքին համակարգն է, որը կարգավորում է մարդու վարքագիծը, և նրա գործառույթը ներանձնային հարաբերությունների կարգավորումն է՝ ներդաշնակություն ապահովելու համար: Այն խորհրդանշում է, որ «ծեսերի (արարողություն) կիրառման կարևորությունը ներդաշնակություն է»: Պահանջը առ այն, որ մարդիկ ենթարկվեն ծեսին (արարողություն), պետք է հիմնված լինի «ուրիշների հանդեպ կապվածության» նրանց ներքին զգացողության (միտք) վրա, որը համապատասխանում է «բարեգործությանը»: Կոնֆուցիուսն ասում է. «Բարեգործությունը կախված է մարդուց: Մի՞թե այն կախված է ուրիշներից» (Կոնֆուցիոս 1980, Յանյուան) «Բարեգործության» և «ծեսերի» (արարողություն) հարաբերության մասին Կոնֆուցիուսը հստակ ասել է. «Եթե մարդը բարեգործ չէ, ապա ի՞նչ կապ ունի ծեսերի (արարողություններ և այլն) հետ: Եթե նա բարեգործ չէ, ի՞նչ կապ ունի երաժշտության հետ» (Նույն տեղում, Բայի): Առանց բարեգործ սրտի (միտք) ծեսերի (արարողություն) և երաժշտության համակարգը խաբուսիկ է և կեղծ: Հետևաբար, Կոնֆուցիուսը գտնում էր, որ հասարակությունը կարող է լինել ներդաշնակ ու խաղաղ, եթե մարդիկ գիտակցաբար հետամուտ լինեն «բարեգործության», «բարեգոր-

ծության սիրտը (միտք) հիմնեն» որոշակի չափանիշների վրա և կիրառեն այն առօրյա հասարակական կյանքում: Հենց սա է «եթե մարդը (կառավարիչ) կարողանա գեթ մեկ օր վերահսկել իրեն և վերադառնալ ծեսերին (արարողություն), Երկնքի տակ ամեն ինչ բարի կլինի» (Նույն տեղում, Յանյուան) արտահայտության իմաստը: Առօրյա կյանքում բարեգործությանը հետևելը նման է «մեծագույն բարձրության և գերազանցության հասնելու և Դաոյի Ոսկե միջինին հետևելու ձգտմանը», որն արտացոլվել է «Ջունյունում»: «Չգտել հասնել մեծագույն բարձրության և գերազանցության» (Չիսի 1980, Գլուխ 27) նշանակում է, որ մարդիկ կյանքում պետք է հետևեն բարձրագույն սկզբունքին, բարեգործության իդեալին. «Հետևել Դաոյի Ոսկե միջինին» սկզբունքը մարդկանց խնդրում է առօրյա կյանքում գիտակցել «բարեգործության» ոգին, «միջինի ուսմունքը ցույց է տալիս միջինի կիրառումը»: «Մեծագույն բարձրության ու գերազանցության հասնելու ձգտումը» և «Դաոյի ոսկե միջինին հետևելը» չի կարելի բաժանել երկու մասի, իսկ կոնֆուցիական բարձրագույն իդեալը «Դաոն՝ իմաստությամբ և առանց արքայության»: Այսօր մենք փորձում ենք կառուցել ներդաշնակ հասարակություն, ուստի Կոնֆուցիոսի խոսքերը շատ կարևոր են: «Բարեգործության» բազում բացատրություններ կան Կոնֆուցիոսի «Ջրույցներ և ասույթներում», բայց ոչինչ չի ասվում «բարեգործ կառավարման» մասին: Սակայն «մարդկանց առաքինությամբ առաջնորդելն ու արարողությունների (ծեսեր, սովորություններ) կանոններով կառավարելը», «մարդկանց սրտանց սիրելը», «առաքինի և ունակ տաղանդների ընտրելը», «մարդկանց մեծ

## Գեղarm Աշուն 2016

օգուտ տալն ու բոլորի կյանքը թեթևացնելը», և այլն, վերաբերում են «բարեգործ կառավարմանը»: Մենցիոսի գործերում բազում քննարկումներ կան «բարեգործ կառավարման» մասին, որը բավական լայն իմաստ ունի: Բացատրությունների մի մասն անհամատեղելի է ժամանակակից մարդկային հասարակության կարիքների հետ, բայց նրանցից երկուսը կարևոր դեր ունի, օգնում է կառուցել ներդաշնակ հասարակություն և խաղաղության հասնել ամբողջ աշխարհում: Դրանցից մեկը՝ «բարեգործ կառավարման պրակտիկան», պետք է ապահովի մարդկանց հաստատուն սեփականությունը: Մենցիոսն ասում է. «Մարդիկ հետևում են ճիշտ Դաոյին, որովհետև ունեն հաստատուն սեփականություն և կայուն սիրտ, իսկ առանց հաստատուն սեփականության չի կարող լինել կայուն սիրտ» (Մենցիոս 1980, Թեն Վենգուն շան): Նա ուզում է ասել, որ հասարակ մարդիկ պետք է ունենան որոշակի հաստատուն սեփականություն, որը կերաշխավորի նրանց բարոյական և վարքագծային սկզբունքները: Առանց հաստատուն սեփականության մարդը չի ունենա բարոյական գաղափարներ և վարքագծային ուղեցույցներ: Մենցիոսն ասում էր. «Բարեգործ կառավարումը պետք է սկսվի հողի մասնավոր սեփականությունից» (Նույն տեղում): Նա նկատի ունի, որ բարեգործ կառավարությունը պետք է հասարակ մարդկանց ապահովի նախ սեփական հողով: Հավատացած են, մենք պետք է երաշխավորենք, որ հասարակ մարդիկ ունենան որոշակի հաստատուն սեփականություն, եթե իսկապես ուզում ենք կառուցել ներդաշնակ հասարակություն: Միջազգային մակարդակում յուրաքանչյուր ազգ ու ժողովուրդ պիտի ունենա այն հարստությունը, որին ար-

ժանի է. հզոր ազգերը չպետք է շահագործեն այլոց հարստությունն ու ռեսուրսները կամ վարեն ուժի քաղաքականություն: Մենցիոսի երկրորդ տեսակետը «բարեգործ կառավարման» մասին հակադրվում է անարդարացի պատերազմին: Նա ասում է. «Նրանք, որ հետևում են բարի ու ճշմարիտ Դաոյին, ավելի մեծ աջակցություն կստանան: Մյուս կողմից, նրանք, որ կորցնում են բարի ու ճիշտ Դաոն, սակավ աջակցություն կստանան: Այս դեպքում «Դաո» ասելով նկատի է առնվում «բարոյականությունը և արդարությունը»: «Գոնսուն Չոունում» կա մի պարբերություն, ըստ որի՝ բարենպաստ եղանակը պակաս կարևոր է, քան նպաստավոր տարածքը, իսկ նպաստավոր տարածքը պակաս կարևոր է, քան մարդկանց աջակցությունը: Այն ասում է.

Կարիք չկա քաղաքացիներին սահմանափակել ազգայինի սահմաններում, պետք չէ պատսպարել ազգը սարի ետևում և սպառնալ աշխարհին կործանարար զենքով: Նրանք, որ հետևում են բարի ու ճշմարիտ Դաոյին, կարծանանան ավելի մեծ աջակցության: Մյուսները, որ հրաժարվում են բարի ու ճշմարիտ Դաոյից, կարծանանան սակավ աջակցության: Նա, ով նվազագույն աջակցություն կստանա, կհանդիպի ընտանիքի ու հարազատների դիմադրությանը, և երկնքի տակ բոլորը կզան ու հավատարմության երդում կտան նրան, ով արժանացել է ամենամեծ աջակցության: Արդարացի գերագույնը կհաղթի, եթե պատերազմ հայտարարի նրանց, որոնց դիմադրում են բոլոր աջակից ուժերը, նույնիսկ իր ընտանիքն ու հարազատները, կամ էլ կարիք չի ունենա պատերազմ սկսել: (Մենցիոս 1980, Գոնսուն Չոու սյա ):

Այս պարբերությունը հուշում է մեզ, որ կարիք չկա ունենալ ազգային սահ-

մաններ՝ քաղաքացիներին սահմանափակելու համար, կախված լինել նպաստավոր տարածքից՝ ազգը պաշտպանելու, և հույսը դնել զանգվածային ոչնչացման զենքի վրա՝ աշխարհին սպառնալու համար: Կոնֆուցիականները սովորաբար պատերազմը բաժանում են երկու տեսակի՝ «արդարացի» և «ոչ արդարացի» պատերազմ: Մենցիոսն ասում է. «Գարնանը և աշնանը չի կարող լինել արդարացի պատերազմ» (Նույն գրքում, Չինսին սյա), և «Նրանք, որոնք կորցնում են հանրային աջակցությունը, կկորցնեն վարչակարգը» (Նույն գրքում, Լիլու շան): Այս գաղափարը նաև կիրառվում է ազգի կառավարչի նկատմամբ: Հան դինաստիայի վաղ շրջանում Ջիա Ին գրեց «Գո Ցին լուն» 过秦论 (Ցին դինաստիայի անկման վերլուծություն): Իր հողվածում նա գալիս է այն եզրահանգման, որ Ցին դինաստիան կործանվեց, որովհետև «Ցին դինաստիայի կառավարությունը միավորված ազգ հաստատելուց հետո չհետևեց բարեգործ և արդարամիտ քաղաքականությանը, ուստի կորցրեց իր ինքնիշխանությունը, չնայած ձեռք էր բերել ազգային իշխանություն և ուներ բազմաթիվ առավելություններ» (Ջյա Ի 1989, Հատոր 1): Նա մեջբերում է «Անցյալի իրադարձություններն այսօրվա դասն են» ասացվածքը: Արդյո՞ք պետք է այսօր յուրացնել իմաստությունը: Նման կոնֆուցիական մտքերը պիտի որոշակի իմաստ ունենան ազգի կառավարչի և աշխարհի զարգացած ազգերի կառավարող խմբի համար: «Կարգավորի՞ր պետության գործերը և խաղաղեցրու աշխարհը»՝ հանուն «բարեգործ կառավարման» և «արքայության Դաոյի» և ոչ «բռնակալությամբ» ու «ճնշումներով»:

Սենյուել Փ.Հանթինգթոնի՝ 1993

թվականին քաղաքակրթությունների բախման մասին թեզը ներկայացնելուց ի վեր այն բուռն քննարկումների թեմա է դարձել բոլոր երկրների գիտնականների համար: Մարդկության պատմության մեջ հազվադեպ են մշակութային տարբերությունների (օրինակ՝ փիլիսոփայության, կրոնի, արժեքների) հետևանքով առաջացած բախումներ ու պատերազմներ: Քսաննեկերոդ դարում չկա համաշխարհային պատերազմ, բայց հաճախ քաղաքական ու տնտեսական լուրջ խնդիրների պատճառով տարածաշրջանային պատերազմներ են բռնկվում ազգերի, ժողովուրդների ու տարածաշրջանների միջև, բայց մշակույթը նույնպես կարևոր պատճառ է: Մշակութային տարբերություններից բխող բախումներն ու նույնիսկ պատերազմները կարգավորելու համար Կոնֆուցիոսի «ներդաշնակություն առանց նմանության» գաղափարը թերևս շատ կարևոր սկզբունք է: Չինաստանի պատմության մեջ գոյություն ունի երկու գաղափար՝ «հե 和 (ներդաշնակություն)» և «բուն 冏 (նույնություն)», որոնք տարբեր են, բայց գոյություն ունի ներդաշնակության և նույնության այսպես կոչված խտրականություն: Ըստ Ջուոչուանի 左传昭公二十年 (Ջուոչուան, դուքս Ջաոյի 20-րդ տարի) «Ջաոզուն էրշի նյան» արձանագրությունների՝ «Դուքս Ջաոն հարցնում է Լյան Չյուչուն միայն ինձ հե՞տ է ներդաշնակ»: Յանցին (Յան Ին) պատասխանում է. «Ջուն հենց դու ես: Այն ներդաշնակ է քեզ հետ»: Դուքսն ասում է. «Մի՞թե ներդաշնակությունը տարբերվում է նույնությունից: Յանը պատասխանում է. «Տարբերվում է: Նույնն է, ինչ եթե թանձր ապուր եփես, որի համար ջուր է պետք, կրակ, քացախ, լոլիկ, աղ և սալոր՝ ձուկ կամ միս պատրաստելու համար: Կրակի համար

## Գեղarm Առն 2016

վառելափայտ է պետք: Անհրաժեշտ է համենեւէ, որ համեղ լինի: Եթե համը շատ մեղմ է, խոհարարը համեմունքներ կավելացնի, իսկ եթե սուր է, ջուր կավելացնի, որ թուլացնի համը: Երբ գերադասը համտեսի ապուրը, կզգա, որ գերազանց է: Կայսեր ու նրա պաշտոնյաների միջև հարաբերությունն էլ նույն կերպ է... Հիմա Ջուն փոխվել է, որովհետև միշտ համաձայնում է քեզ հետ՝ անկախ քո կայացրած որոշումներից: Դա նույնն է, ինչ եթե ջրի համը լավացնելու համար ջուր ավելացնես: Ու՞մ է պետք: Եթե երաժշտական գործիքները միշտ կատարեն նույն մեղեդին, ո՞վ կլսի: Հենց այդ պատճառով էլ նույնությունն այնքան էլ ցանկալի չէ» (Ցուո Ցյունին 1980, Ջաոզուն էրշի նյան): Ըստ Ջենգյուի Գոյուի 国语郑语՝ «Իրերի միջև ներդաշնակ հարաբերություններն օգտակար են նորը ստեղծելու համար, իսկ նույնությունը չի կարող անել դա: Մի բան մյուսին ավելացնելը կոչվում է ներդաշնակություն, որի արդյունքում ստեղծվում է նորը, մինչդեռ երբ նույնատիպ երկու բան դնում ես կողք կողքի, երկուսն էլ կորցնում են կենսական ուժը: Ուստի անցյալում արքաներն օգտագործում էին հող, մետաղ, փայտ, ջուր ու կրակ՝ բազմաթիվ իրեր ստեղծելու համար» (Չուո Ցյունին 1997, Հատոր 16): Հետևաբար, «ներդաշնակությունն» ու «նույնությունը» նույնը չեն: Եթե տարբեր ու միմյանց կապված իրերը կարողանան ներդաշնակ աճել, ապա կյանքը կզարգանա: Եթե նույն իրերը դրվեն կողք կողքի, արդյունքում կենսական ուժը կճնշվի: Ավանդական չինական մշակույթի բարձրագույն իդեալը հետևյալն է՝ «տասը հազար իր/առարկա աճում է միասին՝ առանց միմյանց վնասելու. նրանց Դաոն շարժվում է զուգահեռ՝ առանց փոխադարձ միջամտության»

(Ցիսի 1980, Գլուխ 30): («Տասը հազար իր/առարկա, որ աճում են միասին» և «զուգահեռ շարժվող Դաոն» արտահայտում են «նույնության բացակայությունը». «նրանք չեն վնասում կամ «միջամտում իրար». սա ներդաշնակություն է»): Սա կարող է դառնալ գաղափարների հարուստ աղբյուր բազմաթիվ մշակույթների գոյակցության համար:

Տարբեր ազգերն ու երկրները պետք է ունենան մշակութային փոխանակումներ և երկխոսություն՝ ընդհանուր ըմբռնման, այն է՝ փոխադարձ ճանաչողության գործընթացի հասնելու և տարբերություններն ու ընդհանրությունները զգալու համար: Փոխադարձ ճանաչողության այս տեսակը չի ենթադրում, որ մի կողմը ոչնչացնում է մյուսը, կամ որ մի կողմն ամբողջությամբ ծուլվում է մյուսին: Սա նշանակում է՝ փնտրել հատման կետեր, որտեղ տարբեր մշակույթները կարող են մոտենալ ու զարգանալ: Սա ներդաշնակությունն է: Հետևաբար, մենք պետք է ջանասիրաբար ձգտենք երկխոսության միջոցով տարբեր մշակույթների ներդաշնակ գոյակցության: Հիմա բազմաթիվ գիտնականներ Չինաստանում և արևմուտքում գիտակցում են մշակույթների միջև երկխոսության միջոցով փոխըմբռնման ձգտման կարևորությունը: Օրինակ, Հաբերմասն առաջ է քաշում «արդարության» և «համերաշխության» գաղափարները (Հաբերմաս 1996): Կարծում են՝ սրանք կարելի է կիրառել որպես սկզբունք տարբեր ազգերի ու մշակույթների հարաբերություններում: Հաբերմասի արդարության սկզբունքը կարելի է ընկալել հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր ազգային մշակույթ պետք է լինի անկախ և ինքնորոշված. «համերաշխության սկզբունքը» կարելի է հասկանալ



## Գեղarm Առն 2016

հետևյալ կերպ՝ ազգը պետք է մյուս ազգային մշակույթներին վերաբերվի համակրանքով և հարգի այլ մշակույթները: Միայն շարունակական երկխոսության, հաղորդակցության և այլ միջոցներով կարելի է լավ հարաբերություններ հաստատել տարբեր ազգային մշակույթների միջև: Գերմանացի փիլիսոփա Գադամերը նշում էր, որ «ընթրնունը» պետք է հասցնել «լայն երկխոսության» (Փան Դերուն 2002, էջ 65-68): Այն նպատակ ունի ավելացնել «ընթրնունը» և հասցնել «լայն երկխոսության» մակարդակի, որպեսզի սուբյեկտն ու օբյեկտը հավասարվեն: Այլ կերպ ասած՝ երկխոսությունը կարելի է ազնվորեն վարել փոխադարձ հավասարության պայմանով: Կարելի է ասել, որ Գադամերի՝ սուբյեկտ-օբյեկտ հավասարության գիտակցությունն ու մշակութային երկխոսության նրա տեսությունը կարևոր և անհրաժեշտ գաղափարներ են մեր դարաշրջանի համար: Գաղափարի էությունը ոգեշնչումն է, որը մեզ թույլ կտա ճիշտ հասկանալ չինական և արտասահմանյան մշակութային և ազգային հարաբերությունները:


Թե՛ Հաբերմասի արդարության և համերաշխության սկզբունքները, թե՛ Գադամերի՝ լայն երկխոսության տեսությունը՝ որպես արդարության և համերաշխության նախադրյալ, գիտակցում են ներդաշնակության կարիքը՝ առանց նույնության: Միայն այն դեպքում, եթե գիտակցենք, որ տարբեր մշակութային ավանդույթներ ունեցող ազգերն ու պետությունները կարող են հասնել ներդաշնակ գոյակցության, նրանք կունենան հավասար իրավունքների և պարտականությունների հնարավորություն. միայն այս պայմաններում «լայն երկխոսությունը» կարող է ճշմարտացիորեն և սահուն կատարել իր խնդիրները: Այսպիսով, Կոնֆուցիոսի «ներդաշնակություն առանց նույնության» սկզբունքը, որ հիմնված է արժեքավոր ներդաշնակության գաղափարի վրա, պետք է դառնա տարբեր մշակույթների հարաբերությունները կարգավորելու հիմնական սկզբունք:

Անգլերենից թարգմանությունը՝  
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

**Ինչու՞ ենք ամենուրեք ընթերցում  
Կաֆկա**

**Իգոր ԿԼԵՆ**  
/Ռուսաստան/

**ՕՏԱՐՆԵՐԻ ՄԵՉ  
ՈՉ ԻՆՔՆԻԲԵՆԸ**



Ֆրանց Կաֆկան(1883-1924) XX դարի եվրոպական ամենաարմատական ու նշանակալից գրողներից է: Ստեղծագործունեության և առավել ևս նրա անհատականության արտասովոր լինելը, արդեն 100 տարի է՝ ինչ շարունակ հետաքրքրում են Կաֆկայի ընթերցողներին: Դրանց ընկալման համար ամենից հաճախակի հղում են կատարում գերմանական մի քննադատի հիանալի բնութագրին. «Լինելով հրեա, նա ամբողջապես յուրային չէր քրիստոնյա աշխարհում: Լինելով անտարբեր հրեա, իսկ նա սկզբից այդպիսին էր, նա ամբողջապես յուրային չէր չեխերի շրջապատում: Լինելով գերմանախոս, նա ամբողջապես յուրային չէր բոհեմական գերմանացիների շրջապատում: Լինելով բոհեմական, նա լրիվ ավստրիացի չէր: Լինելով բանվորների ապահովագրությամբ զբաղվող ծառայող, լրիվ չէր պատկանում բուրժուազիային: Լինելով բյուրգերի որդի, լրիվ չէր դասվում բանվորների շարքը: Բայց նա նաև ամբողջությամբ գրասենյակային էլ չէր, քանզի իրեն գրող էր զգում»: Ինքը՝ Կաֆկան, կարող էր ավելացնել, որ ծնողների ընտանիքում, որտեղ նրան համարում էին թեթևոլիկ զավակ, նա իրեն զգում էր «ավելի օտարոտի, քան մի օտարական»:

Տպավորիչ ցուցակ է: Չնայած հանուն արդարության պետք է նշել, որ համաշխարհայնացմանը զուգահեռ նման մարդկաց քանակը, ովքեր ինքնանույնականացման դժվարությունների են հանդիպում քիչ թե շատ օտարածին հանրություններում, ժամանա-

կակից աշխարհում ավելի ու ավելի են շատանում: Եվ Կաֆկան առաջիններից մեկն էր, ով առավելագույն ուշադրություն բևեռեց մարդու մեծակության խնդրի վրա եւ դուրս բերեց այն էքզիստենցիալ ու փիլիսոփայական մակարդակ, ինչի շնորհիվ էլ ընթերցվում է ամենուրեք: Ոմանց կողմից մեծարված ու գերադասված է, իսկ ոմանք էլ սեփական ձեռքերով կխեղդեին նրան: Պետք չէ մտածել, որ Կաֆկան դա չէր կանխատեսել կամ չէր կանխագագել: Ուներ ընդամենը 182 սմ հասակ և 55 կգ քաշ՝ նրա թռչնի սուր դեմքն ու տազնապահույզ հայացքը բոլոր նկարների վրա, չղջիկի ցցված կռճիկավոր ականջները հակասեմիտականի երազանք էին: Սակայն ուներ նաև Դոն Քիշոտի ֆիզիկական կառուցվածք ու անվեհերություն՝ հիվանդոտ Կաֆկան զբաղվում էր լողով, թիավարությամբ, թենիսով, ծի էր քշում, իսկ ամենակարևորը՝ չէր վախենում վախենալուց:

Կաֆկայի ձեռքբերումն էր համարվում այսպես կոչված տոտալիտար պետության բնույթի զարմանալի ընկալումը - նրանում բյուրոկրատական մեխանիզմի կառուցվածքի այլակերպումն և բռնության իդեալական անանունությունը: Արժե միայն ճշտել, որ նման չարիքը բնորոշ է կամ սպառնում է բոլոր պետություններին, առանց բացառության: Սակայն պիտի հայտնվեր Կաֆկան, իրավաբանի կրթություն ստանար ու դառնար ավստրո-հունգարական կառավարման վարչական մեքենայի պտուտակներից մեկը, որպեսզի գիտակցեր դա՝ ինքը հասկանար և ուրիշներին հայտներ:

Այնուամենայնիվ, Կաֆկան հայրենիք ուներ, թեկուզ և կիսատ-աբառ: Եվ դա այն քաղաքն է, որը նա երիտասարդ տարիներին հաճախ ուզում էր վառել երկու ծայրից, իսկ երեսուն տա-

րեկանում՝ ընդմիջտ լքել, սակայն չստացվեց: Նա եղել էր ու մնաց պրահաբնակ ու պրահացի գրող: Ինքն այդ մասին այսպես էր գրում. «Ինչո՞ւ չուկչաները չեն լքում իրենց ահավոր երկրամասը... Նրանք չեն կարող...»: Կամ այսպես. «Ես երբեք չեմ լքի Կորսիկան»: Այսինքն՝ չեմ ծնվել որպես, Պուշկինի արտահայտությամբ, «նապուլեոններին նայող ... միլիոնավոր երկուտանի անասուններից» մեկը:

Իր կյանքի խնդիրը Կաֆկան այլ բանի մեջ էր տեսնում, և այն սոսկ արտաքնապես էր առեղծվածային թվում: Արժե հավելել, որ հավակնոտությամբ այն քիչ է գիջում նապուլեոնյանին: Ուզուրպատորները տարածքներ են նվաճում ու կառավարում մարմիններին, իսկ ստեղծագործողները տիրանում են հոգիներին ու հաղթահարում են ժամանակը: Յուրաքանչյուրին՝ իրենը: Կաֆկայի անհատականության կծիկը հետ տալ ու նրա ստեղծագործությունների բնույթը հասկանալ օգնում են նրա «Օրագրերը», որոնք նա վարում էր կյանքի վերջին 13 տարվա ընթացքում: Այստեղ զգուշություն է պահանջվում, սակայն ընդհանուր առմամբ իրերի դասավորվածությունն այդպիսին է:

Ամեն ինչի բանալին մանկական ցնցումն էր. Կաֆկայի հայրը՝ ջանադիր ու կոպտավուն բռնակալը, հուսախաբ էր եղել տղայից, իսկ մայրն անկարող եղավ պաշտպանել որդուն: Նրանք վատ ծնողներ չէին, պարզապես նրանց առաջնեկը ծնվել էր չափազանց տպավորվող ու թուլակազմ: Հիվանդոտ ժառանգականությո՞ւնն իր դերը խաղաց, թե՞ չար բախտն էր հետապնդում Կաֆկայի ընտանիքին (երկու կրտսեր եղբայրներ-տարեմեծիկները մահացան մանուկ հասակում, երեք քույրերը հետագայում մահացան ֆաշիստական համակերնտրոնացման ճամբարնե-

## Գեղarm Աշուն 2016

րում, մայրական կողմից՝ խելագարություններ ու ինքնասպանություններ), այդ մասին կարելի է դատել միայն ենթադրաբար: Կասկածանքի ենթակա չէ լոկ այն, որ նման դեպքերում երեխաները հակված են մեղադրելու իրենք իրենց: Եվ Կաֆկան ինքն իրեն չէր սիրում, ամաչում էր և անգամ արհամարհում ինքն իրեն, ինչպես ինքն էր խոստովանում: Մնացած ամեն ինչը հեռուն զնացած հետևանքներ էին: Մահից մի քանի տարի առաջ Կաֆկան հավաքեց ուժերն ու գրեց հանրահայտ «Նամակ հորը», որի առասպելականացված իրկերպարը հասցրել էր աճել հսկայական չափերի: Սակայն այն չուղարկեց հասցեատիրոջը. նախ՝ ուշ էր, հետո՝ իզուր էր:

Միայն ոչ ըթերցողների համար: Հակառակ Կաֆկայի ցանկությանն ու կարգադրություններին, նրա ընկերներն ու ընկերուհիները չայրեցին նրա ձեռագրերը ու հետմահու տպագրեցին նրա բոլոր երեք վեպերը, չտպագրված նովելներն ու առածները, ինչպես նաև օրագրերն ու նամակները: Կարելի է ասել՝ թույլ չտվեցին ստեղծագործական ինքնասպանություն:

Կաֆկայի գրական ժառանգության կարևոր մաս են կազմում նրա հսկայական նամակագրությունները: Դրանցից ամենահետաքրքիրները նամակներն են ուղղված այն կանանց, ում հետ նա կցանկանար ամուսնանալ, սակայն չամուսնացավ: Չկարողացավ, ինչպես վերոհիշյալ չուկաները կամ գոգոյան Պոդկոլեսինը, ինչպես հենց ինքը Գոգոլը և ոչ միայն նա: Գերմանական ռոմանտիկների գրականության մեջ մի ողջ ավանդույթ կար՝ դիմել անսահման հեռվում գտնվող հարսնացուին, այսինքն՝ անհասանելի ու հետևաբար՝ հեղինակի համար վտանգ չներկայացնող: Եվ մի՞թե Սերվանտեսի Տաբոսյան

Դուլսինեյան կամ Բլոկի Գեղեցիկ տիկինը (ցանկը հեշտությամբ կարելի է շարունակել) նույնը չեն:

Ֆելիցե Բաուերին ուղղված նամակները, ում հետ նա հինգ տարվա ընթացքում երկու անգամ նշանվել էր և երկու անգամն էլ հետ տվել նշանը, նրա համար դարձան գրական փորձադաշտ, որտեղ նա աճեցրել է անսեր սիրո խրտվիլակը, որպեսզի թափ առնելով, անմիջականորեն, գլխապատառ մխրճվեր գրականության մեջ: Եվ դա գրեթե վայրկենապես արդյունք տվեց. գրական մեքենան գործի լծվեց ու աշխատեց: 25-ամյա տղեղ աղջկա հետ ծանոթությունից արդեն մեկ ամիս անց, 30-ամյա Կաֆկային մի շնչում, մի գիշերվա մեջ հաջողվեց գրել իր առաջին լիարժեք պատմվածքը՝ «Դատավճիռը»: Կարելի է ասել՝ դա սիրո գիշեր էր: Իր մերձավոր ընկերոջն ու ապագա կենսագրին՝ Մաքս Բրոդին, նա խոստովանել էր, որ վերջացնելով այդ պատմվածքը, զգում էր էյալուլյացիայի մոտենալը: Ստեղծագործական ներուժի այդ հանկարծակի ձեռքբերումը Կաֆկան հետագայում համեմատում էր ստեղծագործության առաջին ու վերջին տառերի միջև բռնված ձկան զգացումի հետ (չճշտելով միայն՝ ձկնորսի<sup>o</sup>, թե՞ ձկան: Կամ նրանց երկուսի: Միաժամանակ, և ընթերցողի:) «Ես ամբողջությամբ գրականություն են» - նրա բառերն են: Ջարմանալի չէ, որ լիովին բուրժուական ու Կաֆկայից տանջահար եղած Ֆելիցայի ժառանգներն անգամ կես դար հետո նույնիսկ լսել չէին ուզում այդպիսի գրողի մասին:

Փոխարենը Կաֆկան ինքն իր մասին իմացավ ակնհայտորեն շատ ավելին, քան ուզում էր: Մագործի ու գաղափարական բուսակերի թռռան համար սեփական մարմինը շաղկապվում էր կեղտի ու ամոթի հետ: Նա համոզ-

## Գեղarm Առն 2016

ված էր, որ սկզբունքորեն ի վիճակի չէ կենակցել այն կնոջ հետ, ում կսիրի. «Կոխուսն ասես պատիժ էր միասին լինելու երջանկության համար»: «Իմ նիհար մարմինը հյուժում են հուզմունքի դողդոջները, որոնց իմաստը նա չի հանդգնում պարզորոշ գիտակցել»: «Արտաքննապես մենք չենք գժտվում, մենք հանգիստ քայլում ենք կողք կողքի, սակայն մեր միջև ամեն ինչ դողում է, ասես մոտիկ կանգնած մեկը անդադար թրատում է օդը»: 20 տարեկանից նա ուներ որոշակի սեռական փորձ, սակայն կամ պատահական, կամ պոռնկատնային, կամ տխրալի: Ֆելիցայի հետ ընտանեկան կյանքի հեռանկարից ազատվելուն նրան վերջիվերջո օգնեց ի հայտ եկած թոքախտը: Նշանդրեքով նման մի պատմությունն նա ունեցավ և մի չեխուհու հետ կապված, բայց պակաս ցավալի ու ավելի կարճատև: Վերջապես իսկական սիրո նման ինչ-որ բան նա ապրեց մեկ ուրիշ չեխուհու, Միլենա անունով իր վիեննացի թարգմանչուհու հետ՝ երիտասարդ, ամուսնացած, տաղանդավոր, դժբախտ, ջանասեր, նրբագգաց, կենդանի: Սակայն պարզվեց, որ նրա հետ Կաֆկան ... իմպոտենտ էր, փոխարենը նրան ուղղված նամակներն ասես ուրիշ մարդ էր գրել: Նրա վերջին սիրո առարկան Լեհաստանից փախստական, նրան աղջկա տեղ եկող ու սիրոնիստ Դորան էր, որի հետ նա վերջում հանդգնեց թողնել չեխական «Կորսիկան» ու փորձեց բնակություն հաստատել գեղուն գերմանական Բեռլինում: Ինչը պետք է աներ 10 տարի առաջ, ինչպես մի անգամ գրի էր առել իր օրագրում: Սակայն հասկանալ՝ ամենևին չի նշանակում ցանկանալ: Կաֆկայի անվեհերությունը ստեղծագործական էր ու նման բաների վրա չէր տարածվում: Ինքնուրույն կյանքի հանդեպ նա

տազնապալի սարսափ էր զգում ու զգվանք և անկարող էր դրա դեմն առնել: Անգամ 30 տարեկանից հետո ծնողներից առանձին բնակվելով, նա շարունակում էր ճաշել ծնողների մոտ:

Արդյունքում Կաֆկան, այնուամենայնիվ, ստացավ ընտանեկան կյանքին նմանակող իր վեց ամիսները, իր գրական գործերը համեմատական կարգի բերելու համար, հոգատար Դորայի հետ: Բեռլինում նա տպագրության պատրաստեց պատմվածքների ժողովածու և գրեց «Երգչուհի ժողջինան, կամ՝ Մկնային ժողովուրդ» հանճարեղ առակը (սաստկացող թոքախտի պատճառով նա ինքն էլ արդեն մկան պես ծվծվում էր): Հետո հաջորդեցին հոգեվարքի երեք ամիսները՝ Պրահա վերադարձով ու Վիեննայի մերձակա առողջարանում մահով: «Կաֆկա» բառը չեխերեն նշանակում է «թռչնակ»՝ սգո թռչնակ (և ավագ Կաֆկայի առևտրանշանը):

Իզական սեռի հետ Կաֆկային տանջող խնդիրները արդյունք էին սեփական սեռի հետ նրա պայքարի: Եվ դրա պատճառը ոչ այնքան, այսպես կոչված՝ ծածուկ համասեռականությունն էր (չնայած և ոչ առանց դրա), որքան որ ընդհանրապես սեռից հրաժարվելու և դեպի Արարիչ «հետդարձի ճանապարհը» բռնելու մեջ էր: Յուրօրինակ աստվածամարտություն, որ սնվում էր մարդկային բնության կենդանական կողմի, սեփական մարմնականության հանդեպ նողկանքից: Այստեղից էլ ապակողմնորոշումը, նրա ապրած ժամանակաշրջանին ու միջավայրին բնորոշ երևեկայություններ եռակի պոլիգամ ամուսնությունների մասին (գրեթե ինչպես անեկդոտում՝ որպեսզի ավելի հեշտ լիներ «գլուխ պահելը»):

Նվագ ուժգնության, բայց նման խնդիրներ Կաֆկայի մոտ կային իր հրեա-

## Գեղarm Աշուն 2016

կանության վերաբերյալ, որքան էլ որ ուղղադավան հրեաներն ու սիոնիստները փորձում էին ընդգրկել նրան իրենց շրջապատը կամ գոնե հետին թվով ներկայացնել «յուրային»: Հայտնի է՝ ինչ անակնկալի բերին Կաֆկայի օրագրերը նրա մոտիկ ընկեր ու դրանց հրատարակող Մաքս Բրոդին, որտեղ, մասնավորապես, Կաֆկան գրում է. «Ի՞նչ ընդհանուր բան ունեն ես հրեաների հետ: Ես անգամ ինքս ինձ հետ քիչ ընդհանրություն ունեն ...»: Մեծամիտ ու բժախնդիր արևմտյան հրեաներին նա միանշանակ գերադասում էր արևելյան հրեաներից՝ անփույթ ու կենսուրախ: Սինագոգի ստիպողական այցելությունները մանկության տարիներին նրան ճնշում էին ոչ պակաս, քան ավելի ուշ շրջանի չինովնիկական տաժանակրությունը (իմիջիայլոց մինչև ցերեկվա ժամը երկուսը): Պարբերաբար Կաֆկայի աստվածամարտությունը ստանում էր գնոստիցիզմի երանգ, որ համահունչ էր «Աստծո մահվան» և «աստվածների մայրամուտի» մասին այն ժամանակվա տեսություններին. «Մենք Նրա վատ տրամադրության լույ մեկ դրսևորումն ենք: Նրա մոտ անհաջող օր էր»: Սակայն մեկ այլ տեղում նա պնդում է, որ «միայն Հին Կտակարանն է պարզ տեսնում»: Եվ այստեղ է Կաֆկայի անհատականության և ամբողջ ստեղծագործունեության բանալին: Հին Կտակարանի Աստվածը անհասանելի ու անիմանալի է ոչ միայն նրա, այլև ընդհանրապես մարդու համար: Հենց դրա մասին են Կաֆկայի գլխավոր վեպերը. ասես դժնից դուրս քված Եհովան պատուհանից վերադառնում է նրա մոտ: Կաֆկայի ինքնահերոս հողաչափ Կ.-ն Ամրոց ներթափանցելու կամ գոնե դրա ներքին կառուցվածքը հասկանալու ապարդյուն փորձեր է անում (և Ամրոցը

յուրօրինակ ծաղրանկարային «երկնային գրասենյակն է», իսկ նրա ստորոտի Ավանը՝ մարդկանց աշխարհը): «Դատավարություն» վեպում նույն Յոզեֆ Կ.-ն փորձում է ստանալ օրինավոր դատավարության ընթացքում օրենքով դատվելու իրավունք (այստեղ Աստծո Դատաստանը հետընթաց է ապրում մինչև անանուն, անհեթեթ ու անօրեն դատաստանի մակարդակ): «Օրենքների հարցի շուրջ» առակում Կաֆկան հստակ արտահայտել է բողոքի էությունը. «... վերին աստիճանի տանջող ինչ-որ բան կա դրանում, երբ քո վրա իշխում են այն օրենքներով, որոնց դու ծանոթ չես»: Եվ լրիվ ոչնչացնող է այդ մասին նրա խոսքն «Օրենքի դռան առաջ» բիբլիական հզորության առածում:

Սակայն առանց Որդի-Աստծո քավիչ զոհողության Հայր-Աստծո հետ անհնար է որևէ կապ, չկա արահետ դեպի Նա: Եվ Կաֆկան իր անձնական կյանքում սաստիկ ցանկանում էր ստանալ քավիչ զոհողության գոնե փոխնյութ, որպեսզի ինչ-որ մեկը նրա նկատմամբ սիրուց ու հանուն նրա տար այդ զոհը եւ դրանով իսկ փրկեր նրան՝ ազատելով մեղքի զգացումից: Որպեսզի, ինչպես Դոստոևսկու մոտ, սիրեին նրան՝ «սևուկին», ինչպիսին որ նա իրեն զգում էր: «Իրականում բոլորովին էլ այդ նամակները չես ուզում, այլ ընդամենը երկու-երեք սրտակից խոսք լսել, ոչ ավելին»: Կամ էլ ուղիղ երեսին. «Իսկ հետո դու թռար վերելակի մեջ, փոխանակ պարոն Բրոդի վրա ուշադրություն չդարձնելով, շշմափր ականջիս. «Մեկնենք միասին Բեռլին, թող ամեն ինչ ու՛ գնացինք»: Բայց այդ ժամանակ մենք այսպիսի Կաֆկա չէինք ունենա:

Արդյունքում նրան էլ բաժին ընկավ առանց դատ ու դատաստանի զոհողությունը: Ու այդ ամենը զարհուրելու

## Գեղarm Առն 2016

չափ մռայլ ու անելանելի կլինեն, եթե չլինեն մեզ համար որպես դեղամիջոց նրա թողած հոյակապ արձակը: Դրա զաղտնիքը անհեթեթության ու գրոտեսկի պոետիկայի, ողբերգությունը սև կատակերգության փոխակերպելու, խելագարությունը մոլագարությամբ հաղթահարելու և իռացիոնալ քառսին լեզվի, կամ եթե կուզեք՝ գիտակցության միջոցներով ձև տալու մեջ է:

Կաֆկայի օրագրում փողոցում նրա հետևից ընկած խելագարի հետ զրույցի մի գեղեցիկ վերապատում կա, որն այսպես է վերջանում. «Ինչ թարմացնող ազդեցություն է թողնում կատարյալ հիմարի հետ զրույցը: Ես համարյա չէի ծիծաղում, ես միայն կարգին աշխուժացած էի»: Կա նաև ավստրիացի հոգեբան Բետելիայմի հիանալի գիրքը խաղաղ ժամանակներում համակենտրոնացման ճամբարում գոյատևելու իր փորձի մասին (պատերազմից կես տարի առաջ նրա բախտը բերեց համաներում ստանալ Զիտլերի ծննդյան օրվա առթիվ):

Արդեն մի քանի ամիս հետո Բետելիայմը սկսեց գիտակցել, որ կամաց-կամաց խելագարվում է: Նա հասկացավ, որ ինքն էլ է տարվել այն տարօրինակ զբաղմունքով, որին ինքնամոռաց տրվում էին բանտարկյալները, հենց, որ ազատ ընկած էին ունենում: Փոխանակ այդ ժամանակը օգտագործեին հանգստանալու, ննջելու կամ գիրք կարդալու համար, նրա բախտակիցները անվերջ քննարկում էին ճամբարային վարչությունում փոփոխությունների ու տեղափոխությունների հավանականությունն ու դրանց հնարավոր հետևանքները բանտարկյալների համար: Գուշակում

էին, թե ինչ է ստանալու վաղը ճամբարային խանութը: Կատաղորեն վիճում էին միջազգային քաղաքականության մասին (օրինակ, հանդես կգա՞ արդյոք Թուրքիան Գերմանիայի կողմից պատերազմի դեպքում): Բետելիայմին ապշեցրած այդ զբաղմունքի ոչ նորմալ լինելն ակնհայտ էր: Չէ՞ որ բանտարկյալները զուրկ էին որևէ տեղեկատվությունից այն մասին, ինչ այդպիսի ուժգնությամբ քննարկում էին, քանի որ ճամբարում երբեք ոչ մի բանի մասին հայտնի չէ (ինչպես և մեզ բոլորիս՝ տիեզերքի մեջ մեր դերի ու տեղի մասին): Նրանք ավելի շատ նման էին կոնտրադիայի ենթարկվածի կամ ոչ համարժեք մարդու (ինչպես Կաֆկայի հերոսների մեծամասնությունը նրանց «ծուռ» տրամաբանությամբ ու հանելուկային պահվածքով):

Բետելիայմն ու Կաֆկան խելքները չթռցրին, որովհետև կարողացան գրքեր գրել խելագարության վարակիչ լինելու ու դրան դիմադրելու մասին: Նույնը կարելի է ասել Լյուիս Բերոլլի ու նրա հերոսուհի Ալիսայի մասին, անհեթեթության թատրոնի դրամատիկ գրողների ու պիեսների, որոշ սյուրռեալիստների ու ակնընդակալ գործող մեր օբերուկոսների մասին: Իսկ ահա ձեռներեց ու շրջահայաց Յոզեֆ Կ.-ն ու հողաչափ Կ.-ն, պարզվեց, որ դատապարտված են: Առանց զոհերի մեզ մոտ ոչինչ չի լինում՝ ոչ լավ, ոչ վատ:

Ռուսերենից թարգմանեց  
Գայանե ԲԱԽՏԱՄՅԱՆԸ

## ԳԻԿՈՌՈՍՆԵՐԻ ԿՆՔԱՀԱՅՐԸ



Յուրի Բելիկովը արդի ռուս բանաստեղծ է, արձակագիր, էսսեիստ, գրաքննադատ, լրագրող: Նա առաջատարն է «Վրեմիի», «Ստրոնցիովի գավակները», «Պոլիսբյուրո», «Մոնարխ», «Դիկոռուսի» գրական-բանաստեղծական միավորումների, «XXI դարի գրողների միության» ստեղծագործական բարձրագույն խորհրդի կազմում է՝ որպես Իլյա-մրցանակի հանձնաժողովի անդամ: Ծնվել է Պերմի մարզի Չուսովոյ փոքր քաղաքում, 1958 թվականին:

Բելիկովի գրական կնքահայրը եղել է անցյալ դարի 60-ականների

սերնդին պատկանող հայտնի բանաստեղծ ու գրաքննադատ Պյոտր Վեգինը /իսկական ազգանունը՝ Մնացականյան/, ում ժամանակակիցներն ընդունում էին Անդրեյ Վոզնեսենսկուն, Եվգենի Եվտուշենկոյին հավասար: Ահա թե ինչ է գրել ինքը՝ Բելիկովը Վեգինի մասին. «Շատ կարեւոր է, թե քո ճանապարհին առաջինը ով կհանդիպի քեզ... Ինձ համար դա Պյոտր Վեգինն էր: Նա է եղել ու մնում առաջինը գրականության աշխարհից, ով իմ՝ այն ժամանակ քսանամյա ուրալցի տղայիս մեջ տեսել է բանաստեղծին»: Իսկ տեսել է Վեգինն այսպես. «Նա վառ է ու շռայլ: Նրա բանաստեղծություններում շրջադարձերը կտրուկ են, ինչպես եւ՝ կյանքում... Բելիկովի բանաստեղծությունների շարժիչ ուժը Սերն է եւ Արդարության ծարավը՝ ամենաքիչը Մարդկության մասշտաբով»:

Ե.Եվտուշենկոն իր կազմած «Ռուսական պոեզիայի տասը դարը» անթոլոգիայում Բելիկովին կոչել է «Պոեզիայի ժամապահը Չուսովոյից»: Յուրի Ալեքսանդրովիչը ներկայացված է եւ «Ռուս քնարերգության անթոլոգիա. 20-րդ դար» գրքում: 2015 թվականին նրան ներառել են եւ «Ռուսական *բեզորբեժեի* հարյուր բանաստեղծները» գրքում: Բելիկովին անվանում են «Ռուս պոետների Մահաքմա»: Նա Վելիմիր Խլեբնիկովի անվան «Բանաստեղծի խաչ» եւ Դոստոևսկու՝ 1-ին աստիճանի շքանշանների ասպետ է: Նա եղել է «օգոստոսյան պուտչից» Սպիտակ տունը պաշտպանողների առաջին շարքում...



Յուրի ԲԵԼԻԿՈՎ

/Ռուսաստան/



\* \* \*

Երբեք չեմ եղել ես Հայաստանում:  
Բայց որքան ամուր,  
բայց ինչ ուժով է կծկվել այնտեղ  
երկրի մկանը,  
որ այս ծեր հայր  
Պերմում է հայտնվել:

Գլխին ծակոտկեն լայնեզր գլխարկ՝  
շրջում է թափառ,  
թե ընկնի հանկարծ իր ճենապակյա քթի վրա,  
բանալիները կթափվեն սահքով գրպանից նրա:  
-Թե՛ յնիկ, թե՛ յնիկ,- երեխաներն են կանչում հետեւից:  
Իսկ նա՝ թեյնիկը, քերծվածքների մեջ,  
վարդերը՝ թափված,  
տրամվայ ելնելիս հիշում է միայն  
տաբատի մասին. հարկ է վեր ձգել,  
ապա դիմում է երեխաներին,  
որ կեղտից փայլող ու վերարկուի տակից դուրս եկած  
օձիքը շտկեն:

Բանալիները կհավաքի հայն՝  
ինչպես իրեն խորթ մորեհատիքը,  
կհավաքի՝ եւ կհաշվի միտքը  
/տա՞ն բանալին է, չիրկիզվողի՞, բանալին սրտի՞,  
իր սիրած կնո՞ջ, իր մեքենայի՞/  
հետո գունաթափ թաշկինակի մեջ ամբողջը կառնի՝  
հանգույցն ամրացնի ժանգոտ քորոցով, որ ամուր պահվի:  
Եվ, օ՛, այդ պահին քորոցի բարակ, սուր ծայրն, ընդամին,  
կուզենար խրել ու՞մ կող, ու՞մ մարմին  
/թիթեռի՞, արդյոք, Նոյան տապանի՞, թե՞ նախագահի/:

Ես կհարցնեմ. «Հայրիկ, ասա ինձ ...»,  
-Չե՛մ տա,-  
... կինչի ձայն Կամչատկայից:

## Գեղarm Առն 2016

Անտուն աշխարհը - աշխարհը ամբողջ՝ թիթեռից ընդհուպ մինչև նախագահ-  
երկար կխնդրի այդ մարդուն՝ հանձնել բանալիները,  
բայց ի պատասխան «Չե՛մ տա»-ն կհնչի  
...հեռու խորքերից տիեզերական:

1979

### ՊԱՏԱՍԽԱՆ ՋԱՆԳԵՐ

Կայծակը,  
Ինչպես երակը՝ դեմքին,  
ցնցվեց.  
որտա՞ր -  
որտա մի ասա, այլ՝ դիպուկահար-  
թափվող կաթիլքի օպտիկական նշանացույցի  
միջով դղրդաց:  
Սակայն անտան էլ,  
մինչև գետին հեզ թեքված, կորացած,  
մթնեց զայրույթից  
ու ճարպկորեն,  
ասես գրգռված մետաղադոց՝  
սղոցել սկսեց ծերուկ ամպերին:  
Եվ այնտեղ, որտեղ  
ատելով աղմուկ-հարայիրոցը՝  
լռում էր ոստը տյուտչեալարի,  
ճշոց էր ելնում կոտրվող ճյուղից:  
Չայնով հալածուն՝  
խսկույն հնչեցին  
հնչյուններ վայրի,  
եւ գլուխկոնծի  
տվեց  
անտառը՝  
ինչպես ծաղրածու՛:  
Իսկույն փոթորկի խենթ գրոհի տակ  
ճռռոցով իրեն պոկելով հողից:  
Խաղաղ՝  
հանդես է գալիս նա իրեն որպես հռչակող,  
քնքույշ՝ սպառնում ծեծ ու քոթակով:  
Ու որքան շատ էր հեղեղը գգում՝  
անքան ուժեղ էր ծեծվող անտառը  
ձեռնասողոցի նման խզխզում:

## Գեղarm Առն 2016

Իսկ երբ երկնքից թափվեց արեւի խարտուքը տաքուկ,  
ծոծրակի ծոված բներն ուղղելով՝ հաճույքից թաքուն  
մի պահ համրացավ անտառը դեռ թաց:  
Եվ ահա, ինչպես երեխաները՝ մանկապարտեզում,  
կեչիներն արդեն կաժանով զույգ-զույգ քայլում են, նազում,  
եւ օրորվում են օդում գինդերը նրանց՝ պար բռնած,  
թաթմանիկների նման ճիշտ ու ճիշտ ռեզինի վրա:

### ԳԱՂՏՆԻ ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

Նստում եմ գրասեղանի մոտ թե չէ, տեսրը բացում ու ձեռքս առնում  
գրիչը թե չէ՝ իմ թիկունքում մեկեն ինչ-որ մեկը հառնում,  
դպրոցականի մոր նման կանգնում է գլխիս  
եւ շունչը պահած՝ խանգարում գրել:

Հետ եմ նայում՝ չկա ոչ-որ... Ձեռքս նորից եմ ահա թղթին տարել:  
Բայց նրա ու գրչի միջեւ մղոններ կան ասես քարե:  
Ո՞վ է կանգնածը գլխիս. ահով շրջվում եմ թաքուն՝  
նույն տունն է դատարկ: Նույն թուղթը մաքուր:

Հավերժությունն ես եթե, գնա՛: Տեսնում ես՝ թույլ եմ ու երկչոտ:  
Եկամուտ է ժամանակն ինձ համար, ես՝ կաշառասունը ստվերի եւ լույսի,  
Հավերժությունն ես թե դու, գնա այնտեղ, ուրկից եկար:  
Կապտաթուխ եղրեւանու աղավնիքը պատուհանին դունդունու՛մ են ինչպես:

Թու՛յլ տուր ես էլ բոլորի պես քաղեմ սնկերը ցածրասորտ,  
եթե սպիտակները չկան: Յույց տուր անվստահություն, այն էլ  
այնպես՝ որ չեխոն հանեմ մագնիսից խորքի,  
ոչ թե՛ տայմեն:

Ուր որ է կարթը կկտրվի: Գիշերն սպինինգվում է լուսնով,  
Ճչում եմ՝ ժամանակ, օգնի՛ր: Ձեռքս շուտով կհոգնի:  
Բայց այն պոչն է խաղացնում: Հավերժությունն է կանգնած գլխիս:  
Ո՞վ, արդյոք, ու՞մ կհաղթի: Դուրս կքաշի՞, թե՞ կտանի ավելի ներս:

### ՄՐՏԱԾԱԳ

Յուրտ ու սառած անտառներով  
գնում է գայլը մարդկային աչքերով՝  
տարակուսած այն մտքից,

որ ցից մազածածկույթի տակ  
իր սիրտը տարտամ

## Գեղarm Առն 2016

սահուն աշխատում է կրկին:

Իսկ տերեւփուշը քամու մի փչելով  
տերեւփշին կպչելով՝  
ճրթում է կարճ միացությունից,

Փետրե բեկորները սոսնձելով՝ խաժկտիկը,  
ինչպես Ամանորին՝ կարմիր փուչիկը,  
օրորվում է եղեմու ճյուղին:  
Կատարվող բոլոր աղետներից՝  
անմարդկային աչքերով,  
թափառում է մեկը քաղաքներով

Եւ մարդկանց, ասես անհավատների,  
հայտարարում,  
որ սիրտ չունի, որ ա՛յն ունի, ինչը չունի անուն:

Եվ մարդկային աչքերով գայլի համար  
այնպե՛ս սարսափելի է գայլերի մոտ,  
իսկ մարդու համար՝ նրա՛նց, որ

մարդ են կոչվում դեռ  
ու շարունակում ծիծաղել՝  
որ մարդ չէ արդեն:

### ՄԱՏՆԵՐԸ

*Աղքատ պառավը մահակով  
Իմ խաղաղ դիակը կշարժի՞:  
Ալեքսանդր Բլոկ*

Աղքատ պառավը մահակով  
իբ նման կենվորների հանգով  
կանգնել է, ձեռքն առաջ մեկնել,  
որն ափ ունի, բայց չկան մատներ:  
Ռուսաստան, որտե՞ր են մատները քո:  
Այն բլրի հետե՞ւ, ներքո՞,  
Թե՞ այս: Չենք մատուցի: Ու չենք պատասխանի:  
Եվ դու էլ մատներդ խաչ չես անի:

Ո՞ր եզերքում են, Ռուսաստան,  
Սերմերիդ հետքերը պահպանված:

## Գեղarm Աշուն 2016

Չեչնիայու՞մ է քո ցուցամատը:  
Իսկ մատնեմատը՝ «Սպիտակ տա՞նն»:

Իսկ միջնամատդ՝ ծովի հատակու՞մ է.  
չխոսելու դատապարտված «Կուրսկ» սուզանավը:  
Ռուսաստան, մեծի մասին ես լռում եմ,  
քանի որ մեծը գոյություն չունի:

Այն ափը, որ բռնցքվելու անկարող է,  
ինքնանվեր երետույթ է:  
Դեռ չի գորում մոռանալ, թե  
ոնց է ցավում Վլադիկավկազ-ճկույթը:

Եվ Տերն ինքը, չթաքցնելով արցունքները,  
այդ մատների արանքով նայում-տնքում է.  
-Ով Արարիչ, որ ապրում ես վերը,  
դու՞ չես ասել, որ աշխարհը փռված է՝ հանց ափի վրա:

### ՆԱԽԿԻՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՃԵՊԸՆԹԱՑ ԳՆԱՅՔԸ

Գնացքն ընթանում էր՝ թափվելու պատրաստ,  
զրնգոցով, կրճտոցով՝ հրաշքով միայն  
դեռ դիմացող հեղույսի վրա միակ,  
եւ երկու անգամ «Սահմա՞նն է» գոչելով՝  
ուղեկցորդուհին շորորալով գնաց  
երկու մաքսատուն պատվելու գինով:  
Գնացքն ընթանում էր, գիշերային ճեպընթացն, ընդ որում,  
այդպես երեխան է հաստ վերնակներում  
գլուխը խոր թաքցնում խավարից,-  
գնացքը դանդաղում էր, սողում, կարճ ասած՝ չէր գնում,  
սպասում էր՝ ասես զրկված հոսանքից,  
բայց լուսավորում էր շենքերը շրջակայքի:  
Անցնում էր գնացքը քաղաքների եւ գյուղերի կողքով՝  
սահանցող դարեր,  
մարդուն երկու մասի բաժանելն իր չնկատելով անգամ.  
ի՞նչ մի չտեսնված բան՝  
մեջտեղից կիսել է մարդուն. քչերի՞ն է, իբր, այդպես արել:

Գլխավորն այն է, որ ուղեորները կան,  
եւ բրիգադին էլ կարելի է չփոխել:  
Ախր ինչի՞ ողջ գնացքակազմն իմանա,  
որ անիվների տակից ջլեր են դուրս թռչում եւ աղիներ,  
որ դժբախտացել է ինչ-որ մեկի մայրը,

## Գեղarm Առն 2016

որ գնա՛ցքն է մարդասպանը,- դա ի՞նչ է տալու,  
եթե կենդանի են ուղեւորները, կարիք կա՞ վշտանալու:

Կարելով-կարկատելով նախկին կայսրությունը՝  
պահպանել է հարազատությունն արյան  
ու նրա հետեւից, դեռ կենդանի,  
վազել մինչեւ ամենածայրը՝  
սեխերը մոլորակների պես փռելով նրա  
փակ սրահակների վրա:

### ՃԻՉԵՐ ՔՆԻ ՍԵՋ

Նրա համար, որ մայրս ճշում է դառնադի  
քնի մեջ, շնորհակալություն՝ ասում եմ  
երկրիս հարազատ  
եւ այն երկրին նվիրում ճիշտ կատադի:

Ոչ թե սանձալույծ համբավդ, երկիր,  
այլ թե ճիշդ քո ճանաչիր - առ այն,  
որ լոկ հարթմնի վիճակում չէ, այլ  
երազում էլ ես դու սարսափելի:  
Երբ տաք են արյամբ լի-լցված լճակ,  
եւ դառն են զինաց սեւ ծուխ ու վառող,  
ճչա, երկիր իմ, ճչա՛,  
եւ սակայն՝ քո՛ ձայն ու բառով:

Երկիր՝ հանց ծուղակ: Սուկում է, շաչում  
ինքնաթիռն օդում...  
Քնի մեջ՝ սակայն չի քնում մայրը,-  
լսե՛ր օդաչուն:

Մայրն ամուր կոխ է բռնել քնի հետ,  
ճիչին հսկում է մայրը փաստացի,  
որ հանկարծ թաքուն չմտնի իր մեջ՝  
ուրկից էլ որդու երազ թափանցի:

Ես իմ մայրիկի քունը հսկել եմ  
մինչեւ իսկ երրորդ աքլորականչ,  
բայց երկրի՛ս ճիշդ ո՞նց քշեմ անդարձ  
մորս քնից ու վատ երազներից:

Իմ սուր հայացքով ուզում եմ հատել

## Գեղarm Առն 2016

երկիր, թանձրացող սառնամանիքդ,  
ուր յուրաքանչյուր երրորդը կատ է,  
իսկ մայր քաղաքը՝ անվանյալ Կատին:

Մի՞թե աղմիրալն հիմա էլ պիտի  
մի հսկա ցամաք կտրի անցնի,  
որ Ուրալ կոչված բյուրեղապակյա  
դագաղը երկրի ուտով ետ շրջի:

Իսկ եթե տնկենք խնձորենիներ...  
Օ՛, մի խանգարեք, լավ միտք է գալիս:  
Այնպե՛ս եմ ուզում մորս, արդարեւ,  
Քնի մեջ տեսնել անհոգ ժպտալիս:

### ԳԱԶԱՆԻՆ ԳԱՎԱՃԱՆԱԾ ՍԱՐԳԸ

Ես մեռնում եմ շան մեջ, որին մատնել եմ:  
Վախճանիս եմ սպասում:  
Որովհետեւ հետքս ճանաչելով՝ այն հետք չի համարել  
այս աշխարհում:

Փրկել էի շնորսներից, խնամել, վարժեցրել նոր անվան,  
ու հանկարծ՝ մատնություն:  
Օ՛, որքան հավատ կար եւ տառապանք  
շան շճած հայացքում:

Մարդուն չի կարող մատնել ձեռնասուն դարձած գազանը -  
բան է հայտնի:  
Բայց մարդը - սանը ճիպտտի եւ մտրակի -  
գազանին կմատնի:

Համեմատելի՞ է, արդյոք, այդ ու մյուս կորուստը:  
Ես խղճում եմ մարդկանց.  
քանզի ո՛չ մարդու՝ այլ գազանի դավաճանությունը  
խաչ է՝ ծանրից էլ ա՛նց:

Ո՞վ Հիսուսի հետ Գողգոթա ելավ աննկատելի:  
Կպել էր ստվերի նման:  
Պետրոսն ուրացավ, ու լվերը չկծեցին նրան:  
Շուն չէր, այնուամենայնիվ...

Գուցե թե նա ամենանվիրյալ  
առաքյալն էր Նրա,

## Գեղarm Աշուն 2016

թեև չի նկատվել ոչ պահակների, ոչ հոտի կողմից.  
«Ու-ու՛...Սի՛ սպանաներ»:

Եվ ալիք տվեց, մռլտաց մարդկային աղբանոցը. «Վե՛րջ ...  
Հասավ ժամը քո»:  
- Մարդի՛կ,- աղաչեց նա,- իմ մեջ մեռնում է շունը...  
Ի դեպ՝ եւ ձե՛ր մեջ...

Եվ կախաղանասյան ձայնը չէր՝ ճռուց խաչափայտը  
ի պատասխան: Պոկվեց հառաչանք:  
Եվ, տատանվելով, անդենական քամիով լցվեց  
քիտոն-առագաստը:

Եվ այն պահից մինչ մահ աչքերը լույսի եւ խավարի  
աղետն ու սուգն էին.  
-Իմ մեջ մեռնում է շունն այն, Տե՛ր իմ Աստված,  
մատնել եմ որին...

Որքա՛ն հող է նա դարպասի եւ ցանկապատի մոտ  
փորել թաթերով: Հողոտ էր դունչը:  
Շուտով մինչեւ վերջ առանցքին հակառակ  
նա կշռջի երկրագունդը:

Միայն թե նախկին տիրոջը հասնի: Մոտիկ, ավելի մոտիկ:  
Կանչում եմ նրան:  
Ազատվում վզնոցից՝ ցատկում է, պտտվում երկու ոտին,  
ականջս լիզում:

Թաթերը ցնցվում են քնի մեջ: Իսկ երազը նույնն է.  
Միս եմ տալիս,  
կերակրում երկար եւ մշուշի միջով մինչեւ բարաքները տանում:  
Ու դավաճանում:

*Նախարան խոսքը  
եւ թարգմանությունները՝ ռուսերենից  
Նվարդ ԱՎԱԳՅԱՆԻ*



# Խ Ճ Ա Ն Կ Ա Ր

## ԱՄՆ-ում 16-րդ դարի Աստվածաշունչ է հայտնաբերվել, որում պատկերված է Մեծ Հայքի քարտեզը



ԱՄՆ Օրեգոն նահանգի Պորտլենդ քաղաքի Lewis & Clark քոլեջի ուսանողներից մեկը 1599 թվականին Լոնդոնում տպագրված Աստվածաշունչ է հայտնաբերել քոլեջի գրադարանի ներքնահարկում:

Ինչպես հաղորդում է CBC News-ը, այն էլիզաբեթ I թագուհու և Ուիլյամ Շեքսպիրի Աստվածաշունչն է եղել, որում հիշատակված է Մեծ Հայքի մասին:

Մասնագետների խոսքով՝ Աստվածաշնչի բացառիկ հրատարակության մեջ հիմնական գրառումներն արված են փայտի վրա՝ այն էլ բարդ պատկերագրումների միջոցով: Աստվածաշնչի «Եղեմի պարտեզի իրավիճակը» խորագրով բաժինն իրենից ներկայացնում է Սիջին Արևելքի հնագույն քարտեզը, որում պատկերված են Մեծ Հայքը (The Great Armenia), Սիջագետքը, Բաբելոնը և Պարսից ծոցը: Նշվում է, որ Աստվածաշունչը լավ վիճակում է գտնվում, որը կարող է համապատասխանել գրքերի պահպանության մերօրյա ստանդարտներին:

## Սավադոր Գալիի սյուրռեալիստական խոհարարական գիրքը վերաթողարկվել է ավելի քան 40 տարվա դադարից հետո



Սավադոր Գալիի մասին մտածելիս աչքերի առջև սովորաբար հայտնվում են հալչող ժամացույցներ ու այլ սյուրռեալիստական կտավներ, սակայն հայտնի իսպանացի նկարիչը ունեցել է նաև մեկ այլ հոբբի:

Boredpanda.com-ը գրում է, որ 1973 թվականին Գալին Les Diners de Gala («Գալայի ճաշերը») անվանումով սեփական խոհարարական գիրք է թողարկել, որը միայն մեկ անգամ է հրատարակվել:

Նշվում է, որ Taschen ընկերությունը վերաթողարկվել է Գալիի խոհարարական գիրքը՝ պահպանելով արտասովոր ու գեղեցիկ դիզայնն ու պարունակությունը: Վերջին 40 տարվա ընթացքում առաջին անգամ վերաթողարկված գրքի մեջ 136 բաղադրատոմս կա, որոնք ոգեշնչված են Գալիի ու նրա կնոջ՝ Գալայի, տված հանրահայտ ճաշկերույթներով, ներառյալ գորտի ու հորթի մսով ու խխունջներով ճաշատեսակներն ու Գալիի սյուրռեալիստական նկարագրողումները:

**Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

**ԸՆԹԵՐԱԿԱ ՈՒ  
ԳԱՇՆԱԿԻՑ ԵՎ  
ՈՉ ՄՐՑԱԿԻՑ**



Պոեզիայի թարգմանության տեսությունը նախընթաց շրջանում բավականաչափ կանոնացվել է, թեպետ դրա համար նախադրյալներ քիչ կան. արվեստների մեջ պոեզիան թերեւս ամենասուբյեկտիվն ու ամենախնտիմն է, իսկ նրա թարգմանությունը, հասկանալիորեն, կրկնապատկվում է այդ հատկանիշներով: Նման իրավիճակում մեծամասնության համար ընդունելի կանոններ ու սահմանումներ դժվարությամբ են գտնվում: Այնուհանդերձ, դրանք ձեւավորվում ու շրջանառվում են, բայց եւ՝ միանգամից հայտնվում բանավիճային հոսքում: Հեղինակի ու նրա տեքստի հետ կամովին թե պարտադրված դաշինքի մեջ մտնելով՝ թարգմանիչը մատուցում է մի ստեղծվացք, որտեղ իրար հետ լուռ եւ անտեսանելի հակամարտության մեջ են ստեղծագործական երկու «եսեր»՝ հեղինակային ու թարգմանչական /այս եւ հետագա դատողությունները բացառապես տարածվում են որակյալ բանաստեղծությունների եւ որակյալ թարգմանչի միջեւ առկա հարաբերությունների վրա/:

Առավել իդեալական իրավիճակն այն է, երբ հեղինակն ու թարգմանիչը գտնվում են ստեղծագործական ներուժի գրեթե նույն մակարդակի վրա, իրար մոտ են գեղագիտական հավատամքով եւ, ըստ էության, կարող են միացյալ կարգով խփել նույն նշանակետին: Բայց անգամ իդեալական իրավիճակում աննկատ ծավալվում է մի ներքին մրցակցություն, որտեղ նախընտրելի դիրքում է թարգմանիչը: Մշտապես առկա է գայթակղությունը՝ զարգացնել հեղինակային մտահղացումը, տեքստը դարձնել առավել հետաքրքիր, ուժեղ՝ բովանդակությամբ եւ առավել տպավորիչ՝ գեղարվեստորեն: Ահա այս կետում է իր որոշիչ դերը

## Գեղarm Աշուն 2016

խաղում թարգմանչի ստեղծագործական կողմերը կամ, գուցե ճիշտ կլինի ասել՝ նրա աշխատանքային վարքականոնը:

Թարգմանական սկզբունքներն այն հիմնական գործիքներն են, որոնք ի վերջո վճռում են թարգմանության տեսակը, որակը եւ դրա հեռանկարը: Եթե թարգմանիչը հակված է հարկատու լինել սեփական փառասիրությանը եւ առավել կարելուում է իր «եսը» թարգմանության մեջ, ապա նրա վերստեղծածը զգալի հեռավորություն է ունենալու հեղինակային տեքստից, մի երեւոյթ, որը, իմ դիտարկմամբ՝ չի դրվատվում ներկայիս գրական գործիչների ու գրասերների մեծամասնության կողմից: Անշուշտ, կարելի է անտեսել մեծամասնության կարծիքը եւ փորձել առաջ տանել շեղված թարգմանության պրակտիկան. քեզ ոչ ոք դրա համար կախաղան չի հանի: Սակայն միանգամից ծագում է հարցը՝ արդյո՞ք բնագրից զգալիորեն զանազանվող թարգմանությունն առավել արժեքավոր կարող է լինել գեղարվեստայնության, հեղինակային ինքնատիպության եւ ստեղծագործական ճշմարտացիության տեսանկյունից: Թարգմանչական իմ փորձառությունը տալիս է այդ հարցի հստակ պատասխանը՝ ոչ: Բնօրինակից էապես շեղված թարգմանությունը, անգամ պոեզիայի պարագայում, ուր շեղումներն ուղղակի անխուսափելի են, երբեք չի կարող ունենալ գրական ու տեղեկատվական այն նշանակությունը, որն առակա է այսպես կոչված՝ բնագրատիպ թարգմանության դեպքում:

Պոետի համար միշտ էլ իսկական փորձություն է՝ թարգմանել մեկ ուրիշ պոետի բանաստեղծությունը: Պոետ-թարգմանիչը լուրջ պատճառ ու առիթ ունի սեփական դրոշմը թողնել թարգ-

մանվող տեքստի վրա, ցուցադրել ստեղծագործական իր հմտությունը եւ տեքստի՝ այլալեզու զարգացման հնարավորությունները: Թարգմանական գործունեության թույլատրելի սահման կարելի է համարել այն գիծը, ուր թարգմանիչը, վերակերտելով բանաստեղծության իր տարբերակը, խորանում ու բարձրանում է ընդհուպ համահեղինակի մակարդակ, հեղինակի հետ գրեթե հավասարապես կրելով տեքստային ողջ պատասխանատվությունը ձեւի եւ բովանդակության հարցերում: Համահեղինակության կարգին առավելաբար հավակնում են պոետ-թարգմանիչները, հատկապես նրանք, ովքեր լիովին գնահատելով հեղինակային տեքստի արժանիքները, նաեւ չեն զլանում ասպարեզ հանել սեփական թարգմանա-հեղինակային կարողություններն ու նախասիրությունները: Եվ նրանք հիմնականում հետեւում են, որ չհատեն համահեղինակության սահմանը, որպեսզի չվերածվեն նոր հեղինակի, որի գոյության իրավունքը միանգամից դառնում է վիճահարույց: Ստեղծագործական ինքնակառավարումը չկորցրած պոետ-թարգմանիչների անկեղծ ձգտումն է՝ պահպանել թարգմանչի կարգավիճակը, չապստամբել հեղինակի դեմ:

Կարելի է այստեղ ճշտորեն նկատել, որ թարգմանությունը սովորաբար «հեղինակում» են փոխադրություն կատարողները, որոնք տուրք են տալիս սեփական գրական հավակնություններին եւ դրանք վերածում առաջմղիչ գործոնի: Չի կարելի ասել, թե փոխադրությունները գրական արվեստից ու հետաքրքրությունից դուրս են եւ փոքր է դրանց գեղարվեստական նշանակությունը. Ոչ, պետք է ուղղակի պարզորոշ նշել, որ դրանք փոխադրություններ են եւ ոչ թարգմանություններ: Լիովին ազ-

նիվ լինելու դեպքում թարգմանիչը պետք է նշագրի, որ իր նմանօրինակ աշխատանքը կատարված է այսինչ հեղինակի տվյալ ստեղծագործության մոտիվներով, ինչպես արվում է, օրինակ, կինոսցենարների պարագայում: «Փոխադրիչների» արվեստը այլ չափորոշիչներ ու գնահատումներ է պահանջում: Հայ գրողներից հիանալի փոխադրություններ են կատարել, օրինակ, Յ.Թումանյանը եւ Ե.Չարենցը, բայց նրանք նաեւ հրաշալի թարգմանիչներ էին:

Գրականության եւ գեղարվեստի շահի առումով, կարծում եմ՝ շատ ավելի ցանկալի ու գնահատելի պետք է համարել այն թարգմանությունը, որ արվում է ենթահեղինակային՝ ընթերակային /ասիստենտային/ անխաթար սկզբունքով: Նման աշխատանքը արժե որակել որպես ճշմարիտ թարգմանություն. սա այն դեպքն է, երբ թարգմանիչն իր ողջ տաղանդով ու պատասխանատվությամբ ձեռնամուխ է լինում հեղինակային մտահղացման վերապատկերմանը, ձգտելով, որ լեզվական նոր «հանդերձում» բանաստեղծությունն առավելագույնս մերձ լինի բնագրին՝ իր ձեւ ու բովանդակությամբ, իր ռիթմով ու բառամթերքի առանձնահատկություններով: Ընթերցողի անվիճարկելի իրավունքն է՝ համակողմանի եւ ստույգ պատկերացում կազմել բնագիր տեքստի մասին, տեսնել ու զգալ նրա իրական բնույթը, եւ այդ ամենը՝ բնագրային հարազատության ու ոգեկանության մեջ:

Իմ այս բանաձեւումն ամենեւին չի նշանակում՝ հակվել դեպի տողացի թարգմանություն: Բնավ՝ ոչ: Ես ջատագովում եմ գեղարվեստական թարգմանությունը, սակայն որը ոչ թե կամայականորեն վերստեղծում, այլ երկյուղածորեն ու ակնածանքով վերականգնում

է բնագիրը լեզվական մի այլ տարերքի մեջ: Կարծում եմ՝ սա է հենց այն ոսկե վարքականոնը, որն արժե կիրառել թարգմանական բարդ ու շնորհակալ աշխատանքում, երբ պաշտպանվում է հեղինակային նյութն իր գլխավոր բաղադրիչներով: Թարգմանչական մնացյալ մոտեցումները պետք է դասել փորձարարությունների շարքին:

Վերոշարադրյալն ամփոփելով՝ նշեմ, որ թարգմանիչն առավելագույնս պարտավոր է գերծ մնալ հեղինակի հետ մրցակցելուց, չգայթակղվել նրան հավասարվելու, ավելին՝ գերազանցելու մտքով: Թարգմանչի ստեղծագործական առաքինությունն է՝ հանդես գալ հեղինակին ու նրա տեքստը ճշմարիտ փայլով ներկայացնողի պատվախնդրությամբ: Թարգմանիչը պետք է գործի երկրորդ ջութակով՝ որպես տաղանդավոր նորապարզող ընթերակա, որպես դաշնակից-աջակից, որպես երկրորդ պլանի հիանալի դերասան: Թերեւս սա ամենաբարդ ուղին է թարգմանական ասպարեզում: Թարգմանիչը գործում է հեղինակի թելադրած սահմանափակ շրջանակում, եւ հենց այստեղ է, որ նա պարտավոր է լավագույնս դրսեւորել իր ուժը - մայրենի լեզվի եւ սեփական ձիրքի կարողություններով վերակառուցել օտարագիր բանաստեղծությունը:

Մյուսների պես թարգմանական նշյալ սկզբունքը միագիծ գործել չի կարող, բայց այն, ցանկալի է, որ առավելս տիրապետող լինի: Ոչ միայն յուրաքանչյուր հեղինակ, այլեւ յուրաքանչյուր բանաստեղծությունն մոտեցման որոշակի յուրահատկություն է պահանջում: Սեփական փորձից ելնելով նշեմ, որ թարգմանական գիծը բավական ալիքածեւ է Ի.Բրոդսկու, Ն.Գումիլյովի, Վ.Խլեբնիկովի, կոնցեպտուալիստների եւ, մասնավորապես, մետամետաֆո-

## Գեղarm Առն 2016

րիստների ստեղծագործությունների հայերենացման դեպքերում: Բայց տա-տանումներն առանձնապես մեծ չեն. դրանք ձգվում են «ընթերակա-համա-հեղինակ» միջակայքում: Որքան էլ ուժգնանում էին ցանկությունն ու գայ-թակղությունը՝ զանցառել հեղինակա-յին տեքստի կաշկանդումները եւ ազա-տորեն ճախրել նրա ընծեռած գեղա-վեստական ոլորտում, կարծում եմ ինձ հաճախակի հաջողվել է մնալ երկրորդ պլանում եւ հնարավոր զորությամբ մատուցել հեղինակային նյութն իր որակների գերակշիռ մասով: Կատա-րել գեղարվեստորեն ազնիվ ու ճշմա-րիտ թարգմանություն, եւ ոչ թե ընթեր-ցողին պարտադրել նոր տեքստ:

Այն իրականում գեղարվեստական ապատեղեկատվություն է եւ, չեմ կար-ծում, թե հանիրավի հորինված այդ նոր տեքստը կարող է գեղագիտական լուրջ կշիռ ու ազդեցություն ունենալ: Կանխատեսում եմ, որ մեր շեշտած ոչ մրցակցային՝ ընթերակային, որոշ չա-փով՝ համահեղինակային թարգմանա-կան սկզբունքը դեռ երկար ժամանակ հարգի եւ ընդունված կլինի գրական հասարակայնության մեծ մասի կող-մից: Այդ սկզբունքն են դավանում հայ ժամանակակից բանաստեղծ-թարգմա-նիչներից շատերը, նրանց շարքում՝ Յ.Էդոյանը, Յ.Մովսեսը, Յ.Թամրազյա-նը, Յ.Բեյլերյանը, Ն.Աթաբեկյանը, Շ.Մկրտչյանը եւ այլք, որոնց ազնիվ ու

նպատակային ջանքերով հայ ընթեր-ցողի սեփականությունն են դարձել Յին արեւելյան պոեզիան, Ռ.Մ.Ռիլկեի, Բ.Պաստեռնակի, Օ.Մանդելշտամի, Ի.Բրոդսկու եւ այլոց բարձրակարգ ստեղծագործությունները: Գեղարվես-տական գործը, ի մասնավորի բանաս-տեղծությունը, իր վերապատկերման մեջ հարկ է ոչ թե ձեւախեղել, այլ ստու-գապես ու գեղեցկորեն վերարտադրել, պահպանելով այնտեղ առկա ազգային կոլորիտը, ոգին ու ժամանակի հիմնա-կան նշանները: Ոչ մի ողջախոս ընթեր-ցող իր հոգեւոր-գեղագիտական պա-հանջմունքները բավարարելու համար չի կարողում թարգմանությունները, եթե տիրապետում է բնագրի լեզվին, նա կարողում է հենց բնագիր տեքստերը: Բնագրի լեզվին չտիրապետելն է, նա-խելառաջ, ընթերցողին /մասնագետ-բանասերներից բացի/ դրդում կարդալ թարգմանական տարբերակները, որ-պեսզի հնարավորինս ծանոթանա հե-ղինակային նյութի էությանն ու տեսա-կին: Թարգմանչի պարտքն է՝ լավա-գույնս բավարարել ընթերցողի այդ հիմնավոր պահանջը:

*Յողվածը՝ որպես զեկուցում,  
կարդացվել է Մոսկվայում,  
սեպտեմբերի 8-11-ը (2016)  
կայացած թարգմանիչների  
միջազգային 4-րդ կոնգրեսում:*



Literary translations

**Hrachya BEYLERYAN**

\*\*\*

The wind is yellow  
in this place,  
that's why our eyes are full of sands –  
the rusting sands – in the form of tears.  
In the wilderness lives the spiteful death.  
The wind is green  
in this place,  
that's why our sources are plugged  
by lichens and mosses.  
In our eyes the death grows like nettles.  
The death sprouts like sweat  
in this place,  
the death spreads out like fog  
but lives,  
a heart lives here in the barbed wire.

\*\*\*

A tame beast sobbed suddenly from inside–  
In its eyes were reflected far distances.  
And from the flower growing in my mouth flew the blood  
Which should be a word.  
If the hard knocks on the doors of solitude  
Are the knocks on my wounds,  
Who else dares to speak silently  
or to keep silent in the bosoms of words`  
Who else dares to do away

## Գեղարմ Աշուն 2016

With this old and crazy dance`  
How can I find now my crow stone  
Among such many stones`  
We aren't available to know what kind of thread  
Is used to spin our fates,  
He who's given us light taking our light  
Hurts himself indeed.  
We needn't any throat –  
The voice of desert hasn't stopped yet.  
And the stones which should be thrown away  
And gathered again, remain the same...  
An incredible grief will die in peace  
Pinned down hard in my bosom,  
Let the flower growing in my mouth makes flow the blood –  
The word meanwhile is being crucified.

### THE RIVER

The river doesn't search roads  
it flows instinctively  
toward its childhood.  
The river seems to be a vein on winter's body,  
and the breathing of fishes seems  
to be the vapor rising its along.

When the fog pulls out its fishing-net  
there will be seagulls fluttering in it,  
there will be stars and a heart  
there.

### TRANSFORMATION

The past and recurring seasons  
leave their salt on our faces  
like the daylight that touches the skin  
and traces the line of the time there.  
But another day comes  
and the light brightens from inside.  
On the white plane breed

## Գեղարմ Աշուն 2016

birds blind as the loss of memory,  
as the incidents that have broken away from us  
and found their embryo's dwelling place.  
These are the roads and the pathways  
that we want to imprison on our palms  
when we keep clenched our fists.  
But the roads are passing in our veins,  
the tracks are penetrating into capillaries.  
And it seems to us that all our footprints  
are nothing to be  
because we believe that we connect  
the memory to the brightness of stars,  
the fog brings an other atmosphere  
so that we can live in another area  
and the rainbow layer is just our voice  
which vibrates among the drops of rain.  
And we settle down  
in our voices as in motherland,  
the remission is easy there like a leaf  
which has fallen down from the tree of knowledge  
because whatever happens, our passing days  
are growing inside like a ripening fruit,  
and the miniaturist's autumn is falling down on the trees  
the conscious becomes transparent again  
the light becomes glided, and evening - glorious.

### PSALM

Ready fen spreads snow on the lakeside:  
the sunset fires three little canes.  
A trout blazes like blood  
on the pitted river stone—  
a floating moon, a scaly moon,  
a moving moon.  
Dear night,  
you've been already here  
springing from the three sources, —  
it's just noticed the mountain star  
hanging on the wind



Գեղարմ Աշուն 2016

in your far stream.  
There are three rays spitted by the fog  
and the wormwood's sweet smell.  
And from the wool of fog  
is born an offering lamb.  
What a clear blood it has.  
Dear night, your blood is blue.  
How impressive is your love under the vault`

\*\*\*


A crow sabred the full moon from the sky,  
You looked at its spread light  
And then you blinded like snow.  
Light gloves – on the soft fingers of rays.  
A hazy hand dangled in the darkness,  
A hand touched your head from the heaven.  
Everything will pass,  
Winter will pass,  
The stars will be consoled someday.  
The lampposts stand in the winter mist  
And from the posts are hung black stars.  
The night is soothing  
And heavy like sigh.

Translated from Armenian by  
Christina KOCHARIAN

**Վան ՀՈՒԻ ՄԻՆ**

/Չինաստան/

**ԵՐԿՈՒ  
ԱՆՁՆՁԵԼԻ ՀՈՒՑ**



Ես դժվար թե երբևէ մոռանամ այն երկու աղջիկներին. մեկին, ով ինձ էր սիրում, բայց ես անտարբեր էի, և մյուսին, ում ես էի շատ սիրում, բայց իմ սերը, դժբախտաբար, անպատասխան էր:

Առաջին աղջիկը Հունան անհանգի իմ ուսանողական տարիների համակուրսեցին էր: Նա հասարակ, չխոսկան աղջիկ էր, և հնարավոր է՝ հենց դա էր պատճառը, որ ես նրան չէի նկատում: Երրորդ կուրսում էինք: Մի օր նա գտավ ինձ, մի ճանաչված նամակ խցկեց ափիս մեջ և գոդի նման արագ փախավ: Բացեցի նամակը և ամեն ինչ միանգամից պարզ դարձավ: Այն ժամանակ ես կարծեցի, թե կատակում է, քանզի ես երբեք նրա մասին չէի մտածել և իմ սրտում նա տեղ չունեցրել: Հաջորդ օրը, դասի ժամանակ ես վերադարձրի նրան նամակը: Մինչև դասի ավարտը նա գլուխը չբարձրացրեց: Այդ օրվանից ի վեր, ինձ տեսնելուն պես, գլուխը իջեցրած, լուռ հեռանում էր:

Կիսամյակի վերջին ես ծանր հիվանդացա, մեկ ամսից ավել մնացի հիվանդանոցում: Ավարտական քննությունները մոտենում էին, և ես, զնալով, ավելի էի անհանգստանում: Երբեք չէի կարող պատկերացնել, որ նա կգար ինձ տեսակցության և այն էլ իր հետ կբերեր իմ ամենասիրած միրգը՝ դեղձը. ես, իրոք, շատ զգացված էի: Նա համ կտրտում էր, համ գրուցում.

-Ես քեզ չեմ մեղադրում,- ասում էր նա:- Չզացմունքների հետ կապված ոչինչ չի կարող ստիպողաբար լինել... Դու հանգիստ ապաքինվիր, իսկ դասախոսությունները կտամ քեզ, կօգնեմ՝ կլրացնես:

Օգտագործելով նրա տված գրառում-

## Գեղarm Առն 2016

ները՝ ես բարեհաջող հանձնեցի քննություններս: Համալսարանն ավարտելուց հետո գնացի Ջիանսու մահանգ, նա տեղափոխվեց Հունան: Հաճախ նամակներ էի ստանում նրանից, ինչը խոսում էր իմ նկատմամբ նրա շարունակական ուշադրության մասին: Հետո նա սիրահարվեց ուրիշին և ամուսնացավ, սակայն մենք, միևնույն է, մնացինք լավ ընկերներ՝ պահպանելով նամակագրությունը:

Ես նույնպես հանդիպեցի ուրիշ շատ աղջիկների, սակայն չկարողացա գտնել իմ սրտին հարազատ մեկին: Աշխատանքիս երրորդ տարին բոլորելուց հետո դիմեցի մագիստրատուրա: Հենց մագիստրատուրայի երկրորդ տարին ինձ համար եղավ ճակատագրական: Ես առաջին անգամ հանդիպեցի քիմիայի ֆակուլտետում սովորող մի աղջկա: Դա առաջին անգամն էր, երբ ես անկարող էի կառավարել զգացմունքներս: Նա Ֆուչոու մահանգից էր: Ուներ մեծ, պսպղուն աչքեր և սպիտակ գեղեցիկ ատամներ: Նա շատ մոդայիկ էր՝ դա անվիճելի է: Ջրուցելիս միշտ ծիծաղկոտ հայացքով նայում էր ինձ՝ շատ գրավիչ էր թվում: Նա իմ հին ծանոթ համաքաղաքացու հետ ապրում էր նույն հանրակացարանում: Ես ամեն օր գնում էի նրանց հանրակացարան՝ պատճառաբանելով, թե ծանոթիս եմ տեսակցում: Ընդամենը մեկ օր նրան չտեսնելը ինձ համար անտանելի էր: Այս տանջալի վիճակը տևեց մոտ կես տարի: Մի օր ես հասկացա, որ անկարող եմ ապրել այսպես: Հանդիպեցի նրան, շինծու անտարբեր ձևանալով, սկսեցի խոսակցությունս:

-Վերջերս մի ազդեցիկ պատմվածք եմ կարդացել,- ասացի ես: Նա հարցրեց գրքի խորագիրը:

-Մի սիրային ողբերգություն էր,- պատասխանեցի ես:- Տղայի և աղջկա սիրային պատմություն, որն այդպես էլ չբարձրաձայնվեց, քանզի երկուսն էլ ամաչում էին: Իսկ վերջում մնաց միայն ավստասանքը:

Ավարտելուն պես միանգամից հարցրեցի նրան.

-Երբեք եղե՞ր և սիրահարված մեկին, ում համարձակությունդ այդպես էլ չի ներել, որ խոստովանես: Նա միանգամից կարմրեց և շշուկով պատասխանեց.

-Եղել եմ:

-Դու, անկասկած, պետք է խոստովանես նրան: Իսկ նա որտե՞ր է ապրում,- ոգևորված հարցրի ես:

-Հենց ձեր շենքում,- ասաց նա:

Շունչս կտրվում էր: Մի կերպ շարունակելով խոսակցությունը՝ հարցրի.

-Ո՞ր հարկում է նա ապրում:

-Երրորդ:

-Իսկ ո՞ր սենյակում,- դողացող ձայնս մատնում էր ինձ:

-312...

Կարծես սառը ջուրը գլխիս լցրին: Ես 301-ում էի: Թե ինչի մասին խոսեցինք հետո, չեմ հիշում: Միայն հիշում եմ՝ ինչպես նրան ճանապարհելուց հետո ծնկի իջա՝ չէի կարողանում շարժվել: Կարծում էի, թե լույսը էլ երբեք չի բացվի, արևը էլ դուրս չի գա: Բացի ատելությունից ոչինչ չէի զգում: Անցավ մեկ շաբաթ, ես դեռ չէի ազատվել տա-

## Գեղarm Առն 2016

ռապանքներից: Մի օր, ընթրիքից հետո, գնացի գետափ: Մի մարդ դանդաղ քայլերով հեռանում էր ափից: Հանկարծ նկատեցի, թե ինչպես մի աղջիկ նստած լալիս էր: Մոտեցա նրան, ուզում էի հանգստացնել: Չէի էլ կարող պատկերացնել, որ այդ աղջիկը հենց նա կլիներ: Նա ասաց, որ այն օրվա խոսակցությունից հետո որոշեց հետևել իմ խորհրդին և խոստովանություն անել 312-րդ սենյակում ապրող տղային: Խոստովանությունից հետո տղան ասել էր, որ իր սիրտն արդեն զբաղված է: Մեկ ժամից ավել մխիթարում էի նրան՝ փորձելով հանգստացնել:

Հանրակացարան վերադառնալու ճանապարհին երկար մտորում էի: Մերը երբեք չի հարցնում ինչու, կամ ինչպես: Կան մարդիկ, ովքեր կարող են լինել շատ լավ ընկերներ, սակայն երբեք չեն կարող ստանձնել ամուսնու կամ կնոջ պաշտոնը: Այս երկու պատմությունների շնորհիվ, որպես օրինակ ունենալով, կարելի է հավատալ ճակատագրին, որի օգնությամբ մարդիկ «պատահական» հանդիպում են միմյանց, սակայն այդ նույն ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹՅՈՒՆ ճակատագրի շնորհիվ միշտ չէ, որ ձեռք են բերում իրենց սրտի ուզածը: Միանգամից միտս եկավ Հունանի այն աղջիկը:

Ես վերջապես հասկացա, որ պետք է գնահատել այն, ինչ տրված է ի վերուստ և չփորձել հարկադրաբար կորզել ավելին: Անհրաժեշտ է փայփայել և գնահատել ունեցածը, առանց դժկամության:

Չինարենից թարգմանությունը՝  
Ելենա ԱԼԱՎԵՐԳՅԱՆԻ

## Խ Ճ Ա Ն Կ Ա Ր

### **Իսրայելի գրադարանը դատարանում հաղթելուց հետո խոստանում է հանրության համար հասանելի դարձնել Կաֆկայի արխիվները**



Իսրայելի ազգային գրադարանը խոստացել է լայն հանրության համար բացել իրեն նվիրված՝ գրող Ֆրանց Կաֆկայի ձեռագրերի հավաքածուն, որոնք այժմ պահվում են անձնական բնակարանում և բանկային սեյֆերում:

Երկրի գերագույն դատարանը վերջ է դրել 8 տարի տևող դատական գործին, որը կապված էր Կաֆկայի ընկեր Մաքս Բրոդի արխիվի պատկանելության հետ: Բացի գրադարանից, արխիվը ստանալուն հավակնում էին Բրոդի քարտուղարուհու դուստրերը:

Բրոդը մահացել է 1968-ին Թել Ավիվում: Գրադարանը կարողացել է ապացուցել, որ Բրոդը, ով վրկել է թղթերը նացիստներից և բերել իր հետ Իսրայել, կտակել է իրեն իր արխիվը: Բրոդի քարտուղարուհու դուստրերը վստահեցնում էին, որ Կաֆկայի ձեռագրերն իրենց մայրը ստացել է գործատուից որպես նվեր և պահանջել են իրենց հանձնել հավաքածուն: ՉԼՄ-ները հայտնել են, որ թղթերի մի մասը վաճառվել է արտասահման, այդ թվում՝ Կաֆկայի հայտնի վեպերից մեկի ձեռագիրը, որը 2 մլն դոլար է բերել:

Հեղինակի արխիվը ներառում է Կաֆկայի և Բրոդի ձեռագիր նամակագրությունը, օրագրեր, նկարներ:

### **Նորվեգիան երկրի բոլոր գրքերը կտեղադրի համացանցում**



Նորվեգիայի ազգային գրադարանը հայտնել է, որ աշխատանքներ է տանում էլեկտրոնային արխիվի ստեղծման ուղղությամբ, որում ընդգրկված կլինեն արխիվի բոլոր գրքերը, հայտնում է forbes.ru-ն՝ վկայակոչելով գրադարանի կայքը:

Էլեկտրոնային ձևաչափով նախատեսվում է ներկայացնել ինչպես ժամանակակից ստեղծագործությունները, այնպես էլ պահպանված միջնադարյան աշխատանքները: Գրադարանի գնահատականով՝ ամբողջ արխիվի թվայնացման համար կպահանջվի 20-30 տարի: Աշխատանքը տարվում է 2006-ից: Բացի արխիվի թվայնացումից, գրադարանն աշխատում է նաև որոնողական ծրագրի ստեղծման ուղղությամբ, որը կարող է վերլուծել տեքստերը և կօգնի օգտատերերին գրքերում գտնել անհրաժեշտ հատվածները:

Նորվեգական գրադարանը թույլ կտա օգտատերերին ստանալ առցանց գրքերի անվճար հասանելիություն: Խոսքը նաև այն գրքերի մասին է, որոնք պաշտպանված են հեղինակային իրավունքով:

## Գրիգոր ՆԵՐՇԵՏԹՅԱՆ

## ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ



### Ամենամեծ երազը

Տղան երազ տեսավ, որտեղ ինքը Լուվրի թանգարանում էր և դիտում էր աշխարհի լավագույն նկարիչների կտավները, բայց հանկարծակի նա արթնացավ և երազը ընդհատվեց: Առավոտյան ժամը յոթն էր, բայց նա տխուր էր, որ այդ երազը ընդհատվել է. քնաթաթախ նայեց պատուհանից դուրս և մի հիասքանչ գույնզգույն թռչուն տեսավ, ժպտաց և հասկացավ, որ ամենամեծ երազը հենց կյանքն է:

### Թութակի բացակայությունը

Տանը երգում էր թութակը, նրան ամեն օր կերակրում էին, բոլոր հյուրերը այցելելով այդ տուն՝ տեսնում էին նրան, բայց մի օր նա անսպասելիորեն սատկեց: Դրանից երկու ամիս անց բազմաթիվ հյուրեր էին եկել տուն, բայց տանտիրոջ ընկերներից մեկն անսպասելի տխրեց. նա նայեց տանտիրոջ հայացքին: Մյուսները շատ լավ տրամադրություն ունեին, ինչ-որ ծիծաղելի պատմություն էին հիշել և շարունակում էին ծիծաղել: Միայն տանտերը և այդ ընկերն էին տխուր, նրանցից ոչ ոք բառ չարտասանեց, բայց երկուսն էլ նույն բանը զգացին, նրանք երկուսն էլ մտածեցին թութակի մասին:

### Ընկերների գրույցը

Երկու ընկեր գրուցում էին: Նրանցից մեկն ասաց.

–Մարդ պետք է բոլորի հետ լավ հարաբերություններ ունենա, դա շատ կարևոր է: Այդպես մարդը հնարավորինս կխուսափի անախորժություններից, գործերն էլ ավելի լավ կընթանան:

Մյուսն ասաց.

-Ոչ, դու սխալվում ես: Նա, ով ցանկանում է լավ հարաբերություններ ունենալ բուրդի հետ, կորցնում է իր սկզբունքները, դավաճանում իր «ես»-ին և վերածվում է լայրծուն էակի:

### **Գրականագետի ելույթը**

Նա իր մեծ ավանդը ունեցավ հայ գրականության զարգացման գործում: Իր պոեզիայով փառաբանեց հայ ժողովրդի անցած ուղին, իր ստեղծագործությունների միջոցով արտահայտեց իր մեծ սերն առ հայրենիքը և ժողովուրդը: Նրա ողջ պոեզիան նվիրված է մեր սուրբ լեռ Մասիսին, կորսված հայրենիքին, բայց նրա գրականության մեջ միշտ առկա է հույսը դեպի լուսավոր ապագան: Նա իր ամբողջ կյանքը նվիրեց գրականությանը, անգամ սովետական բռնատիրական կարգերի օրոք միշտ հավատարիմ մնաց իր կոչմանը: Իր գրականությամբ նա ևս մեկ անգամ ամրագրեց, որ հայը միշտ կմնա կանգուն: Միայն հայ մայրը կարող էր ծնել այդպիսի գրողի, ով իր գրչով կպայքարի մեծ տերությունների ստոր և երկերեսանի քաղաքականության դեմ, իր ձայնը կբարձրացնի ընդդեմ անարդարության, իր ստեղծագործության միջոցով կարտացոլի իր ժամանակը և կանդրադառնա ժողովրդին հուզող խնդիրներին:

### **Երագ, որը փոխեց մարդու կյանքը**

Մի մարդ, ով շարքային աշխատող էր, ավարտել էր աշխատանքը և ոտքով քայլելով վերադառնում էր տուն: Դանապարհին նա նկատեց, որ երեք տղա նեղացնում են ինչ-որ աղջկա, որոշեց միջամտել և պաշտպանել այդ աղջկան, բայց կռվի ընթացքում այդ տղաներից մեկը բռունցքով բավականին ուժեղ հարվածեց նրա դեմքին, և նա ուշաթափվեց, այդ երեք տղաները նույնիսկ չփորձեցին նրան ուշքի բերել, վախեցան եւ փախան: Մարդկանց ամբոխ էր հավաքվել, ովքեր փորձում էին նրան ուշքի բերել: Այդ ընթացքում նա ինչ-որ երագ էր տեսնում, թե ինչպես դիմոզավոր հարձակվել է քաղաքի վրա, սպանում է բնակիչներին, մարդիկ խուճապահար փախչում են, այստեղ նրան ուշքի են բերում, իսկ նա զայրացած բղավում է նրանց վրա.

-Ինչու՞ խանգարեցիք, երագս կիսատ մնաց:

Մարդիկ զարմացած թողնում եւ հեռանում են:

Վերադառնալով տուն՝ այս մարդը ֆանտաստիկ ֆիլմի սցենար է գրում եւ հենց ինքն էլ այդ ֆիլմը նկարում եւ անվանում է «Դիմոզավորի հարձակումը քաղաքի վրա»: Այդ ֆիլմը բազմամիլիոնանոց շահույթներ է ունենում ամբողջ աշխարհում, նա հովիվուդյան հայտնի ընկերություններից առաջարկ է ստանում՝ նկարել «Դիմոզավորի հարձակումը քաղաքի վրա-2» Ֆիլմը: Պատանիները սկսում են բակերում խոսել այդ ֆիլմի մասին, դպրոցներում երեխաները միմյանց ասում են.

-Լսե՞լ ես «Դիմոզավորի հարձակումը քաղաքի վրա» ֆիլմի երկրորդն ա դուրս եկել, թոյն ֆիլմ ա:

Մարդիկ անհամբեր սպասում են, թե երբ է հայտնվելու «Դիմոզավորի հարձակումը քաղաքի վրա-3» ֆիլմը, որը ըստ ռեժիսորի եւ կինոընկերության խոստովանության՝ գերազանցելու է անգամ առաջին երկու ֆիլմերը: Այսպիսով այս երագը փոխեց այդ

## Գեղarm Աշուն 2016

մարդու կյանքը, նա այժմ ապրում է ոչ թե Երեւանի Մասսիվում, այլ ԱՄՆ-ում, որտեղ ունի մի քանի առանձնատուն, մի քանի անգամ ամուսնացել- բաժանվել է, ինչպես գրեթե բոլոր ամերիկյան հայտնի դերասաններն ու ռեժիսորները և ամեն տարի հարյուրից ավելի հարցազրույց է տալիս, և ինչպես գրեթե բոլոր միլիոնատեր հոլիվուդյան աստղերը, միշտ նշում է, որ կյանքում փողը և հաջողությունը կարևոր չեն, կարևորը սերն է և ազնվությունը:

### Չարենց

Նա կախարդական, մոգական, առեղծվածային, հակասական եւ անբացատրելի հանճար է: Նրա գրականությունը կարծես ողջ մարդկության խտացումը լինի, նա իր մեջ կրում է ինչ-որ բան Նարեկացուց, Քուչակից, Մեծարենցից, Սիամանթոյից, բայց այդքանով հանդերձ, նա ունի իր անկրկնելի ոճը, նրա գրականությունը շատ բազմազան է, նրա որոշ տողեր կարող են ապշեցնել, շշմեցնել, անգամ սարսափեցնել: Նրա գրականությունը անդադար փոխակերպման տոն է:

### Նա

Նա երբեք լիովին ուրախ չէր լինում, նա միշտ իր մեջ կրում էր մի ներքին խորը տխրություն, բայց միայն քչերն էին ունակ դա զգալու: Շատերն էին կարծում, որ ճանաչում են նրան, բայց միայն քչերը գիտեին: Անգամ հարց էր՝ արդյո՞ք նա ինքն իրեն ճանաչում էր:

### Չարմանալու կարողությունը

Կյանքում ամենակարևոր բաներից մեկը զարմանալու ունակությունն է: Տարբեր մարդկանց տարբեր բաներ են զարմացնում, օրինակ՝ ինձ կարող են զարմացնել հետաքրքիր լեռները, կենդանիները, հայկական հնագույն եկեղեցիները, մանրանկարչությունը, քանդակները, խաչքարերը, Շոպենի, Մոցարտի, Կոմիտասի անգուզական երաժշտությունը, Չարենցի, Բակունցի, Տերյանի, Թումանյանի, Մեծարենցի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի գրականությունը, Սթիվեն Սփիլբերգի, Պիտեր Ջեքսոնի, Մարտին Սկորսեզեի, Ֆ.Կոպոլայի, Կոեն եղբայրների, Պոնգ Չուն Գոյի, Լյուք Բեսոնի, Ջոն Վուի ֆիլմերը, Թորոս Ռոսլինի, Արշիլ Գորկու, Կանդիկսկու, Խուան Սիրոյի, Ռենե Մարգրիտի նկարչությունը, Մեսսիի, Ռոմնիի, Ռոնալդուի, Ռոնալդինյոյի, Մայքլ Ջորդանի, Կոբե Բրայանտի խաղը և այլ՝ իրարից շատ տարբեր բաներ, բայց ոչ ամեն ինչ: Երբ մարդը լիովին կորցնում է զարմանալու կարողությունը, կյանքը ճանճրալի է թվում: Բայց ամեն ինչից զարմանալը հավասարազոր է ոչնչից զարմանալուն:

### Լռությունը խոսք է

Երկու մայրեր, որոնց տղաները մահացել էին երկրաշարժի ժամանակ, գրեթե ամեն օր հանդիպում էին միմյանց: Նրանք նայում էին իրար, բայց ոչ մի խոսք չէին փոխանակում. այդ լռությունն ավելին արժեք, քան ցանկացած խոսք:



### **Ուրիշ տեղերում ապրելու մասին**

Մի աղջիկ հորս հարցրել էր.

-Որտե՞ր կցանկանայիք ապրել:

Նա պատասխանել էր.

-Միևնույն է, ես ուրիշ տեղ եմ ապրում:

Այդ աղջիկը զարմացած ասել էր, որ մինչ այդ նույն հարցը շատերին է տվել և ստացել է տարբեր պատասխաններ՝ Փարիզում, Մադրիդում, Բարսելոնայում, Երևանում եւ այլն, բայց այդպիսի հետաքրքիր պատասխան դեռ երբեք ոչ ոք նրան չի տվել:

Եվ իրոք, ֆիզիկապես դու կարող ես գտնվել այս կամ այն տեղում, բայց շատ ավելի կարևոր է, թե դու ներքուստ որտեղ ես ապրում: Շատ մարդիկ կան, ովքեր եղել են աշխարհի հայտնի քաղաքներում, բայց նրանցից շատերը նույնքան երջանիկ չեն, որքան իմ հայրը, որովհետև նա կարող է լինել այնպիսի տեղերում, որոնց մասին նրանք չեն էլ կարող անգամ երազել, որովհետև դա կապված չէ ֆինանսների կամ ֆիզիկապես ինչ-որ տեղում լինելու հետ, դրա համար յուրօրինակ տաղանդ, զգացողություն, միտք և երևակայություն է հարկավոր, որը քչերին է տրված:

### **Ուսուցչի գրույցը աշակերտի հետ**

-Ի՞նչն է կյանքում ճիշտ, ի՞նչը՝ սխալ,- հարցնում է աշակերտը:

-Մխալ եւ ճիշտ գոյություն չունեն,- պատասխանում է ուսուցիչը:

-Ո՞րն է բարին, ո՞րը՝ չարը:

-Չար եւ բարի գոյություն չունեն:

-Ուսուցիչ, ինչո՞ւ եք այդպես կարծում:

-Քանի որ, եթե ես քեզ այժմ ասեմ, որ բարին սա է, իսկ չարը՝ այս, կամ սխալը սա է, իսկ ճիշտը՝ այս, դա քեզ ոչինչ չի տա, դու ինքդ պետք է քո կյանքի ընթացքում այդ ամենը հասկանաս, բացի այդ, քո և իմ չարի ու բարու, ճշտի և սխալի պատկերացումները կարող են միմյանց հետ չհամընկնել, իսկ շատ բաների ճիշտ կամ սխալ, չար և բարի լինելը հայտնի է դառնում մի քանի դար հետո, երբեմն էլ մնում է անհայտ:

### **Երջանկությունը**

Երկու հարազատ եղբայր այգում գործ էին անում, արդեն երեկո էր և մթնել էր: Նրանցից մեկն ասաց, որ լավ կլինի մի քիչ հանգստանան: Նրանք նստեցին խոտերին եւ սկսեցին իրար հետ զրուցել: Եղբայրներից մեկն ասաց, թե որն է երջանկությունը: Մյուսը պատասխանեց, որ երջանկությունը այն է, որ այժմ մենք՝ երկու եղբայր, նստել ենք խոտերի վրա, զրուցում ենք և նայում ենք աստղաշատ երկնքին:



Վեսիլին ՊԱՎԼՈՎ

/Սերբիա/

## ՅՈՂԱՆԻ ՍԵՐԲԱԿԱՆ ՍԻՐՏԸ

Հրաժեշտի վեհ խոսքերն իմ սրտի,  
ձոնում եմ բոլոր ժամանակներին,  
գուցե այն մեկի ցավը փարատի,  
իսկ մեկ ուրիշին՝ վրդովի խորին:

Ես գերմանացի Յոհանն եմ բարի,  
Հանսն ու Գրետեն՝ ծնողներս թանկ,  
մեր տան համբավն է հայտնի բոլորին,  
ունեցել եմ միշտ բարեկեցիկ կյանք:

Ժառանգեցի ես կալվածքներ այնքան,  
հոտեր բազմաթիվ և անտառներ կույս,  
ուրախ էի ես՝ մինչև պահը այն,  
երբ հայտնեցին, որ հիվանդ եմ անհույս:

Բժիշկները թե՛ չունես երկար կյանք,  
գուցե մեկ տարի կամ ավել մի քիչ,  
փլվեց աշխարհս, օ՛, ի՛նչ տառապանք,  
մեկ օրում անհետ չքվեց ամեն ինչ:

Բժշկությունը երկրիս բարձրակարգ  
հայտնեց, որ երկար էլ չեմ դիմանա,  
ըստ բժիշկների՝ միջոցը միակ  
սիրտս այլ սրտով փոխելն է հիմա:

Օ՛, ճակատագիր, ի՛նչ հրաշք էր մեծ,  
կյանքիս լավագույն պահն էր անկասկած:  
«Քեզ համար արդեն մի սիրտ գտնվեց»,  
անհույս հիվանդիս բժիշկը ասաց:

## Գեղarm Առն 2016

Ի՛նչ գին են ուզում, կարևոր չէ դա,  
և մի՞թե սիրտը ունի ինչ-որ գին,  
չհարցրի էլ, թե ո՞վ պիտի տա,  
միայն շխզվի թելը իմ կյանքի:

Վիրահատեցին կարգով ամենայն,  
նոր սրտով ցավս թողի անցյալին,  
երբ հոգսը անցավ, հասկացա այնժամ՝  
որքան է կյանքը թանկ ու ցանկալի:

\* \* \*

Շատ չանցած, սակայն, գիշերով մթին,  
ինչ-որ դեմքեր են տեսնում երազում,  
արթնացնում է ինձ արձագանքն անդին.  
ուղղափառ վանքի զանգերն են լսվում:

Հստակ տեսնում են ես օտար ավեր,  
թավուտ անտառներ, դաշտեր բարեբեր,  
կանաչ թփուտներ, վտակներ կայտառ,  
հասուն խաղողի փարթսամ այգիներ:

Բակեր են տեսնում ցանկապատներում,  
գոմեր ու ամբար, տուն տանող ճամփա,  
և թութուն քաշող պապիկ մի ծերուկ,  
նայում է շանը, սուլում է ապա:

Յամաք մի պառավ հավերին կանչում  
կուտ է շաղ տալիս ամանի միջից,  
գնում է շտապ և գոմն է բացում,  
որ հորթը հորից ջուր խմի մի քիչ:

Եղնիկի պես նուրբ կին մի աննման,  
անցնում է բակով, որ ճաշ պատրաստի,  
վարսերն են ծփում, ետևից նրա՝  
կապուտաչ, բոբիկ մանչուկ մի պստիկ:

Օ՛, այդ պատկերն ինձ չի տալիս հանգիստ.  
երջանիկ պահ է երազներիս մեջ,  
թեպետ չեմ քնել, բայց այդ վայրն է ճիշտ,  
որ իմ մեջ սեր է ծնել մի անշեջ:

## Գեղarm Առն 2016

\* \* \*

Հետո երազներ եկան ահավոր,  
անհոգ ապրելը դարձավ անհնար,  
իմ դեմ հառնում են պատկերներ նոր-նոր,  
քայլում են կապված, մոլոր, վշտահար:

Ապա լցրեցին մեզ մի մեքենա.  
անվերջանալի ճամփա տանջալից,  
հիշոց, սպառնալիք ու ծեծ անխնա,  
ուրիշ ի՞նչ պիտի սպասես գազանից:

Բուրելյ քաղաքում կար մի Դեղին տուն.  
(այդպես էր կոչվում այդ տեղը դաժան),  
այդ արբանական մասնավոր բանտում  
մեզ գնդամեցին մինչ սկիզբը ձմռան:

Վերջին պատկերից ցնցվում են այնպես.  
բժիշկ է՝ դեմքին կանաչ դիմակ կար,  
տեսնում են դեմքը, մինչ պառկած են ես,  
քնծիծաղում է տականքն անպատկառ:

Եվ լույսի շողեր՝ արևից հրկեզ,  
ուղեղիս միջով նետի պես անցան,  
ողջ-ողջ մորթում են ինձ խեղճ հորթի պես,  
տաք շատրվանն է հորդում իմ արյան:

Վերջին պատկերում տեսնում են ձեռքեր,  
որ պարզել են վեր արբանները բիրտ,  
և այդ ձեռքերում բաբախում է դեռ  
կտտանքով հանված իմ սիրտը, խեղճ սիրտ:

Սարսափի ճիչը երկինքը պատռեց  
և սթափեցրեց ինձ մղձավանջից,  
կարծում էի, թե երազն է իմ դեռ,  
և արշալույսը կլինի փրկիչ:

Մի հեռու երկիր ճանապարհ ընկա,  
որ գտնեմ պատճառն օրերիս անքուն,  
հարցը պարզելու համար վերջնական,  
թե դեպի ո՞ւր է իմ սիրտը ձգում:

## Գեղarm Առն 2016

Կոսովոն է կեսն իմ նպատակի,  
դառը մտքերս այնտեղ են տանում,  
ճամփորդի նման ճանապարհվեցի,  
ամեն քարը ինձ ծանոթ է թվում:

Իմ երազների գմբեթը գտա,  
իսկ նրա առջև (զարմա՛նք)՝ պահակներ,  
զինվորների հետ զրույցի մտա.  
Եկեղեցուն են պահակներ կարգել:

Այդ ի՞նչ մարդիկ են, և ինչո՞ւ պիտի  
քանդեին հրաշքն այդ միջնադարյան,  
և մի՞թե զուրկ են հոգուց ու սրտից,  
չէ՞ որ պատասխան մի օր պիտի տան:

Իմ դեմ ավերված մի գյուղ է ահա՝  
փշալարերով փակված շուրջքուրդ.  
ասես մի ողջ դար անիծված է նա,  
և մարդիկ դեմքեր ունեն սգավոր:

–Նայի՛ր, Եվրոպա- գոռացի անաստ,-  
տե՛ս այս պատկերը՝ իրական ու ճիշտ,  
մինչև ե՞րբ պիտի գոհվի ազգը այս,  
իսկ ուրիշները նիզակ ճոճեն միշտ:

Փշալարերից և այդ վշտից վեր  
ինձ փնտրող հայացք զգացի մուժում,  
տեսա ծանոթ դեմք. նույն այն մանչուկն էր,  
որ երազներիս կարոտն է հուշում:

Մոտենում է նա, լարերի միջից  
վզիս է փարվում ձեռքերով փոքրիկ,  
Աստծո այդ որդին՝ ծաղիկ մի անբիծ,  
կարծես կանչում է նա՝ «Հայրի՛կ, հայրի՛կ»:

Սիրտս խենթի պես թռչել է ուզում,  
քանդվել են ասես կարերը նրա,  
ինչո՞ւ են սիրտս բառերն այդ հուզում,  
գուցե ինչ-որ բան ճանաչե՞լ է նա:

Անկախ ինձանից, իմ կամքից անկախ  
այդ մանչուկին են ձեռքերս փարվում,

## Գեղarm Աշուն 2016

օ՛, իմ տառապանք, փոքրիկն այդ անվախ  
լույսի պես է այդ մթի մեջ վառվում:

Երագիս կինը վագում է ահա,  
անցնում է նույն այն տարածքով բակի.  
«Միլա՛ն, իմ որդի՛, քո հայրը չէ նա.  
հայրդ ճեղքում է հեռուն երկնքի:

Նա պաշտպանում է Կոսովոն, որդի՛ս,  
սուրբ Ղազարի հետ, երկնքում անտես,  
լսում եմ նրան քամու հետ, հոգի՛ս,  
նրան եմ հիշում, երբ նայում եմ քեզ»:

Կանգնել եմք, մեզ լոկ լարն է բաժանում,  
բայց մեզ կապել է նույն սերը անանց,  
մի պահ կանգնել է աշխարհը անհուն՝  
երկնային կայծից ասես քարացած:

Ետդարձի ճամփին կանգ առա մի քիչ.  
հիացած, հպարտ, երջանկությամբ լի,  
քանի Յովանն է պաշտպանում երկնից՝  
Կոսովոն սերբից ոչ ոք չի խլի:

Ես երեկվանից՝ Յանկո Պետրովիչ,  
ծնունդով գերման, իսկ հավատով՝ սերբ,  
գրեցի ես սա՝ տենչանքի մի ճիչ.  
գազանի մասին իմանալ է պետք:

Թող գլուխները կախեն ամոթից.  
լավ գիտեն՝ ոճիրն ով է կատարել,  
փառք տան սերբերի անմեղ զոհերին,  
որոնց անունը կապրի միշտ անմեռ:

Սերբերենից թարգմանեց  
ԱՆՈՒՇ ԲԱԼԱՅԱՆԸ

*Խ Ճ Ա Ն Կ Ա Ր*

**Եղիր ինքդ քեզ նման.  
մնացած բոլոր դերերն  
արդեն բաշխված են.  
Օսկար Ուայլդի 15 մտքերը**



*Կան դասականներ, որոնց երբեք չենք  
դադարի մեջքերեղ, և նրանցից մեկը  
Օսկար Ուայլդն է:*

1. Միրավեպին ոչինչ այնքան չի խանգարում, որքան կնոջ հումորի զգացումը և դրա բացակայությունը տղամարդու մոտ:
2. Մենք տանել չենք կարողանում այն մարդկանց, ովքեր ունեն նույն թերությունները, ինչ մենք:
3. Ես բնավ չեմ ցանականում իմանալ, թե ինչ են խոսում իմ մեջքի ետևում, առանց այդ էլ ես բավականին մեծ կարծիքի եմ իմ մասին:
4. Կյանքում գոյություն ունի երկու մեծ ողբերգություն. երբ չես ստանում այն, ինչ ուզում ես և երբ ստանում ես:
5. Եղիր ինքդ քեզ նման. մնացած բոլոր դերերն արդեն բաշխված են:
6. Ես այնքան զրպարտություններ եմ լսել Ձեր հասցեին, որ կասկած չունեմ՝ Դուք հիանալի անձնավորություն եք:
7. Երբեք մի՛ սիրեք մեկին, ով Ձեզ վերաբերվում է որպես սովորական մարդու:
8. Ներեցե՛ք Ձեր թշնամիներին. դա նրանց հունից հանելու լավագույն եղանակն է:
9. Միրահարվածությունն սկսվում է նրանից, որ մարդ խաբում է ինքն իրեն, իսկ արդյունքում նաև՝ մեկ ուրիշին:
10. Երբ մարդ երջանիկ է, նա միշտ լավն է, սակայն միշտ չէ, որ լավ մարդիկ են երջանիկ լինում:
11. Միրո մասին գրելը շահեկան է, այն մեծ պահանջարկ ունի:
12. Վտանգավոր է հանդիպել մի կնոջ, որ ամբողջությամբ քեզ հասկանում է, դա սովորաբար ավարտվում է ամուսնությամբ:
13. Ինչպես ասել է սրամիտ մի ֆրանսիացի՝ կանայք միշտ ոգեշնչում են մեզ մեծ սիրանքներ գործելու և մշտապես խանգարում են մեզ իրագործել դրանք:
14. Եսասիրությունն այն չէ, որ մարդ ապրում է այնպես, ինչպես ուզում է, այլ այն, որ ստիպում է ուրիշներին ապրել իր սկզբունքներով:
15. Դու չես կարող փոխել քամու ուղղությունը, բայց միշտ կարող ես բարձրացնել առագաստները՝ նպատակիդ հասնելու համար:

**Հասմիկ ՎԱՆՅԱՆ  
ՍԱՐՈՅԱՆՆ  
ԸՆԴԴԵՄ  
ՀԵՄԻՆԳՈՒԵՅԻ**

**Նույն դարաշրջանի  
երկու գրողի դիմակայությունը**

1934-ին լույս տեսավ Ռիլյան Սարոյանի առաջին գիրքը, որը հարուցեց Էռնեստ Հեմինգուեյի վրդովմունքը՝ նրան վիրավորել էին Սարոյանի արտահայտություններն իր հասցեին «70 հազար ասորիներ» պատմվածքում: 1935թ. Esquire-ի հունվարյան համարում Հեմինգուեյը կոպիտ հողված հրապարակեց Սարոյանի մասին:

Սակայն Հեմինգուեյի քննադատությունը, որն այն ժամանակ արդեն հայտնի գրող էր, պահաջված ու հեղինակավոր, չխոչընդոտեց Սարոյանի մուտքը գրական ասպարեզ, ավելի շուտ՝ կանխագուշակեց. «Անցած շաբաթ ամերիկյան ասպարեզում նոր գրող հայտնվեց: Առաջին հայացքից, ափի մեջ տեղավորվող, ոչ ավելին, այդ հետաքրքիր երևույթը եղանակի փոփոխություն է խոստանում,



իսկ գուցե նաև ցիկլոն», - ասվում էր Time հանդեսի հողվածում, որն անսխալ կերպով կարողացավ զատել Սարոյանի յուրահատուկ ոճը:

«Նոր հնչեղ անուն կարճ պատմվածքի ժանրում՝ ՍԱՐՈՅԱՆ: Արդեն տարիներ շարունակ կարճ պատմվածքի հեղինակներից ոչ մեկն այդպիսի համընդհանուր հետաքրքրություն և աշխուժություն



## Գեղarm Առն 2016

չէր առաջացրել: Նա ամենաքննարկվող և պահանջված երիտասարդ գրողն է Ամերիկայում: Նրա տաղանդը նույնքան վառ է, որքան Ֆոլկներինը, Դրայզերինը և Լարդներինը»,- այսպես էր ազդարարել հրատարակչություններից մեկը Սարոյանի առաջին գրքի հրատարակումը:

Նշվում էր, որ Սարոյանի ստեղծագործություններում բացակայում է սյուժեն և դա, հավանաբար, կգարնացնի ընթերցողին, որը դաստիարակված է կարճ պատմվածքի հին ավանդույթների վրա:

Սարոյանի ազդեցությունը XX դարի 30-40-ականների ԱՄՆ գրական կյանքի վրա այնքան հզոր էր, որ նա դարձավ որոշակի հայացքների, արժեքների, փիլիսոփայության մարմնացումը: Մեծ դեպրեսիայի տարիներին նրա անսպառ կենսախնդրությունն օգնում էր հուսահատ մարդկանց: Հենրի Միլերը հրավիրում էր նրան աշխատելու համատեղ նախագծերում, իսկ Չարլզ Բուկովսկին և Ջեյ Բերուակը ներշնչվում էին նրա ներքին ազատությամբ: Սարոյանը դարձավ երևույթ: Գեղարվեստական ստեղծագործություններից շատերում հեղինակները հիշատակում են նրան որպես ժամանակի խորհրդանիշ: Սակայն Հեմինգուեյը «սփիններով» դիմավորեց նոր հեղինակին:

**«Հեմինգուեյի հերոսները, կյանքի հետ մարտնչելով, անպարտ են մնում, իսկ Սարոյանի հերոսները՝ հաղթանակած են դուրս գալիս»:**

Էռնեստ Հեմինգուեյը ներխուժեց համաշխարհային գրականություն որպես նրանցից մեկը, ով գրում էր այսպես կոչված «կորսված սերնդի»՝ Առաջին աշխարհամարտի բովով անցած երիտասարդների մասին, որոնք կորցրել են սովորական խաղաղ կյանքով ապրելու ունակությունը:

«Չնայած, որ այդ թեմայով անհամար

ստեղծագործություններ են գրվել, Հեմինգուեյի ստեղծագործությունները տարբերվում էին ընդհանուր ֆունին, որի պատճառներից մեկը առանձնահատուկ խառնվածքն է, որով հեղինակն օժտում է իր հերոսներին»,- քաղաքագետ Վլադիմիր Մալեննիկովը:

Ըստ նրա, Հեմինգուեյի գրքի հերոսը միշտ այն մարդն է, որն աներեր ընդունում է ճակատագրի հարվածները և առաջ է գնում՝ չնայած ակնհայտ անհույս իրավիճակին:

«Ինչ-որ բանի համառորեն դիմակայելու թեման, մի բանի, որը հարյուրապատիկ անգամ գերազանցում է իրեն ու անխուսափելի է, կարմիր թելով անցնում է Հեմինգուեյի բոլոր ստեղծագործություններով և հստակ նկատվում է նաև նրա մյուս գործերում, որոնք հեռու են միջպատերազմյան սերնդի խնդիրներից ու թեմաներից»,- ասել է Մալեննիկովը՝ հավելելով, որ հենց այստեղ են գուգահեռներ նկատվում Սարոյանի հետ՝ չէ որ նրա գրքերն էլ են այն մասին, թե ինչպես է հասարակ մարդը տանում անտանելի վիշտը, դիմակայում պատերազմին, հիասթափությամբ:

«Միայն թե Սարոյանն ավելի լայն էր նայում այդ ամենին: Նրա գրքերի հերոսներին՝ բաց, անկեղծ մարդկանց, ոչ միայն հաջողվում է սովորել ապրել այս անհեթեթ ու դաժան աշխարհում, նրանց հաջողվում է հաղթել՝ պահպանելով հավատը մարդկանց հանդեպ, արդարության հանդեպ, հավատն առ այն, որ «և աշխարհը ավելի լավը կլինի, և մարդիկ»: Այլ կերպ ասած, նրանց հաջողվում է խուսափել հոգու կարծրացումից: Հեմինգուեյի հերոսները, կյանքի հետ մարտնչելով, անպարտ են մնում, իսկ Սարոյանի հերոսները հաղթանակած են դուրս գալիս»:

**Ծանոթացել են Լոնդոնում,  
կովել՝ Փարիզում**

1944-ին Հեմինգուեյը հաստատվեց Լոնդոնի «Գորչեսթր» հյուրանոցում և նրա համարն անմիջապես ձգողական կենտրոն դարձավ, ուր գալիս էին գրողներ, ռազմական թղթակիցներ, ֆոտոլրագրողներ: Այստեղ էին Հեմինգուեյի բազում հին ծանոթներն ու ընկերները: Օրերից մի օր «Գորչեսթրի» հյուրերի թվում հայտնվեց նաև Ուիլյամ Սարոյանը, որը եկել էր Էռնեստի կրտսեր եղբոր՝ Լեսթերի հետ, որի հետ նա ծառայում էր պատերազմական կինովավերագրության մեջ: Սակայն ոչ լոնդոնյան հանդիպումները, ոչ՝ փարիզյան, չընկերացրեցին նրանց: Մի անգամ նրանք նույնիսկ կովել են փարիզյան սրճարաններից մեկում, որտեղ հիմա ցուցանակ է կախված. «Այստեղ կովել են Հեմինգուեյն ու Սարոյանը»: Սարոյանի և Հեմինգուեյի հարաբերությունները չբարելավվեցին ոչ 10, ոչ 20 տարի անց: Նրանք չէին համակրում միմյանց: Նրանք հակառակորդներ մնացին մինչև վերջ, սակայն յուրաքանչյուրն ընդունում էր հակառակորդի հանճար լինելը: Սարոյանն ասում էր. «Հեմինգուեյն ամենամեծ անգլալեզու գրողն է: Նա այնպես է գրել, կարծես դա Հին կտակարանն է: Մարդը մտավ քաղաք և դուրս եկավ քաղաքից: Շատերն են փորձել այդքան պարզ գրել, բայց ոչ ոք չի կարողացել»:

Հետաքրքրական է, որ երկուսի ստեղծագործություններում էլ հանդիպում են նմանատիպ մտքեր: Օրինակ, և Սարոյանը, և Հեմինգուեյը գրել են մարդու ոգու հզորության մասին: Հեմինգուեյը «Ծերունին և ծովը» վիպակում գրել է. «Մարդը

պարտություն կրելու համար չէ ստեղծված... Մարդուն կարելի է ոչնչացնել, սակայն նրան չի կարելի հաղթել»: Սարոյանը «Մարդկային կատակերգության» մեջ պատմում է, որ եթե ինչ-որ վատ բան է պատահում, դա երբեք վերջը չէ:

**Կյանքը բացառություններ  
չի ճանաչում**

«Նա չէր կարողանում հասկանալ և չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ ծերացել է: Կյանքը պետք է ընդունել, և կյանքում պետք է զգալ ամեն ինչ՝ այդ թվում ծերությունը: Ինձ թվում է՝ մարդիկ մեռնում են, որովհետև ցանկանում են մեռնել: Չպետք է դրան համաձայնվել: Ես, օրինակ, վաղուց կարող էի մեռած լինել, բայց ահա՝ ապրում եմ», - գրել է Սարոյանը Հեմինգուեյի մասին: Ինքն այդպես էլ չհամաձայնվեց մեռնել: Նրա վերջին խոսքերն են եղել. «Բոլորին է վիճակված մահանալ, բայց ես միշտ կարծել եմ, որ ինձ համար բացառություն կանեն: Եվ ի՞նչ»:

1960թ. ծանր հիվանդ Հեմինգուեյը վերադարձավ ԱՄՆ՝ հաստատվելով Այդա-հոյում: Նա այլևս չէր կարողանում աշխատել, և դա խորը դեպրեսիայի պատճառ դարձավ: 1961-ին Հեմինգուեյը ինքնասպան եղավ՝ կրակելով հրացանից:

Ուիլյամ Սարոյանը վախճանվել է 1981-ի մայիսին, Ֆրեզնոյում: Մեկ տարի անց նրա աճյունով սափորը հուղարկվել էր Երևանում՝ Կոմիտասի անվան պանթեոնում: Այդպես էր գրված գրողի կտակում:

Panorama.am

«Հողածինն է մտքին դնում,  
Հողածինն է ընդդիմանում,  
Բայց Երկինքն է տնօրինում»:

**Սյուն ՇԻ-Ի**  
/Չինաստան/

# ԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՁԸ

/հատված համանուն վեպից/



Մեր իմացած բոլոր լեզուներում ոչ մի ածական չի կարող ճշգրիտ նկարագրել տղամարդու երջանկությունը, ով պատրաստվում է առաջին անգամ հայր դառնալ հիսուն տարեկան հասակում: Երբ Լի Մինը մտքում անդրադարձավ իր անսպասելի օրհնությանը, նա ուղղակի կորցրեց գլուխը և որոշեց ճոխ մի խնջույք մատուցել իր բոլոր համագյուղացիներին: Տնտեսական խիստ որոշակի սկզբունքներ ունեցող մի մարդու համար պետք է որ այլ պատճառներ էլ լինեին այս շռայլության համար, բացի պարզապես երջանիկ և շնորհակալ լինելուց: Իրականում ինչ-որ բան կար, որ Լի Մինը ուզում էր ավարտին հասցնել: Վերջին հիշարժան առիթը, երբ գյուղում բոլորը հյուրասիրվել էին գինով ու մտով, Լի Մինը հարսանիքի ժամանակ էր եղել: Դա ավելի քան քսան տարի առաջ էր: Տարեց գյուղացիներն առանձնապես շատ լավ էին հիշում, քանի որ երբ մի քանի տարի անց ամուսնացավ Լի Կանը, միայն ընտանիքների գլխավորներն ու արտոնյալներն էին հրավիրվել հյուրընկալության, ինչ վերաբերում է ոչ արտոնյալներին, վերջիններս խիստ դժգոհ էին: Նրանք ասում էին, որ խնջույքը, ինչպես տունը, այլևս այն չէ, ինչ առաջ էր: Լի Մինը դարա համար ավիստալու հիմնավոր պատճառ ուներ: Նրա հարսանիքի խնջույքը կազմակերպվել էր իր հոր կողմից, ով շատ ժլատ էր համարվում, երբ խոսքը վերաբերում էր սեփական հարմարավետությանն ու ծախսերին, բայց չափազանց առատաձեռն էր այլոց հանդեպ: Դրա համար էլ բոլորն օգտվեցին խնջույքից և մեծ բավականություն ստացան: Բայց երբ Լի Կանն էր պատրաստվում ամուսնանալ, նրանց հայրն արդեն մահվան մահճում էր, և,

## Գեղarm Առն 2016

բնականաբար, Լի Սինը, լինելով ավագ որդին, ամեն ինչ անում էր որպես ընտանիքի գլխավոր: Կրտսեր եղբոր հարսանիքի խնջույքը կազմակերպելիս նա կյանքում մեկ անգամ մեղադրվեց շռայլ լինելու համար: Այդպիսի գյուղական ճաշկերույթի ժամանակ գլխավոր ուտեստը միշտ շոգեխաշած խոզի միսն ու շաղգամն են: Թեև դա կոչվում է «խոզի շոգեխաշած միս», բայց առանձին հարմարեցվող ուտեստ է, որ կարող է հեշտությամբ պատրաստվել ավելի շատ կամ ավելի քիչ չափով շաղգամ խառնելով՝ կախված տանտիրոջ անագնվությունից կամ առատաձեռնությունից: Իր հարսանիքի խնջույքի ժամանակ Լի Կանն ուրախ խնդալով նկատեց, որ ավագ եղբայրը շռայլ է ու անխնա վատնող՝ համեմատած իր հոր հետ, որի ժամանակ միսը բավականին էժան ձևով էր պատրաստվում՝ մի քիչ շաղգամ ավելացնելով, մինչդեռ հիմա, երբ Լի Սինն էր տանտերը, նա փաստորեն այնքան անխոհեմ էր, որ հյուրերին շաղգամից ուտեստ առաջարկելիս ամեն ինչ արեց, որպեսզի դրան մի քանի մեծ կտոր խոզի միս ավելացվի:

Ծերունու հուղարկավորությանը ներկա էին ոչ ավելի, քան հարյուր գյուղացիներ, և տասնութ քառակուսի սեղանները բավականին լեփլեցուն էին ու ճռնչում էին ուտեստների ծանրությունից: Ի զարմանս բոլորի՝ հիմնական ճաշատեսակը ոչ թե ավանդական շոգեխաշած խոզի միսն էր, այլ միանգամայն գայթակղիչ մի ուտեստ, որ կոչվում էր թռչնամիս հնդկեղեգի բողբոջով: Դա, իհարկե, ճոխ էր հնչում, բայց ակներևաբար ճաշատեսակը պատրաստվել էր ավելի շատ այդ մասին խոսելու և քննարկելու, քան ուտելու համար: Հավը, լավագույնս իրազեկված շրջանակների համաձայն, հինգ արժանիք ունի: Բայց մատուցվող թռչունը, թվում է, առնվազն մեկ առավելություն էլ ունի: Թռչուններն ունենին իսկապես պատկառելի տարիքի հասնելու այդ բացառիկ արժանիքը, ինչը պատիվ է բերում մարդ արարածին, բայց ընդհանրապես ցանկալի չէ թռչունների ցեղի փետրավորների համար:

Ներկաների մեջ դագաղը տանողները, ովքեր տեղական սովորույթի համաձայն իրենց ծառայությունը մատուցել էին ոչ այլ բանի, քան հացկերույթի համար, թվում էր՝ մյուսներից ավելի վրդովված էին: Նրանք այս ու այն կողմ հրամաններ էի արձակում, որ զննեին թռչնի թևերի ծայրերի քանակը և խոր հիացմունքով բացահայտում, որ գիտակ խոհարարը հաջողությամբ սպասարկել է բոլոր տասնութ սեղանները միակ հավով, որն իհարկե զգուշությամբ կտրտվել, բաշխվել ու որպես խավարտ մատուցվել է բավականաչափ քանակությամբ հնդկեղեգի բողբոջներով: Նրանք հայտարարեցին, որ թռչունն այսպիսով ձեռք է բերել ևս մեկ առաքինություն, այն է՝ գրանցել նոր սխրագործություն՝ դեպի մյուս աշխարհի վերջին թռիչքից առաջ սպասարկելով տասնութ սեղան: Ինչ վերաբերում է հնդկեղեգի բողբոջներին, դրանք նույնպես համահունչ էին գլխավոր նրբահամ խորտիկին: Եթե դրանք չմասնակցեին պատրաստման պրոցեսին, գուցե ներկայանային շատ ավելի օգտակար ձևով՝ կահույքի նոր նմուշի տեսքով:

Քանի որ գյուղացիներն այնքան ժլատ էին եղել, որ ոչ մի գոհունակություն չէին հայտնել իրենց երկու շքեղ հացկերույթների առիթով, Լի Սինը որոշել էր, որ նրանց այլևս չի հյուրասիրի, ինչ էլ որ լինի: Բայց այժմ, երբ իրեն երանելի երջանկության մեջ էր զգում ընտանիքի ընդլայնման հեռանկարից, մի կողմ նետեց իր սկզբունքները և խոստացավ խնջույքի հրավիրել ամբողջ գյուղին, երբ երեխան ծնվի:

Բնականաբար, ապագա մայրը ոչ պակաս, այլ շատ ավելի երջանիկ էր, քան հայրը: Բացի այդ, նա իրեն այնպես էր զգում, ասես ծանր մի քար էր ընկել սրտից: Նա մտածում էր, որ դա նշանակում է վերջ տալ զզվելի դեղորայքին ու անվերջ աղոթքնե-

## Գեղarm Աշուն 2016

րին: Բայց ամենավատ բժիշկներն անգամ չէին դադարում հաճախել մեկը մյուսի ետևից, և նա ստիպված էր որոշակի տեսակի դեղորայք ընդունել գրեթե ամեն օր: Այդ ամենն, ասում էին, ոչ միայն կկայունացնեին հղիությունը, այլ նաև կապահովեին, որ ապագա երեխան տղա լինե, ոչ թե աղջիկ: Նրա համար անհնար էր ձևացնել, թե ընդունում է այդ նյութերը, ապա դեն նետել, քանի որ երբ դեղորայքի համար վճարվում էր,- իսկ այսպես կոչված բժիշկները միշտ կանխիկ փող էին ուզում, երբ տրամադրում էին իրենց նշանակած դեղանյութը,- Լի Մինը մեկ վայրկյան իսկ նրան մենակ չէր թողնում, մինչև որ նա կուլ չէր տալիս այդ դեղն իր աչքի առջև: Այս ամենը և դեպի տաճարներ կատարած նրա անվերջ ուխտագնացությունները վերջապես դադարեցին, երբ նա իսկապես իրեն վատ զգաց և, բարեբախտաբար մի խելամիտ բժիշկ խորհուրդ տվեց նրան: Բժիշկն ասաց, որ քանի դեռ նա վերջ չի տվել դեղորայքի փոխարեն մատուցվող այդ աղբն ընդունելուն և չի դադարեցրել ծանր ու լարված ճամփորդությամբ ամբողջ երկրով մեկ դեսուդեն նետվելը,- քանի որ երկուսն էլ ճակատագրական են հղի կնոջ համար և հատկապես՝ նրա տարիքի ու քաշի կնոջ,- այդպիսի հիմարություններն անկասկած կհանգեցնեն վիժումի:

Այդ խոսքերն անմիջական ազդեցություն գործեցին: Բայց խեղճ կնոջ ծանր օրերը դեռ չէին ավարտվել: Այդ օրվանից նրան չէին թողնում ուտել կամ խմել ուրիշ ոչինչ, քան հատուկ միայն այն բաները, որոնք ցուցակով նշել էր բժիշկներից մեկը, և արգելված էր անգամ ամենաթեթև շարժումը: Ծորտուհիներին կարգադրված էր հանել և հագցնել նրա շորերը:

Մտնում էր բախտորոշ օրը: Լի Մինը նախապես մի մանկաբարձուհի էր վարձել, որն ապրում էր Մեյ ընտանիքի գետանցման գյուղում: Այս մանկաբարձուհուն, որ ապրում էր երկու մղոն հեռու, նա նախընտրել էր իր գյուղի մանկաբարձուհուց, որովհետև, ինչպես ասում էր, սա ավելի հուսալի էր: Բայց մեկ այլ պատճառ էլ կար: Երեք տարի առաջ, երբ Լի Կանի կինը երեխա էր ունենում, նրանք ստիպված էին գնալ կողքի գյուղը այդ կնոջը բերելու, որովհետև տեղի մանկաբարձուհին լուրջ հիվանդ էր: Դա մանկաբարձուհու առաջին մասնագիտական այցն էր Լի ընտանիքի գյուղ, և նրա գործած առաջին տպավորությունը շատ լավն էր, երբ շնորհավորեց Լի Կանին ազնվազարմ որդի ունենալու երջանիկ հեռանկարի առթիվ: Իսկապես, մի քանի րոպե անց ապացուցվեց, որ նա ճիշտ էր: Հետո նա ասաց, որ ինքը կախարդական հմայիլներ ունի, որոնք երաշխիք են տալիս, որ իրեն դիմողներն աղջկա փոխարեն տղա ունենան: Ոչ ոք չէր հավատում նրան, և ամենից քիչ հավատում էր Լի Կանը՝ երեխայի հայրը: Բայց Լի Մինը բավականին տպավորված էր մանկաբարձուհու հմտությամբ՝ նախապես անառարկելի ճշմարտություն համարելով, որ եղբայրը հաստատ աղջիկ պիտի ունենար:

Չինական ընտանիքներում ընդունված ավանդույթ է՝ հրավիրել փորձառու և հաջողակ մի մոր, նախընտրելի է՝ մոտ ազգականի, որպեսզի մնա իր ծնվելիք առաջնեկ երեխային սպասող կնոջ հետ: Լի Մինի կնոջ դեպքում մեկ ուրիշին փնտրելու կարիք չկար: Լի Կանի կինը, որ գործնականում մույն տանն էր ապրում, իդեալական ընկեր և խորհրդատու կլիներ: Բայց Լի Մինը չէր ուզում նրան անհանգստացնել: Հաջորդ ընտրությունն, իհարկե, զոքանչն էր, տիկին Վուն , որը, ապրելով քաղաքում, նրանցից քսան լի էր հեռու: Նա մույնպես բարձր համարում ուներ՝ այդ դերում հանդես գալու համար, որովհետև մայր էր մի դստեր, ով Լի Մինի կինն էր, և մի որդու, որը շատ ավելի երիտասարդ էր՝ ընդամենը երեսուներեք տարեկան: Իհարկե, Լի Մինը գիտակցում

## Գեղarm Աշուն 2016

Էր զոքանչի թերությունները: Մի մայր, որը երեխայի ձայն չէր լսել ավելի քան երեսուն տարի, որքան էլ հաջողակ ու բախտավոր լինեք, դժվար թե կարողանար համեմատվել ընդամենը երեք տարի առաջ որդի ունեցած մոր հետ: Բացի այդ, հազվադեպ է, որ զոքանչն ընդունելի անձնավորություն լինի փեսայի տանը, և նրա մնալու համար նախապատրաստություն տեսնելն ավելորդ անհանգստություն էր առաջացնելու,- ու ամենից առաջ լրացուցիչ ծախս էր լինելու,- այն դեպքում, երբ Լի Կանի կինը կարող էր գալ և տեգրակնոջը տեսնել ցանկացած ժամի՝ իր տան դռնից անցնելով նրա տուն: Լի Մինը լիովին գիտակցում էր սա և առանձնակի մի սեր չէր տաժում զոքանչի հանդեպ: Բայց այդուհանդերձ, խնամքով հաշվարկելով լրացուցիչ բյուջեն, ինչը գրեթե խենթացնում էր նրան, խոնարհաբար որոշեց, որ զոքանչին է նախընտրում:

Տիկին Վուին ներկայացնել որպես զոքանչ՝ նշանակում է անարդար լինել նրա հանդեպ: Նա, իսկապես, մի շատ հմայիչ՝ փոքրամարմին տիկին էր՝ իշխող բնավորությամբ: Նա լավագույն կնոջ և օրինակելի մոր տիպար էր, քանի որ խորապես արհամարհում էր ամուսնուն, երբ վերջինս ողջ էր, սաստիկ կարոտում էր նրան, երբ արդեն մեռած էր, և խենթի պես սիրում էր իր երեխաներին: Նրա ամուսինը շատ մեղմ բնավորություն ուներ, դրա համար էլ նա ասում էր, որ ամուսինը ողնաշար չունի: Քանի որ երեխաներն էլ բնավորությամբ հորն էին նման, նա համարում էր, որ անօգնական էին, և գրեթե սպանում էր նրանց մայրական իր սիրով ու հոգատարությամբ: Փեսայի համար նա միշտ հատուկ տեղ ուներ իր սրտում, բայց շուտով գիտակցեց, որ չի կարող ջերմացնել Լի Մինին, եթե անգամ իր սրտի մեջ տեղ տա նրան:

Տիկին Վուն պատրաստակամորեն ընդունեց գյուղում դստեր մոտ մեկ ամսի չափ մնալու հրավերը, թեև ասում էր, որ թեկուզ կարճ ժամանակով դժկամությամբ է հեռանում որդուց և երիտասարդ հարսից : Եվ ահա, Կուանգ Սյու կայսեր իշխանության 6-րդ տարվա (1880) երրորդ լուսնի 12-րդ օրվա վաղ կեսօրին տիկին Վուն, երկար մի երթի առջևից գնացող մեծ ծածկապատգարակով, որը տանում էին չորս ծառա, ժամանեց Լի ընտանիքի գյուղ:

Քաղաքից զոքանչի այցելությունը գյուղի տուն, թեկուզև հեռավորությունն ընդամենը մի քանի մղոն լինի, ընտանիքի պատմության կարևոր մաս է կազմում: Հենց որ տիկին Վուի պատգարակը մոտեցավ տանը, Լի Մինը նշան արեց ծերունի Վանին, որն անմիջապես փոքրիկ ճաթռուկների մի շարան նետեց՝ որպես ջերմ ու սրտագին ողջույնի նշան: Ակնհայտորեն՝ Լի Մինը լավ գործարք պետք է կատարած լինեք այդ ճաթռուկները գնելու համար: Երբ ծերունի Վանը դրանք նետեց գետնին, խլացուցիչ ու բարձրաձայն ճաթյունի փոխարեն, որ պետք է հնչեր, միայն փոքրիկ մի շրմփոց լսվեց, հենց որ դրանց ամբողջ փունջը դիպավ մայթին: Մի պահ անհարմար դադարից հետո, որի ընթացքում բոլորին թվաց, թե աշխարհն անշարժացել է, Լի Մինը հրամայեց ծերունի Վանը կրկին այրել ճաթռուկները: Ծերունի Վանը անվճռական առաջ եկավ և վախվիսելով վեր բարձրացրեց դրանք: Մեկ անգամ էլ նա այրեց դրանք, և այս անգամ մի քանի թույլ ճաթյուն լսվեց: Չայնը բավականին խուլ էր:

Երբ Լի Մինը տեսավ, որ տիկին Վուն իր հետ բերել է Կապույտ Մարգարիտին՝ իր անձնական սպասուհուն և Չունգ Ֆուին՝ տղամարդ ծառային, նա սկսեց գիտակցել, որ իր նախկին բյուջեն բավականին սխալ էր, և հիմա նա ստիպված էր մինչ այդ իր սպասածից ավելին ձեռնարկել: Նա իր բարի գալուստը քրթմնջաց տիկին Վուին, և այն հնչեց էլ ավելի խուլ, քան թույլ ձայն հանող ճաթռուկները: Բայց նրա կինն անչափ երջանիկ էր մորը տեսնելով: Եվ մինչ կանայք իրենց թանկ ներքին զգացմունք-

## Գեղarm Առն 2016

ներն էին իրար հետ փոխանակում տան ներսի կողմում, նա բակում կանգնած ուսումնասիրում էր այն ամենն, ինչ զոքանչն էր իր հետ բերել: Ի մեծ բավականություն իրեն՝ Լի Մինը տեսավ, որ, բացի իր անձնական հարմարավետության համար բերված բազմաթիվ պարագաներից, տիկին Վուն իր հետ բերել էր շատ հագուստ և այլ բաներ երեխայի համար: Երբ նա ջանադրաբար նախապես գնահատում էր այդ իրերի ամենագամը հնարավոր արժեքը, նկատեց, որ դրանցից շատերը, ինչպես, օրինակ, վերարկուները, գլխարկներն ու կոշիկները, ակնհայտորեն տղայի համար էին նախատեսված: Նա շատ երախտապարտ զգաց իրեն զոքանչի հանդեպ, որն այնքան խելամիտ էր, և անմիջապես կարգադրեց Կրկնակի Օրհնությանն ու Մեծ Երջանկությանը գնալ խոհանոց և մի քիչ վառելափայտ ջարդել: Քանի որ ծերունի Չանգը միշտ զբաղված էր այգում, թեյ պատրաստելը և մատուցելը աղախինների պարտականությունն էր: Լի Մինի տնտեսող քաղաքականությունն այնպիսին էր, որ թեյ չէին պատրաստում նախքան հյուրերի ժամանելը, կրակ չէին վառում նախքան թեյ կպահանջվեր, և վառելափայտ չին ջարդում, քանի դեռ ջարդած վառելափայտի վերջին պաշարը չէր սպառվել: Այս քաղաքականությունը կարող էր որոշ ուշացման պատճառ դառնալ, բայց որոշակի երաշխիք էր ընդդեմ ավելորդ ծախսերի:

Տան դասավորությունն արագ զննելուց հետո տիկին Վուն դատերն ասաց, որ ուզում է որոշ փոփոխություններ կատարել: Լի Մինն իր իրերը պետք է տաներ միջնասրահի մյուս կողմում գտնվող հյուրասենյակ և այնտեղ տեղավորվեր: Նրա կինը պետք է տեղափոխվեր ներքին սենյակ, որը մինչ այդ զբաղեցնում էին աղախինները: Տիկին Վուն պետք է ընկերակցեր իր դատերը այդ սենյակում: Լի Մինն և իր կնոջ սկզբնական ննջասենյակն այժմ պետք է զբաղեցներ Կապույտ Մարգարիտը՝ տիկին Վուի անձնական սպասուհին, այնպես որ, եթե տիկին Վուն գիշերն ինչ-որ բան ուզեր, Կապույտ Մարգարիտը նրան մոտ լիներ: Կրկնակի Օրհնությունն ու Մեծ Երջանկությունը իրենց անկողինները պետք է հարմարեցնեին փոքրիկ ետնասենյակում: Չանգ Ֆուն պետք է ծերունի Վանի սենյակում լիներ, իսկ ծերունի Վանը մեկ այլ տեղ պետք է գտներ իր սենյակի համար: Չնայած Լի Մինի ուժեղ բողոքներին՝ տիկին Վուն ի վերջո հասավ իր ուզածին: Տունն իսկույն հայտնվեց քառասյին վիճակում, և ամեն սենյակ փաստորեն տակնուվրա եղավ: Նրանք զբաղված էին ամբողջ կեսօրին: Երբ երեկոյան ճաշկերույթն ավարտվեց, բոլորը զնացին իրենց համապատասխան սենյակները և ամեն բան վերադասավորեցին ըստ իրենց ճաշակի ու ցանկության: Երբ արդեն ավարտել էին, գրեթե կեսգիշեր էր:

Այս տիկին Վուն հանձնարարություններ տվեց Կապույտ Մարգարտին, որ ընթրիք պատրաստի: Լսելով «ընթրիք» բառը՝ Լի Մինը հոգոց հանեց: Սա քաղաքում ընդունված շռայլություն էր, որ նա մոռացել էր հաշվի առնել, երբ իր բյուջեն էր կազմում: Որպես բողոքի նշան՝ նա բազմանշանակ նկատեց, որ գյուղի մարդիկ, ինչպես, օրինակ, ինքը, իրենց վատ կզգան գիշերվա առաջին ժամից հետո և անմիջապես բարի գիշեր մաղթեց զոքանչին:

Շատ տարիներ էին անցել, ինչ Լի Մինի կինն այդպիսի հաճույք էր ստացել լավ ընթրիքից, և միգուցե մի փոքր ավելի կերավ, քան պետք էր: Կամ թերևս չափից ավելի շատ էր դեսուդեն շարժվել և սաստիկ հուզված էր մոր ժամանումի պատճառով, այնպես որ երկար ժամանակ անքուն պառկած էր իր նոր պատրաստված անկողնում: Երբ վերջապես քնեց, մղձավանջ տեսավ: Շուտով իր ներսում սուր ցավ զգաց: Լուսաբացին բոլոր նշանները ցույց էին տալիս մեկ բան. պետք էր մարդ ուղարկել մանկա-

## Գեղarm Աշուն 2016

բարձուհու ետևից: Մինչ ծերունի Վանին հրամայեցին գնալ Մեյ ընտանիքի գետանցման գյուղ, Լի Մինի կինը ճշում էր ողջ տնով մեկ: Նա մարմնեղ կին էր և հետևաբար կարող էր մեծ աղմուկ հանել:

Լի Կանին, որը միշտ սիրում էր առավոտյան անխռով հանգստի պահը վայելել իր անկողնում, Լի Մինի կնոջ բարձր ու սուր ճիչերը մի փոքր մտահոգիչ թվացին: Նա իր կնոջն ասաց, որ գնա տեսնի, թե ինչով կարող է օգնել: Բայց տիկին Վուն ասաց, որ շատ լավ տիրապետում է իրավիճակին և հնարավոր ամեն բան արված է: Իսկապես, ժամեր առաջ նա պատվերների երկար մի ցուցակ էր տվել սպասուհիներին՝ ի շահ մոր և երեխայի: Լի Կանի կինը տեսավ, որ իրեն սիրով չեն ընդունում, և ստիպված էր վիատված հեռանալ: Շուտով ամբողջ տունը լցվեց ինչ-որ այրվող բանի զգվելի հոտով, և այդ հոտը տարածվեց բոլոր անկյուններում: Լի Կանը վեր կացավ և դուրս եկավ իր սենյակից, որպեսզի իմանա, թե որտեղից է գալիս այդ տհաճ հոտը: Ի գարմանս իրեն նա տեսավ, որ տան այն բաժինը, որ իր ավագ եղբորինն էր, լցված է զգվելի ծխով: Վախենալով, որ ինչ-որ բան այրվում է, նա շտապեց հարցնել Լի Մինին, թե ինչ է պատահել:

«Ոչինչ էլ չի պատահել», - հանգիստ պատասխանեց Լի Մինը: Բայց այդ ամենը ճիշտ չէր, քանի որ ակներևաբար նա ինքն էլ չէր կարողանում տանել դա և կանգնած էր բակում՝ խուսափելով ծխի հոտից:

«Բայց ինչ-որ բան այրվում է, և ծուխը մեծ վնաս կտա իմ մեծ եղբոր կնոջը»:

«Ձոքանչս ասաց, որ աքաղաղի այրվող փետուրի հոտը կքշի չար ոգիներին: Քանի որ ամեն բոլոր սպասում ենք երեխայի աշխարհ գալուն, պետք է ապահով տեղում լինենք»:

«Ապահով տեղում,- Լի Կանը գրեթե կորցրեց համբերությունը:- Եվ ե՞րբ են չար ոգիներն այս տուն եկել: Ես չգիտեմ նրանց ժամանման մասին»:

«Իմ կրտսեր փոքր եղբոր կինն այս առավոտ չպետք է մտներ ծննդասենյակ,- կուպտորեն նրան առարկեց Լի Մինը:- Քանի որ նա տան մյուս մասից էր եկել, իր հետ կարող էր անցանկալի տարրեր բերել»:

«Ես ոչ մի առարկություն չունեմ այլ մարդկանց հիմար ու անհեթեթ սնոտիապաշտ հավատալիքների հանդեպ, քանի դեռ դրանք որևէ մեկին վնաս չեն տվել: Բայց այս ահավոր անդուր հոտը, որ կարծում ես, թե կքշի չար ոգիներին, կենդանի մարդկանց էլ կքշի այն աշխարհ: Մի՞թե չես մտածում խեղճ մոր մասին, որ երկունքի ցավերի մեջ է»:

«Հիմար բաներ մի՛ ասա, կրտսեր եղբայր: Թեև կարդացել ես բոլոր տեսակի աղբ գրքերը, և ձևացնում ես, թե բժշկությունից բան ես հասկանում, այս գործերի մասին ոչինչ չգիտես»:

«Մանկաբարձ կինն իր փորձառությանը պետք է որ ավելի լավ իմանա: Նա՞ ինչու չի վերջ տալիս այս անհեթեթությանը»:

«Մանկաբարձուհին դեռ չի եկել: Ես ծերունի Չանգին ուղարկել եմ, որ տեսնի, թե ինչ է պատահել ծերունի Վանին, որը ժամեր առաջ է գնացել»:

«Ավելի լավ կլիներ տեղի մանկաբարձուհուն բերեիր նախ, եթե այն մի կնոջ հետ ինչ որ բան է պատահել»:

«Տեղի մանկաբարձուհին բոլորովին անօգուտ է: Մենք սպասելու ենք Մեյ ընտանիքի գետանցման գյուղից եկող այն մյուսին»:

«Բայց մայրը չի՛ կարող սպասել, երեխան էլ չի կարող սպասել: Արագացրո՛ւ, ի



## Գեղarm Աշուն 2016

սե՛ր Աստծո, անմիջապես ուղարկիր տեղի մանկաբարձուհու ետևից»:

«Ինչու՞ ես այդքան մտահոգ և շատ ես ուզում, որ այդ տեղական կնոջը բերենք: Քեզ նրա համար ինչ-որ լիազորություն՞ն են խոստացել: Մի՞թե չես կարող քո գործով զբաղվել»:

Ոչինչ այնքան չէր կատաղեցնում Լի Կանին, որքան փողի հետ կապված ցանկացած մեղադրանք: Նա այնքան էր վիրավորված այդ ակնարկներից, որ զայրացած ասաց. «Շատ լավ, շատ լավ: Ես չեմ անհանգստանա ուրիշների գործերով, նույնիսկ եթե տեսնեմ, որ նրանք մեռնում են»:

Գյուղի մարդիկ ընդհանրապես շատ սնահավատ են, իսկ Լի Մինը ամենասնահավատներից մեկն էր: «Մահ» ակնարկող բառերը երբեք չպիտի հիշատակվեն որոշակի կարևոր օրերի կամ բարեպատեհ առիթներով: Լի Կանի խոսքերն ընդունվեցին որպես չարամիտ խոսքեր: Լի Մինը կատաղած էր:

«Դատարկ բաներ ես խոսում, դու, անպիտան շռայլող»:

Ավելի թունդ բառեր կհնչեին, եթե ճիշտ ժամանակին արտակարգ լավ լուրը չհնչեր: Կրկնակի Օրհնությունը դուրս նետվեց ներքին սրահից և հուզված գոչեց. «Շնորհավորում ենք, Տեր իմ: Մենք այժմ երիտասարդ տեր ունենք, երիտասարդ տեր»:

Լի Մինն անչափ երջանիկ էր: Թողնելով եղբորը՝ նա դուրս հանեց և վառեց ճայթռուկների մի մեծ փունջ - դա տասն անգամ ավելի երկար էր, քան այն փունջը, որով ողջունում էր իր գոքանչին - և այն տան առջևի դարպասներից դուրս նետեց փողոց: Երբ այն պայթեց խլացուցիչ պայթյունների շարքով, Լի Մինն զգաց, որ ինքն ավելի լավ գործարք է կատարել, քան կարծում էր, չնայած շատ ավելին էր վճարել դրա համար, քան սովորաբար վճարում էր: Փողը երբեք սխալ ճամփով չի գնում:

«Վերջ տվեք ճայթռուկներ պայթեցնելուն: Վերջ տվեք, - լավեց տիկին Վուի բարձր ու զայրացած ձայնը, և այդ բառերը Լի Մինի համար Մեծ Երջանկության հետ էին կապված: - Ո՞վ ասաց նրանց, որ առանց իմ կարգադրության ճայթռուկներ պայթեցնեն: Վերջ տվեք անմիջապես»:

Նորաթուխ հայրն ասես շանթահար էր եղել: Բնագրաբար հասկանալով, որ ինչ-որ բան այն չէ, նա դուրս նետվեց դարպասներից և ոտքերով սկսեց կոխկրտել ճայթռուկների փունջը: Ապա գետնից վերցրեց մնացած կեսը և ներս տարավ տուն: Միջնասրահ մտնելիս հասկացավ, որ իր անարժան եղբայրն այնտեղ կանգնած վիճում է գոքանչի հետ, որը դեռ ներսի սենյակում էր:

«Բացարձակապես անօգուտ բան է քո այդ անպետք դեղերից գոռով նրան խմեցնելը: Դու պետք է թափահարես նրան և անընդհատ ձեռքի ափով ապտակելով շրպացնես թիկունքին», - հուսահատ բղավում էր Լի Կանը:

«Ինչպե՞ս կարող ես այդ պատվիկ սիրելի արարածին ապտակներ հասցնել: Ուզում ես սպանե՞լ նրան», - կատաղած գոռաց տիկին Վուն:

«Եթե նա չի շնչում, դա նրան փրկելու միակ միջոցն է: Ես չեմ ուզում սպանել նրան, բայց շուտով մեռած երեխա կունենաք, եթե պնդես քո այդ բուժական անհեթեթությունը»:

«Ես գիտեմ ինչպես են երեխա մեծացում ու դաստիարակում, քանի որ մայր եմ: Եվ կարիք չունեմ անտաշ տղամարդկանց միջամտության», - ձայնը զլուխը զցած հայտարարեց տիկին Վուն:

«Բայց դաստիարակելու համար մեռած երեխա կունենա...»:

Լի Մինն այլևս չկարողացավ համբերել:

## Գեղarm Աշուն 2016

«Չայնդ կտրի՛ր: Չզվելի՛ անասուն: Գու պարզապես ուզում ես, որ երեխաս մեռնի: Գու՛րս այստեղից, քանի դեռ համբերությունս չեմ կորցրել»:

Բոլորն էլ կարող էին տեսնել, որ Լի Սինն արդեն կորցրել է համբերությունը: Լի Կանը հասկացավ, որ թեև նրանք, ովքեր խորհուրդ չեն ընդունում, տխմար են, բայց ավելի շատ տխմար են նրանք, ովքեր պնդում են իրենց խորհուրդը, երբ այն ոչ ոք չի ուզում ընդունել: Եվ նա հեռացավ դեպի տան իր բաժինը՝ առանց այլևս աղմկելու: Բայց վիճաբանությունը շարունակվեց նույնիսկ Լի Կանի հեռանալուց հետո: Տիկին Վուն ամեն ինչում ամեն մեկի մեղքն ու սխալն էր տեսնում: Երբ ոչ ոք չհամարձակվեց մոտ գալ նրան, հիմա էլ համարեց, որ ոչ ոք չի ուզում օգնել: Նա անիծեց բոլորին և ամեն ինչ՝ տանտիրոջից մինչև բաժակ, գրպա կամ պարանի կտոր:

Նախորդ վեճից տարբերությունն այն էր միայն, որ այժմ նա վիճաբանում էր ինքն իրեն՝ առանց առարկողի: Երեխան անկասկած մեռած էր, բայց նա հույսը չէր կորցնում: Իր բոլոր դեղամիջոցները փորձելուց հետո նա ստիպված էր չինական օշինդր այրել և «աստվածային ասեղ» գործածել: Այդ միջոցների կիրառումը բավականին երկար տևեց, բայց, ինչպես և պետք էր սպասել, հրաշք տեղի չունեցավ: Միաժամանակ՝ տառապող մայրը շարունակում էր ճչալ ուժեղ ցավերից:

Վերջապես մանկաբարձուհին ժամանեց ծերունի Վանի, ծերունի Չանգի և Չունգ Ֆուի հետ, որին նույնպես ուղարկել էին այդ կնոջ ետևից::

Ալմերեսաբար, ոչ ոք նրան չէր հայտնել տխուր լուրը, քանի որ, իր հին սովորույթի համաձայն, նա մի քանի անգամ խոնարհվեց Լի Սինի առջև և շնորհավորեց նրան՝ աշխարհ եկող ազնվական պարոնի հայր լինելու հրաշալի առիթով: Լի Սինը զայրացած գոչեց. « Գու՛րս չպրտեք նրան: Գու՛րս չպրտեք նրան»:

«Չէ՛, չէ՛,- մանկաբարձուհուն օգնության շտապեց տիկին Վուն: - Տեսնենք, թե ինչ կարող է անել: Գուցե նա բուժելու ինչ-որ հատուկ բան ունի այս վիճակում գտնվող տղայի համար»:

«Ես ասու՛մ էի, որ տղա է լինելու, - հայտարարեց մանկաբարձուհին զարմանքով, ըմբռնունով և ուրախությամբ: Նա կարծում էր, թե Լի Սինը զայրացել է իր վրա պարզապես ուշանալու պատճառով:- Ես գիտեի, որ... »:


«Լռի՛ր, հիմա՛ր կին: Նախ ներս գնա և տես նրան», - հրամայեց տիկին Վուն:

Կինը ներս մտավ սենյակ, իսկ Լի Սինը ծառաներից պահանջեց, որ հայտնեն ճակատագրական ուշացման պատճառը: Նա տեղեկացավ, որ ծառաները չէին կարողացել գտնել այդ կնոջը, որովհետև վերջինս արդեն իր գյուղի մոտ գտնվող մեկ այլ տեղ էր գնացել նույն գործով: Ծառաներն ստիպված հարցուփորձ էին արել: Փաստացի հատ-հատ դիմել էին գյուղի գրեթե բոլոր ապագա մայրերին, ներառյալ նրանց, ովքեր ասել էին, թե իրենց մայրությունը դեռ հնարավոր բան է: Նրանց փնտրտուքը լրիվ ապարդյուն էր, քանի դեռ չէին հանդիպել մի տղայի, որն ասել էր, թե երբ ինքը վաղ առավոտյան գետի ափին խճաքարեր էր հավաքում, տեսել էր այդ կնոջը Երկնային կամրջի մոտ կապված ձկնորսական նավակի մեջ:

Անգլերենից թարգմանությունը՝  
Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

**Վահրամ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**Ինչու պետք է  
Բոբ Դիլանը  
Նորեյլյան մրցանակ  
ստանա, իսկ  
Մուրակամին՝ ոչ**



Հայ հանրությանը հազվադեպ է որևէ բան հուզում, բացի գազի ու հոսանքի գներից: Բայց գրականության Նորեյլյան մրցանակն էս տարի ալեկոծեց «ֆեյսբուքը»:

Շատերը վիրավորվել էին, որ Մուրակամին Նորեյլյան մրցանակ չի ստացել: Մյուս առաջատար հավակնորդների՝ քեմիացի գրող Նգուզի վա Տիոնգի ու սիրիացի բանաստեղծ, էսսեագիր Ադոնիսի համար ոչ ոք չէր նեղացել:

Իսկ ինձ զարմացրեց, որ հանձնաժողովը մի տարի էլ դիմադրեց զանգվածային մշակույթի ու ճարպիկ էպիգոնության վարպետ Հարուկի Մուրակամինի հաղթանակին:

Մուրակամին պատկանում է ճապոնական արձակի այսպես կոչված «եվրոպական» թևին, որից հայ ընթերցողին ծանոթ են Յասունարի Կավաբատան, Կորո Աբեն և Կենձաբուրո Օեն:

Կավաբատան Նորեյլյան մրցանակի դափնեկիր է: Նա ազատորեն օգտվել է XX դարի Արևմտյան գրականության զինանոցից, բայց, դրա շնորհիվ ճեղքելով ճապոնական մշակույթին բնորոշ ներփակությունը, հերմետիկությունը, մնացել սակավախոս, ասկետ ազգային չափաբերված կենցաղի պոեզիայի, մանրուքների դրամայի շրջանակներում: Ընթերցողի համար վայելք է այս միջավայրում հետևել խոր, «մեկ զգացմունքի մարդկանց» ապրումներին, հարաբերություններին:

Կորո Աբեն և Կենձաբուրո Օեն, որը նույնպես Նորեյլյան մրցանակի դափնեկիր է, անկեղծ «եվրոպական» նորարարներ են, որոնց «ճապոնականությունը» բարդացնում է ստեղծագործական խնդի-

## Գեղarm Աշուն 2016

րը՝ բախման մեջ դնելով արդիական ճգնաժամերն ու ավանդական, սոցիալապես անշարժ ինքնությունը:

Հիմա դառնանք Մուրակամիին: Նրա գլխավոր ժանրը միստիկական դետեկտիվն է, երբեմն՝ թրիլերը: Երկուսն էլ զուտ կոմերցիոն ժանրեր են, բնականաբար, առևտրային է նաև դրանց համաձուլվածքը: Ավելի մեծ դժբախտությունն այն է, որ Մուրակամին օգտվում է ոչ միայն Արևմտյան գրականության արդեն ծանոթ, փորձարկված, հաջողություն բերած ժանրերից, այլև արտահայտչամիջոցներից՝ հաճախ մեծ գրողների, բայց առանց որևէ բան ավելացնելու: Իսկ «ճապոնականությունը» նա օգտագործում է որպես էկզոտիկա:

Կարելի է հեռու չգնալ ու հիշել «Լարովի Թոշնի ժամանակագրությունը» վեպը (1994), որի վերնագիրն իհարկե ավելի լավն է, քան «Լսիր քամու երգը» տափակությունը (Հարուկիի առաջին վիպակը, որը գրելու և առհասարակ գրականությամբ զբաղվելու անհրաժեշտությունը նա հասկացել է բեյսբոլի մի խաղ նայելուց), բայց ակնհայտ նմանօրինակումն է Էնթոնի Բլըրջեսի «Լարովի նարինջը» վեպի (1962), որի հիման վրա 1971-ին Մթենլի Կուբրիկը նկարել է համանուն գլուխգործոցը:

Հնարավոր է Մուրակամիի շատ սիրահարներ ասեն՝ ինչ անենք, մեկ է, լավ է կարդացվում: Երևի: Ռաբիս երաժշտությունն էլ լավ է լսում մի ահագին ամբոխ:

Ծանոթ է, հեշտ է, ուղղված է այնպիսի զգացմունքներ հարուցելուն, որոնք բազմիցս ու զանգվածաբար նույն եղանակներով ի հայտ են բերվել ուրիշների կողմից:

Իսկ նոր գրականության, արվեստի ընկալումը աշխատանք է, համաստեղծագործություն հեղինակի հետ, որի արդյունքը կա՛ն ձախողման հիասթափությունն է, կա՛ն հաջողված գործի, հետագոտության... հետաքննության հաճույքը: Ճիշտ է, Հայաստանում, հետխորհրդային տարածքում կրթական համակարգը չի տալիս այն գիտելիքը, գործիքակազմը, որով ուսանողը կարողանա ազատվել դասական մշակույթի կռապաշտությունից և ինքնուրույն հարաբերվել ժամանակակցին: Այդ պատճառով Մուրակամին, Կոելյոն, Բեգբեդերը և մյուսները զբաղեցնում են նույնիսկ այլ հարցերում առաջադեմ երիտասարդության միտքն ու հոգին:

Ինչ վերաբերում է Բոբ Դիլանին, կարծում եմ, նա արժանի է այս մրցանակին, նախ երգի խոսքերի կարգավիճակը երաժշտության պարզունակ կցորդից պոեզիայի մակարդակի բարձրացնելու համար: Ապա նա վառ ներկայացուցիչն է բիթնիկների մշակույթի, որը ցնցեց սպառողական հասարակությունը, որտեղ պատերազմի օրերին իշխող է դառնում ռազմա-հայրենասիրական հիստերիան, իսկ խաղաղ ժամանակ գորշությունը՝ իր 50 երանգներով: